

**ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՎԱՀԵ ԳՈՒՐԳԵՆԻ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և
կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման համար**

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Սուրեն Այվազի Գևորգյան

ԵՐԵՎԱՆ-2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.	3
Գլուխ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՀ-ՈՒՄ.	10
1.1 Տնտեսական զարգացման էկոլոգաբնապահպանական առանձնահատկությունները	10
1.2 Բնապահպանական վերահսկողության գիտական բովանդակությունը և զարգացման ուղղվածությունը	27
1.3 Բնապահպանական վերահսկողության օրենսդրական կարգավորումն և մեթոդական ապահովումը.	40
Գլուխ 2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ.	51
2.1 Վերահսկողության համակարգի կառուցվածքն և գործառույթները.	51
2.2 Վերահսկողության մեխանիզմների և ստուգման ցուցանիշների կիրառման արդյունավետությունը.	64
2.3 Վերահսկողության համակարգի աուդիտորական բաղադրիչի դերը և նշանակությունը.....	83
ԳԼՈՒԽ 3. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ.....	101
3.1 Բնապահպանական վերահսկողության հիմնախնդիրները տնտեսական գործունեության էկոլոգացման ճանապարհին	101
3.2 Տեսչական ստուգումների ցուցանիշների նորացման և կիրառման հնարավորությունները	113
3.3 ԱԵԿԿԱ-ի ղեկավար սկզբունքների իրագործման հեռանկարները	125
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	132
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	141

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Հետազոտության թեմայի արդիականությունը: Համաշխարհային տնտեսության ներկայիս զարգացումը ընթանում է բարդ քաղաքական, էկոլոգիական և սոցիալական պայմաններում: Հաճախակի են հասարակական և պետական (այդ թվում նաև միջպետական) շահերի հակադրումները, հատկապես այն հարցերի շուրջ, որոնք վերաբերում են շրջակա միջավայրի կենսաապահովման որակի պահպանման, բնառեսուրսային ներուժի կայուն օգտագործման, հասարակական բարեկեցության ու առողջության որակի և էկոլոգիական անվտանգության ապահովման համալիր հիմնահարցերին:

Նման իրավիճակի ձևավորման առավել ցայտուն պատճառներից են բնապահպանության և բնօգտագործման ոլորտի քաղաքականության, կառավարման և հսկողության մեխանիզմների անկատարությունը, էկոլոգիական ծառայությունների շուկայի ձևավորման և նորացման դանդաղ տեմպերը, այլ նաև օրենսդրական և մեթոդական բացթողումները: Այս իրավիճակը բնորոշ է նորանկախ մի շարք պետություններին, այդ թվում նաև ՀՀ-ին, որտեղ վերջին 15-25 տարիներին իրականացված օրենսդրական բարեփոխումները ունեցան որոշակի դրական ազդեցություն շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման կառավարման ու հսկողության համակարգի վրա:

ՀՀ տնտեսական գործունեության գրեթե բոլոր տեսակներում պետական նախաձեռնությունները նպատակաուղղված են էկոլոգաբնապահպանական որոշումների ընդունման մեխանիզմների կատարելագործմանը: Սակայն, առ այսօր ՀՀ-ի էկոլոգիական ծառայությունների շուկայում չեն օգտագործվում կառավարման և հսկողության նոր մեխանիզմները, մասնավորապես՝ ժամանակակից էկոլոգիական աուդիտի մեթոդական հնարավորությունները տնտեսական գործունեության պետական բնապահպանական տեսչական փորձում:

Պետք է նշել, որ դեռևս գոյություն ունեն բազմաթիվ խնդիրներ սույն ոլորտում, ավելին՝ հանրապետությունում ընդունված չի համապատասխան օրենք: Այլ խոսքերով, էկոլոգիական աուդիտը ուրույն տեղ է զբաղեցնում բնապահպանության և բնօգտագործման վերահսկողության արդի միջազգային համակարգում ու կարող է

զգալիորեն բարձրացնել բնապահպանական պետական տեսչության գործունեության արդյունավետությունը: Ամենևին պատահական չէ նաև այն հանգամանքը, որ բնապահպանական վերահսկողության բնագավառում էկոլոգիական աուդիտի մեթոդաբանության կիրառման հեռանկարները դեռևս բացահայտման փուլում են:

Ներկայիս բնապահպանական վերահսկողության քաղաքական վեկտորները ՀՀ-ում ուղղված են բնօգտագործման թույլտվությունների և տեսչական գործունեության կատարելագործման ու արդյունավետության գնահատման նոր մեխանիզմների, ցուցանիշների և չափորոշիչների գիտական որոնմանը ու համակարգմանը IT-տեխնոլոգիաների միջոցով: Այնուամենայնիվ, բնապահպանական վերահսկողության համակարգի գործունեությունը ՀՀ-ում շարունակում է մնալ խիստ «ավանդական» բնույթի, իսկ տեսչական ստուգումների «բնապահպանական որակը» այնքան էլ տպավորիչ չէ, տեղեկատվությունը դրա մասին հաճախ անմատչելի է և հակասական: Դրանում նկատելի է ստուգման գործիքակազմի /ցուցանիշների սահմանափակությունը՝ ըստ գործունեության բնույթի և ցածր «տեղեկատվական կշռի»:

Համալիր իրավիճակային վերլուծություններից պարզվեց, որ բնապահպանական վերահսկողության համակարգը ՀՀ-ում գտնվում է կատարելագործման նոր փուլում: Առկա են որոշակի թերություններ և ոլորտում չլուծված հիմնահարցեր, որոնց ապացույցն է առկա բնապահպանական իրավախախտումների քանակական զգալի աճը: Բացի դա, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի (2005թ.) ցույց է տալիս, որ տեսչական ծառայության գործառույթները բավականին ընդարձակ են, իսկ արդյունավետությունը էապես կախված է տեսչական ստուգման գործընթացի նորմատիվա-մեթոդական և իրավական հենքի գիտական հիմնավորվածության աստիճանից: Սակավաթիվ են նաև ուսումնասիրությունները՝ նվիրված ՀՀ-ում տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման ու արդյունավետության գնահատման հիմնահարցերին:

Տեղին է նշել, որ դեռևս 1993թ. OECD-ի «Environmental indicators for environmental performance reviews» փաստաթղթում տեսչական ստուգման

ցուցանիշները և չափորոշիչները վերաբերում են ժամանակակից նոր ինդիկատորներին, որոնց կիրառման անհրաժեշտությունն արդեն իսկ հաստատված է բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման տեսանկյունից:

Գիտակցելով բնապահպանական վերահսկողության համակարգի գործունեության կատարելագործման կարևորությունը՝ INECE-էկոլոգիական համապատասխանության և իրավակիրառման միջազգային ցանցը OECD-ի և մի շարք այլ շահագրգիռ կողմերի հետ 2003թ.-ից սկսեց էկոլոգիական հսկողության համակարգի գնահատման նախագծի իրականացումը:

Դրա տրամաբանական շարունակությունն եղավ Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի (ԱԵԿԿԱ-ի) երկրների համար մշակված բնապահպանական ոլորտի պետական հսկողության մարմինների գործունեության բարեփոխման ղեկավար սկզբունքների ներդրումը՝ ակնկալելով բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման ռազմավարական գործողությունների իրականացումը:

Բարեփոխման այդ գործընթացներին մասնակցությունը առավել հուսադրող և պարտավորեցնող է ՀՀ-ի համար՝ հատկապես տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության միասնական ազգային համակարգի կատարելագործման տեսանկյունից: Դրանով է պայմանավորված նաև ատենախոսության թեմայի ընտրությունը և հետազոտության նպատակի և խնդիրների ձևակերպումն ու հիմնավորումը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ՀՀ-ում տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության միասնական ազգային համակարգի արդի վիճակը, օրենսդրական և իրավական կարգավորման ու մեթոդական ապահովման հիմնախնդիրները, ինչպես նաև՝ տեսչական ստուգման մեխանիզմների, գործիքակազմի և ցուցանիշների կիրառման արդյունավետությունը:

Նպատակային դրվածքներից է նաև բնապահպանական վերահսկողության համակարգի գործունեության կատարելագործման նոր գործիքների, միջոցների ու մեթոդների որոնումը և ներդրման անհրաժեշտության գիտական հիմնավորումը:

Նպատակին հասնելու համար առաջադրվել է լուծել ՀՀ-ում տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության միասնական ազգային համակարգի կատարելագործման հետևյալ **խնդիրները՝**

- ուսումնասիրել տնտեսական զարգացման էկոլոգաբնապահպանական առանձնահատկությունները ՀՀ-ում,
- վերլուծել և գնահատել բնապահպանական վերահսկողության ազգային համակարգի գիտական ուղղվածությունը, օրենսդրական կարգավորման և մեթոդական ապահովման հիմնախնդիրները,
- ներկայացնել տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության մեխանիզմների և ցուցանիշների փոխադարձ կապը,
- առաջարկել մեխանիզմներ՝ ուղղված բնապահպանական վերահսկողության ազգային համակարգում էկոաուդիտորական մեթոդական մոտեցումների ներդրման հարցում,
- որոշել տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման հեռանկարային ուղիների գիտական ուղղվածությունը,
- սահմանել տնտեսական գործունեության էկոլոգացման, տեսչական ստուգումների ինդիկատորների նորացման ռազմավարություն,
- ներդնել բնապահպանական վերահսկողության մարմինների բարեփոխման և ղեկավար սկզբունքների պետական նախաձեռնությունների գնահատման համակարգ ԱԵԿԿԱ-ի երկրներում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ բնապահպանական վերահսկողության համակարգն է, իսկ հետազոտության առարկան՝ ՀՀ-ի տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության միասնական ազգային համակարգի տեսչական ստուգումների մեխանիզմների, ինդիկատորների, մեթոդական մոտեցումների կիրառման արդյունավետությունը, համակարգի կատարելագործման հիմնախնդիրների վերհանումը, վերլուծությունն և գնահատումը, ինչպես նաև դրանց գիտական լուծումների որոնումն ու առաջարկումը:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:

Հետազոտությունների տեսական հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման, բնապահպանության և բնօգտագործման քաղաքականությունը, օրենսդրությունը, նորմատիվա-մեթոդական և իրավական փաստաթղթերը, ինչպես նաև տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության միջազգային առաջատար փորձը, հայրենական և արտասահմանյան տնտեսագետների և բնապահպանների գիտամեթոդական նորագույն ուսումնասիրությունները:

Ուսումնասիրությունների ընթացքում կիրառվել են համակարգային համեմատական վերլուծությունների, խմբավորումների և գրաֆիկական պատկերման մեթոդները, էկոլոգատնտեսական գնահատման և տեղեկատվության հավաքագրման ու մշակման այլ մեթոդներ:

Աշխատանքի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ Բնապահպանության նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության և գերատեսչական ծառայությունների ու Ազգային վիճակագրական ծառայության տեղեկագրերը, էկոլոգիական զեկույցներն ու տարեկան հաշվետվությունները և այլ գիտական պարբերականների գիտահետազոտական նյութերը:

Հետազոտության գիտական արդյունքներն ու նորույթը: Ատենախոսության հիմնական գիտական նորույթը ՀՀ-ի տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի արդի վիճակի, մեխանիզմների, ինդիկատորների, մեթոդական մոտեցումների կիրառման արդյունավետության գնահատման ու կատարելագործման հիմնախնդիրների վերհանումն է, որի շրջանակներում՝

1. մշակվել է բնապահպանական վերահսկողության բիմոդալ հարկադրական և էկոաուդիտորական խորհրդատվական կառուցակարգ, որի արդյունքում հիմնավորվել են տեսչական ստուգման գործիքակազմի ընտրությունն՝ ուղղված այդ գործընթացի արդյունավետության և տեսուչի պատասխանատվության բարձրացմանը:
2. մշակվել է տասներկու ինդիկատորներից բաղկացած տեսչական

գործունեության նոր մատրից, որը կողմնորոշված է տնտեսական գործունեության հնարավոր վտանգավոր ազդեցության կանխմանը, հասարակական առողջությանը պատճառված վնասների հատուցմանը, ռիսկային իրավիճակների ձևավորման հավանականության նվազեցմանը,

3. մշակվել և ներդրմանն է առաջարկվել սպառման և արտադրական թափոնների առաջացման, օգտագործման և վնասազերծման գործընթացի բնապահպանական վերահսկողության մեթոդական մոտեցման նոր տարբերակ՝ հիմնված տեսչական ստուգումների և էկոաուդիտորական հետազոտության թեստային գնահատման վրա,

4. վերհանվել և համակարգվել են բնապահպանական վերահսկողության արդյունավետության բարձրացման առանցքային հիմնախնդիրները և մշակվել են համակարգի կատարելագործման չորս հիմնարար ուղղություն, որոնց իրագործումը էապես կբարելավի տնտեսական գործունեության տեսչական ստուգումների բնապահպանական որակը, իրավակիրառման հենքը, տեսուչի աշխատառժը և ստուգման վերջնարդյունքը:

Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում իրականացված գիտական ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքները, մեթոդական մշակումները և առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ-ի շրջակա միջավայրի և բնակչության էկոլոգիական անվտանգության ապահովման, տնտեսական և գործունեության այլ տեսակների բնապահպանական վերահսկողության միասնական ազգային համակարգի ինստիտուցիոնալ կառույցների ամրապնդման, կառավարման ու որոշումների կայացման փորձագիտա-տեղեկատվական համակարգերում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները, մեթոդական մշակումները և առաջարկությունները ներկայացվել և քննարկվել են Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանի «Բնօգտագործման տնտեսագիտություն» ամբիոնի գիտական սեմինարներում, գիտական նստաշրջաններում, կոնֆերանսներում և համայնքային հասարակական քննարկումներում:

ՀՀ-ում տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության միասնական ազգային համակարգի կատարելագործման տեսանկյունից հավանության է արժանացել նոր ինդիկատորների և էկոաուդիտորական գործիքակազմի, մեթոդական տարրերի ներդրման առաջարկը:

Հեղինակի կողմից ատենախոսության թեմայով հրապարակվել են 6 գիտական հոդված:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, ինչպես նաև՝ օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը շարադրված է 151 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

**ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

**1.1 Տնտեսական զարգացման էկոլոգաբնապահպանական
առանձնահատկությունները**

Համաշխարհային հանրության կայուն զարգացման մոդելի անցման ճանապարհին տնտեսական աճը դարձավ ամեն մի երկրի պետական քաղաքականության հեռանկարային նպատակ, որին հաճախ հասնում են ի հաշիվ բնական ռեսուրսների ոչ բնական օգտագործման և շրջակա միջավայրի էկոլոգիական որակի անցանկալի փոփոխության: Տնտեսական զարգացման արդի էկոլոգիական նկարագիրը ունի որոշակի առանձնահատկություններ, որոնցից ռազմավարական տեսանկյունից առավել նշանակալի են ռեսուրսապահովվածության և ռեսուրսախնայողության, շրջակա միջավայրի բնական կայունության և կյանքի որակի պահպանման հիմնախնդիրները:

Հայտնի է, որ գոյություն ունի սերտ կապ շրջակա բնական միջավայրի էկոլոգիական որակի և տնտեսական զարգացման ցուցանիշների միջև: Ընդ որում, շատ դեպքերում այդ կապը հակադարձ բնույթի է, և տնտեսական զարգացման ցուցանիշների աճը բերում է շրջակա միջավայրի կենսաապահովող որակի վատթարացման: Դրա բացատրություններից մեկը այն է, որ գործունեության գրեթե բոլոր տեսակներում հետապնդում են հիմնականում տնտեսական շահը՝ առանց հաշվի առնելու գործունեության հետևանքով շրջակա միջավայրին հասցված էկոլոգիական վնասը:

Ելնելով նրանից, որ ցանկացած երկրի տնտեսական աճի ցուցանիշները պետք է համադրելի լինեն շրջակա միջավայրի էկոլոգիական որակի հետ, չափազանց կարևոր է տնտեսական գործունեության յուրաքանչյուր տեսակի էկոլոգիական սահմանափակումը բնապահպանական պահանջների և վերահսկողության համակարգի շրջանակներում: Հակառակ դեպքում տնտեսական աճը կողմնորոշված

կլինի էկոլոգաբնապահպանական էֆեկտի անկմանը: Նման իրավիճակ է ձևավորվել, մասնավորապես Հայաստանի լեռնարդյունաբերական համալիրում, որտեղ տնտեսական գործունեության նախագծերը հաճախ հաստատվում են առանց էկոլոգիական հետևանքների խորը ուսումնասիրման, հատկապես ռիսկերի և վնասների կանխատեսման ու գնահատման մասով: Այս տեսանկյունից տեղին է անդրադառնալ ՀՀ-ում իրականացվող տնտեսական քաղաքականության և գործունեության էկոլոգիական հետևանքների ձևավորման որոշ օրինաչափությունների գնահատմանը 2005-2016թթ. կտրվածքով: Նման ժամանակահատվածի ընտրությունը հիմնավորված է այնքանով, որ այդ տիրույթում է դիտվում տնտեսական քաղաքականության «բնապահպանական կողմնորոշվածությունը»՝ հատկապես ֆինանսական ճգնաժամի պայմաններում:

Աշխատանքում վերլուծվել է բնապահպանական վճարների (այսուհետ՝ ԲՆՊՎ) և բնօգտագործման վճարների (այսուհետ՝ ԲՆԳՎ) դինամիկան՝ վերհանելով այն հիմնախնդիրները, որոնք նկատելի են կամ կարող են առաջանալ «տնտեսական օգուտ-էկոլոգիական օգուտ» համակարգում (Աղյուսակ 1. 1. 1):

Էկոլոգաբնապահպանական օրինաչափությունների գնահատման համար համեմատենք 2005 (որպես ֆոնային) և 2014 թվականների տնտեսական զարգացման նախաճգնաժամային ու հետճգնաժամային տնտեսական աճի ցուցանիշները: Համեմատության արդյունքից հետևում է, որ ՀՆԱ-ն աճել է մոտ 2.2 անգամ՝ 2014 թվականին կազմելով 4843.2 մլրդ դրամ և նվազելով մինչև 3221.8 մլրդ դրամ 2015 թվականին, իսկ 2016 թվականին ՀՆԱ-ն աճել է մինչև 5079.9 մլրդ դրամ:


**2005-2016թթ. բնապահպանական և բնօգտագործման
վճարների ցուցանիշների դինամիկան ՀՀ-ում^{1,2}**

Ցուցանիշներ	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
ՀՆԱ մլրդ. դրամ	2242.9	2656.2	3149.3	3646.1	3165.5	3461.9	3817.3	3997.9	4266.8	4843.2	3221.8	5079.9
ԲՆՊՎ, մլրդ. դրամ	2.649	3.988	4.174	4.273	1.832	2.566	0.803	0.546	0.706	2.969	1.125	1.043
ԲՆԳՎ, մլրդ. դրամ	2.166	2.547	5.010	5.693	4.289	6.534	4.792	1.091	1.224	1.539	1.806	1.4374
ԲՆՊՎ+ԲՆԳՎ ՀՆԱ-ի նկատմամբ, %	0.215	0.246	0.292	0.273	0.193	0.262	0.146	0.040	0.045	0.093	0.093	0.095

ՀՆԱ-ի աճի նվազումը 14.1%-ով դիտվում է նաև 2009թ-ին և պայմանավորված է տնտեսական ճգնաժամով, տրանսֆերտների կրճատումով, աղքատության բարձր մակարդակով և որոշ սուբյեկտիվ գործոններով, այդ թվում՝ տնտեսական և էկոլոգիական քաղաքականության բացթողումներով (Գծապատկեր 1. 1.): Դա ի վերջո բերեց տնտեսական զարգացման բացասական էկոլոգիական հետևանքների ուժեղացմանը՝ կապված բնապահպանության ոլորտում կառավարման և հսկողության համակարգի թերացումների հետ:

¹ ՀՀ/ «Ռիո+20» ազգային գնահատման զեկույց/ Տնտեսական մեխանիզմներ/ Բնօգտագործման և բնապահպանական վճարները.- Երևան,- 2012.- էջ 40-41/ ՀՀ ԱՎԾ Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում.-2016.- էջ 111

² ՀՀ ԱՎԾ տարեգիրք,- 2015թ., [http:// www.armstat.am/ru/?nid_458&year=2015](http://www.armstat.am/ru/?nid_458&year=2015).- էջ 210 //Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2017-էջ




Գծապատկեր 1. 1. 1

2005–2016 թթ անվանական ՀՆԱ–ի դինամիկան ՀՀ-ում (մլրդ. դրամ)^{3, 4}

Հետճգնաժամային փուլում արդեն 2010թ ՀՆԱ-ն վերականգնեց աճի միտումը (2.1%): Ինչ վերաբերում է 2010-2014թթ աճի վերականգման միջնաժամկետին, ապա 2011թ նախորդ տարվա համեմատ գրանցվել է տնտեսական ակտիվության ցուցանիշի 5.9% աճ: Վերջինս պայմանավորված է հիմնականում հանքարդյունահանման ծավալային աճի բարձր տեմպերի ազդեցությամբ: Հետաքրքիրը այն է, որ բնօգտագործման վճարների առավելագույնը՝ 90%-ից ավելին պատկանում է օգտակար հանածոների արդյունահանման դիմաց վճարներին: Նշենք նաև, որ սկսած 2012 թ-ից բնօգտագործման վճարներից հանվել են մետաղների արդյունահանման վճարները, ինչի մասին է վկայում նաև կորի կտրուկ անկման հետագիծը 2013-2014թթ. (Գծապատկեր 1. 1. 2):

³<http://www.minfin.am/index.php?fl=260&lang=1,ՀՀՀՆԱ> ըստ եվրոպական հաշիվների համակարգի (NASE 1) 2000-2014թթ.>>, ՀՀ Ֆինանսների Նախարարություն/www.gow.am/file/dogs/1184.pdf.-էջ 26

⁴ ՀՀ ԱՎԾ տարեգիրք, 2016թ .էջ 210 / բնապահպանական և բնօգտագործման վճարները <http://www.armstat.am/file/doc/99461588.pdf>



Գծապատկեր 1. 1. 2

2005–2016թթ. ընդերքօգտագործման վճարների դինամիկան (մլն. դրամ)^{5, 6}

ՀՆԱ-ի, բնապահպանական և բնօգտագործման վճարների դինամիկայի ամփոփումը ցույց տվեց, որ տնտեսության հետճգնաժամային վերականգման միտումները գրեթե պահպանվում են: Սակայն չի փոխվում տնտեսական աճի բնատար բնույթը, ինչը մտահոգիչ է և պահանջում է հրատապ քայլերի ձեռնարկում բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ապահովելու և վնասները կանխելու ուղղությամբ: Ակնհայտ է, որ ընդերքօգտագործման ազգային ռազմավարության բացակայության պայմաններում տնտեսական աճի ցանկալի ցուցանիշների հաղթահարումը իրականացվում է հիմնականում օգտակար հանածոների արդյունահանման ծավալների աճի միջոցով:

Հայտնի է, որ Հայաստանի վերջին տարիների տնտեսական զարգացումը համընկավ երկրում իրականացվող օրենսդրական բարեփոխումների, տնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխության, կայուն զարգացման և «կանաչ» տնտեսության անցման գաղափարախոսության, ինչպես նաև՝ անվտանգ զարգացման միասնական մոդելի մշակման շրջանակներում: Ավելի քան երկու տասնամյակների ժամանակահատվածում պետական նախաձեռնությունները կողմնորոշված էին կայուն զարգացման քաղաքական, տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, օրենսդրական, իրավական, գիտական, տեխնոլոգիական հիմքերի ստեղծմանը և ամրապնդմանը: Ըստ էության, դա **«տնտեսական կոնվերսիայի»**

⁵ ՀՀ ԱՎԾ Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2004-2013թթ. /Ընդերքօգտագործման վճարները .-էջ 106-108

⁶ ՀՀ ԱՎԾ տարեգիրք, 2016թ. .էջ 209-210 / բնապահպանական և բնօգտագործման վճարները <http://www.armstat.am/file/doc/99461588.pdf> // 2016թ. . -էջ 209-210

ժամանակահատված էր, որը արդիականացրեց էկոնոմիկայի և էկոլոգիայի ներգործության և ներդաշնակ զարգացման նոր մեխանիզմների որոնումը:

Այդ խնդիրներին նվիրված գիտական հետազոտություններից պարզվեց, որ էկոնոմիկան և էկոլոգիան ՀՀ-ում դեռևս հեռու են բնապահպանական կոնսենսուսից, թեև տնտեսական աճի ցուցանիշները զարգացման որոշ փուլերում հուսադրող էին: Սակայն նման պայմաններում բնապահպանական վերահսկողության համակարգի գործունեությունը մնաց ինչ-որ չափ «ստվերում» և անարդյունավետ: Անշուշտ, այս պարագայում պետք է հաշվի առնել համաշխարհային զարգացման ճգնաժամային իրավիճակների ազդեցությունը պետությունների տնտեսական և էկոլոգիական կայունության վրա: Բացառություն չէր նաև Հայաստանը, որը հայտնվեց անբարենպաստ ոչ միայն տնտեսական, այլ նաև՝ էկոլոգիական ու սոցիալական վիճակում:

Ներկայումս պետական և գիտատեխնիկական ուշադրությունը կենտրոնացված է սակավ ուսումնասիրված հետճգնաժամային տնտեսական աճի վերլուծությունների, գնահատումների և կանխատեսումների վրա: Տեղին է նշել, որ հետճգնաժամային փուլի միայն 2010-2015թթ. տնտեսական գործունեության ակտիվացումը առավել նկատելի է ընդերքօգտագործման (1996թ. համեմատությամբ նախագծերի աճ 6-9 անգամ) և շինարարության (1996թ. համեմատությամբ նախագծերի աճ 7-9 անգամ) ոլորտներում, իսկ արտադրության բնագավառում 2011թ.-ից դիտվում է գործունեության տեսակների նախագծերի քանակության աննշան անկման միտում 2012-2014 թթ-ին և աճի վերականգնում 2015թ - ին (աղյուսակ 1. 1. 2):

Էկոլոգիական փորձաքննությանը ներկայացված նախագծերի քանակությունն՝ ըստ գործունեության ոլորտների (2009-2016թթ.), միավոր⁷

Ցուցանիշներ	1996	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Ընդերքօգտագործում	5	34	35	38	50	50	33	47	55
Արտադրություն	0	0	13	14	10	9	8	14	12
Շինարարություն	4	0	23	36	25	32	31	36	37

Վիճակագրական տվյալներից միաժամանակ հայտնի դարձավ նաև, որ թափոնների տեղադրման դիմաց վճարները գտնվում են թվացյալ կայուն մակարդակի վրա՝ 2014թ. կազմելով 64.8 մլն դրամ (ընդհանուր բնապահպանական վճարների միայն 4.5%): Եվ դա այն դեպքում, երբ նույն թվականում առաջացած, օգտագործած և վնասազերծված թափոնների քանակությունը կազմում է 46511.9 հազ. տ., 9.1 հազ. տ. և 8.7 հազ. տ. համապատասխանաբար, իսկ 2015 թ.- ին 47338.5 հազ. տ. առաջացած թափոնների դիմաց վնասազերծել է միայն չնչին մասը՝ 0.2 հազ. տ :

Թափոնների զգալի մասի տեղադրման «ճակատագիրը» մնում է անորոշ և դուրս է ակտիվ բնապահպանական հսկողությունից: Ենթադրվում է, որ բնագավառում նկատելի է բնապահպանական վերահսկողության թերացումը: Այդ երևույթը բնութագրական է նաև ՀՀ-ում արտադրված, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց վճարներին, որտեղ ըստ ստուգման բնույթի և մեթոդաբանության տեսուչը իրավասու չէ կատարել որևէ գործողություն: Սա այն դեպքն է, երբ անհրաժեշտ է կիրառել էկոառնոլոգիայի հսկողություն/ստուգում, հաշվետվությունների տվյալների իսկության/հավաստիության գնահատման միջոցով:

Բացի այդ պետական վիճակագրական տվյալներում անհասկանալի է բնօգտագործման վճարների կառուցվածքում բնական պաշարների օգտագործման վճարների առանձնացումը կենսապաշարների օգտագործման վճարներից, քանի որ կենսապաշարները ևս բնական պաշարներ են: Տեղեկատվական նյութի նման

⁷ Տվյալները վերցված են ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալների բազայից:

ներկայացումը որոշակի խնդիրներ կառաջացնի ինչպես պետական կառավարման մարմինների, այնպես էլ տեսուչների առաջ: Հետևաբար, դրանով հաստատվում է գիտական դրույթն առ այն, որ **տեսչական ծառայության արդյունավետությունը որոշակիորեն կախված է ստուգման գործընթացի ցուցիչների ճիշտ ընտրությունից**, ինչպես դա կատարվում է միջազգային տեսչական պրակտիկայում:

Հայտնի է նաև, որ արդյունաբերությունը տնտեսական գործունեության այն ոլորտն է, որը անթրոպոգեն ծանրաբեռնվածությամբ առավել ազդեցիկ է շրջակա միջավայրի բնական կայունության խախտման տեսանկյունից՝ առաջացնելով բնօգտագործման օրենսդրության խախտման բազում էկոլոգիական հիմնախնդիրներ:

Աղյուսակ 1. 1. 3

Արդյունաբերական արտադրանքի արտադրության ցուցանիշներն՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի (մլն. դրամ)⁸

Տարի	ք. Երևան	Արարատ	Կոտայք	Սյունիք	Ընդամենը ՀՀ-ում
2012	507541.4	123721.2	166121.7	204975.2	1242070.3
2013	430104.9	107759.2	144948.9	190723.7	1121806.7
2014	543868.8	131971.3	167390.6	197631.1	1231274.1
2015	552818.1	173151.2	138485.2	178684.5	1342700.1
2016	563021.2	178974.9	140474.4	182461.6	1429044.0

Այս համատեքստում հետաքրքիր են ուսումնասիրության արդյունքները և արդյունաբերական արտադրանքի արտադրության ցուցանիշների վերլուծությունները ըստ ՀՀ մարզերի ու Երևան քաղաքի (աղյուսակ 1.1.3): Անդրադարձել է եղել այն հարցերի իրավիճակային գնահատմանը, որոնք, հեղինակի կարծիքով, առավել նկատելի են արտադրական ցուցանիշներով:

Բոլոր նշված մարզերում առկա է արդյունաբերական արտադրանքի արտադրության բավականին բարձր մակարդակ, հատկապես ք. Երևանում: Միաժամանակ աճում է ծանրաբեռնվածությունը շրջակա միջավայրի և նրա

⁸ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՎԵՐՈՎ – 2016 [http:// www.armstat.am/file/article/armenia15-2.pdf](http://www.armstat.am/file/article/armenia15-2.pdf): էջ 55

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ [http:// www.armstat.am/file/article/marz-2016-10.pdf](http://www.armstat.am/file/article/marz-2016-10.pdf): էջ 27

բաղադրիչների վրա, որը այդ մարզերում բնութագրվում է բարձր խոցելիությամբ: Դրա մասին են վկայում նաև շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության 2005-2016թթ ամփոփ տվյալները, որոնցում հաշվի են առնված նաև գործունեության զուգակցված/կոնստեյատիվ ազդեցության արդյունքները (աղյուսակ 1.1.4): Աղյուսակից հետևում է, որ առավել մտահոգիչ են հետճգնաժամային փուլի 2009թ.-ից դիտվող մթնոլորտային օդի աղտոտման միտումները և թափոնագոյացման ցուցանիշների աճը:

Աղյուսակ 1. 1. 4

2005-2016թթ Տնտեսական գործունեության շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության արդյունքները⁹

Ցուցանիշ	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Մթնոլորտային օդի աղտոտում, հազ.տ.	199.3	188.4	183.9	206.5	235.1	263.9	269.2	259.8	261.4	270.9	268.7	276.7
Աղտոտված ջրերը մլն.լոր. մ.	157	150	151	83	89	139	247	307	65	106	132	113
Թափոնագոյացում հազ. տ.	11237.4	12420.7	13346.0	11455.4	14766.1	23307.8	27609.0	39030.9	49332.1	46511.9	47338.5	55151.4
Ապօրինի անտառահատում, հազ.հա.	713	345	269	227	218	179	187	194	179	231	335	513

Այդ ժամանակահատվածում թափոնագոյացման ցուցանիշները 2005թ.-ի համեմատությամբ գրանցել են 1,3-4,3 անգամ աճ: Գնահատականը կլինեք ավելի տպավորիչ, եթե պաշտոնական տվյալներում ներկայացված լինեք երկրորդային ռեսուրսների օգտագործման ոլորտը, որին ՀՀ -ում հատուկ է «բացթողնված օգուտների» էֆեկտը: Այստեղ առկա է հավաստի տեղեկատվության դեֆիցիտը, իսկ ապօրինի անտառահատումների ոլորտում՝ տեղեկատվական խառնաշփոթ: Այսպես, գիտական տարբեր աղբյուրներում, նույնիսկ ՀՀ -ի վիճակագրական տվյալներում, ապօրինի անտառահատումները ներկայացված են տարբեր չափման միավորներով

⁹ ՀՀ ԱՎԾ տարեգիրք, 2004-2015թթ., <http://www.armstat.am/file/doc/99493638.pdf> էջ 200-213, <http://www.armstat.am/file/doc/613.pdf> էջ 198, <http://www.armstat.am/file/doc/99458093.pdf> էջ 193, <http://www.armstat.am/file/doc/99461588.pdf> էջ 217, <http://www.armstat.am/file/doc/99461588.pdf> էջ 215:

(օրինակ՝ հատ, խոր. մ, հա): Նման դեպքերում դժվար է ապահովել բնապահպանական վերահսկողության արդյունավետությունը, ինչը նպաստում է ոլորտում անպատժելիության մթնոլորտի ամրապնդմանը՝ իրավակիրառման մեխանիզմի թերացման պատճառով:

Տնտեսության ճյուղային զարգացման ծավալային ցուցանիշների նախնական գնահատումը և ՀՆԱ-ի արժեքի փոփոխությունները միանշանակ խոսում են այն մասին, որ ՀՀ տնտեսության դիվերսիֆիկացումը հետճգնաժամային փուլում (2010-2015թթ.) կրում է հիմնականում բնատար/նյութատար բնույթ, պայմանավորված բնական ռեսուրսների էքստենսիվ օգտագործման կայուն միտումներով: Ավելին, համաձայն ուսումնասիրությունների, 2000թ.-ից ի վեր տնտեսական աճը Հայաստանում մոտ եռակի արագ է եղել համաշխարհային տնտեսության համեմատությամբ (նախաճգնաժամային փուլ):¹⁰ Հետագա զարգացումները ցույց տվեցին, որ ՀՆԱ-ի արագընթաց աճի միտումները պահպանվեցին նույնիսկ գերազանցելով նախաճգնաժամային արժեքները: Ինչ վերաբերվում է հետևանքներին, ապա մեր կարծիքով մտահոգիչ է հատկապես շրջակա միջավայրի որակի նկատելի անկումը, բնական ռեսուրսների կայունության խախտումը և դրանց հետ կապված սոցիալական խնդիրների բարդացումը:


Ներկայումս որպես տնտեսական զարգացման էկոլոգիական հետևանքներն արտահայտող կարևորագույն ցուցանիշ է դիտվում <<էկոլոգիական հետքը>>, որը էլ ավելի է արդիականացնում տնտեսական գործունեության էկոլոգիական վերահսկողության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը: Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա, համաձայն վերջին տարիների վիճակագրական տվյալների, հանրապետությունում «էկոլոգիական հետքի» ցուցանիշը մոտ է 2.0-ի, իսկ բնատարողության ցուցանիշը տատանվում է 0.6-0.7-ի սահմաններում: Էկոլոգիական հետքի հաշվարկը իրականացվում է՝ համեմատության մեջ դնելով մարդկության սպառման և երկրագնդի վերարտադրության ֆունկցիայի ցուցանիշները: Հաշվարկվում է այն տարածքի մեծությունն, որն անհրաժեշտ է

¹⁰ Հովհաննիսյան Հ., ՀՀ տնտեսական աճի կայունության ապահովման քաղաքականությունը // Տնտեսական զարգացման քաղաքականության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում: ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովի նյութեր. Երևան, Տնտեսագետ.-2014.-էջ 624-625:

սպառվող ռեսուրսներն արտադրելու, ենթակառուցվածքները տեղաբաշխելու և CO2 արտանետումները կլանելու նպատակով: Էկոլոգիական հետքի հաշվարկն իր մեջ ներառում է 6 հիմնական ուղղություն.

- ածխածնի արտանետումներ,
- անտառային տնտեսություն,
- ձկնորսություն,
- ցանկատարածություններ,
- արոտավայրեր,
- բնակեցված, կառուցապատված տարածքներ:

Գծապատկեր 1.1.3 -ում ,մասնավորապես, ներկայացված է էկոլոգիական հետքի վերը նշված ուղղությունների բաշխվածությունը հետճգնաժամային փուլի 2009-2015 թթ. միջնաժամկետում՝ 2011թ-ին, որը աչքի է ընկնում անցանկալի էկոլոգիական հետևանքներով:




Գծապատկեր 1. 1. 3

Էկոլոգիական հետքն՝ ըստ ուղղությունների ¹¹

Նշենք, որ առավել մեծ տեսակարար կշիռը զբաղեցնում են այն տարածքներն, որոնք անհրաժեշտ են CO2 արտանետումները կլանելու համար, ինչպես նաև մեծ է արոտավայրերի ու ցանկատարածությունների նկատմամբ պահանջարկը (գծապատկեր 1. 1. 3): Հատկանշական է, որ հետճգնաժամային փուլի 2011թ. տնտեսական ակտիվությանը նպաստել են բոլոր ճյուղերը՝ բացառությամբ շինարարության, ինչը հանգեցրեց զգալի կառուցվածքային տեղաշարժերի ՀՆԱ-ի

¹¹WWF Living Planet Report 2012, p. 37-38


կազմում: Այսպես, ՀՆԱ-ի կազմում առավել նկատելի է եղել 2008թ-ի շինարարության աճը, որի 2009թ անկումը (41.6%) կազմել է ՀՆԱ-ի անկման 74.5%-ը (գծապատկեր 1. 1. 4) : ՀՆԱ-ի կառուցվածքում դրա տեսակարար կշիռը նվազել է մինչև 18.6%: Միաժամանակ 2010-2016 թվականներին որոշակի աճի միտում է գրանցվել նաև գյուղատնտեսության, ծառայության և արդյունաբերության ոլորտներում:



Գծապատկեր 1. 1. 4

ՀՆԱ-ի կառուցվածքի փոփոխությունը 2008-2016 թվականներին, %-ներով¹²

Համեմատության համար կարելի է նշել, որ հետզհետե աճող փուլի 2016թ.- ին հաշվարկն արձանագրեց որոշակի փոփոխություն ըստ էկոլոգիական հետքի հիմնական ուղղությունների (գծապատկեր 1. 1. 5) :



Գծապատկեր 1.1.5

Էկոլոգիական հետքն՝ ըստ ուղղությունների, 2016թ¹³

¹² ՀՀ էկոնոմիկայի նախարարություն/ Մակրոտնտեսական ցուցանիշներ/ ՀՆԱ-ի կառուցվածք, 2012-2016թ. <http://www.b24.am/economy/47170.html>


Եթե ավելի մանրամասն անդրադառնանք հետճգնաժամային տնտեսական աճի, օրինակ, նույն առավել բնութագրական 2011 թվականի ցուցանիշին, ապա կտեսնենք, որ ՀՆԱ-ի կառուցվածքում առավելապես գերակշռում են այնպիսի բնատարողունակ ճյուղեր, ինչպիսիք են՝

-գյուղատնտեսությունը, որսորդությունը, անտառային տնտեսությունը, ձկնորսությունը, ձկնաբուծությունը (20.2%),

-արդյունաբերությունը, ներառյալ էներգետիկան (16.3%),

-շինարարությունը (12.8%), ինչպես նաև տրանսպորտային ենթակառուցվածքները:

Ազգային վիճակագրական տվյալների համաձայն՝ հետճգնաժամային փուլում (2010-2016թթ) երկրում արտադրվող ամբողջ արդյունաբերական արտադրանքի մեջ հանքագործական արդյունաբերությունը և բացահանքերի շահագործումը կազմում է 14,9 % (գծապատկեր 1.1.6):



Գծապատկեր 1. 1. 6
ՀՀ-ում արդյունաբերական արտադրանքի ծավալն հետճգնաժամային փուլում (ընթացիկ գներով մլն դրամ)¹⁴

¹³ ՀՀ ԱՎԾ տարեգիրք, 2004-2016թթ., <http://www.armstat.am/file/doc/99493638.pdf> էջ 200-210

//Հայաստանի վիճակագրական տարեգիրք. 2017 – էջ 258

¹⁴ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակը, Արդյունաբերություն, 2009-2015թ. /2009թ.- էջ26,2010 թ.- էջ25,2011թ.- էջ26, 2012թ.- էջ28, 2013թ.- էջ25, 2014թ.- էջ26/

Այդ ցուցանիշը, ինչպես նաև՝ հանքարդյունաբերության ծավալների աճը, ևս մեկ անգամ ապացուցում է երկրի տնտեսության հետագա կայուն և անվտանգ զարգացման կախվածությունը ոլորտից: ՀՀ Էկոնոմիկայի նախարարության 2014թ տվյալներով՝ հանրապետությունում կատարված հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել է շուրջ 592 հանքավայր, որից շահագործվում է 469-ը, իսկ ուսումնասիրման փուլում են գտնվում ավելի քան 72 մետաղական և 48 ոչ մետաղական հանքավայրեր: Արդյունահանվող հումքի հիմնական մասը՝ (2012-2016թթ. դրությամբ) 96%-ը մետաղական է: Այս պաշարների քանակությամբ էլ պայմանավորված է հանքարդյունաբերության դերի գերակշիռ մասը երկրի տնտեսության մեջ: Ավելին, 2016թ. հունվար-մարտ ամիսներին, օրինակ, ՀՀ-ի արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալը տարեկան հաշվարկով ավելացել է 8.9%-ով, ընդ որում հիմնական աճը գրանցվել է հանքարդյունաբերության ոլորտում՝ 27.7%:

Նպատակահարմար է հատուկ անդրադառնալ Սյունիքի մարզին, որտեղ 2013-2016թթ. տվյալներով մարզում հայտնաբերվել է շուրջ 80 հանքավայր (41 մետաղական և 39 ոչ մետաղական), որից շահագործվում են 12 մետաղական և 32 ոչ մետաղական հանքավայրեր: Նշենք նաև, որ ուսումնասիրման փուլում են գտնվում մետաղական 25 և ոչ մետաղական 6 հանքավայր: Քաջարանի հանքավայրում կենտրոնացված է ՀՀ պղինձ-մոլիբդենի հետախուզված պաշարների 61%-ը (նկար 1. 1. 1):



Նկար 1.1. 1

Քաջարանի բաց հանքը

Որպես հանքարդյունաբերության գործունեության հաճախ էկոլոգիապես չկարգավորված, ընդլայնման և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության հզոր աղբյուր՝ մեծ վտանգ են ներկայացնում գործող, կոնսերվացված և կառուցվող նոր պոչամբարները (օրինակ՝ Արագածոտնի մարզում), որտեղ կուտակվում են տարբեր թունավոր քիմիական տարրեր:

Համաձայն Արտակարգ իրավիճակների նախարարության տվյալների, ՀՀ-ում 2012 թ. օգոստոս ամսվա դրությամբ կա 10 գործող և 9 կոնսերվացված պոչամբար, որոնք զբաղեցնում են 360 հա տարածք: Ընդհանուր ծավալը կազմում է մոտ 172 մլն խոր.մ, որից՝ Սյունիքի մարզում 9 պոչամբար: Սակայն, ըստ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության Ընդերքի վարչության 2014 թ-ի տվյալների Հայաստանում կա 21 գործող կամ արդեն կոնսերվացված պոչամբար, որոնցում կուտակված է շուրջ 1 մլրդ խմ լեռնարդյունաբերական թափոններ: Սյունիքում է գտնվում 11-ը: Կապանի շրջանի Գեղանուշ գյուղի մոտ գտնվող Գեղանուշի պոչամբարը իրենից մեծ վտանգ է ներկայացնում, լցված է 4 մլն 650 հազ խոր.մ պոչանքով: Տարեկան ամբարում են ընդհանուր քանակությամբ 568624.0 տոննա պոչեր՝ ամեն տարի գրավելով ևս 10 հա նոր տարածք (նկար 1. 1. 2):¹⁵

¹⁵ <http://transparency.am/hy/assets/mines> - Պոչամբարներ, 2013



Նկար 1. 1. 2

Գեղանուշի պոչամբարը

Նշենք, որ առ այսօր բացակայում է հավաստի տեղեկատվություն պոչամբարների քանակության մասին: Բացի դա, մինչ 2011թ. «Ընդերքի մասին» ՀՀ նոր օրենսգրքի ընդունումը, Գեղանուշի պոչամբարը համարվում էր առաջին դասի վտանգավորության պոչամբար: Սակայն այս օրենսգրքով պոչամբարները դիտարկվում են ոչ թե որպես վտանգավոր թափոնների կուտակիչ, այլ որպես տեխնաձին հանքավայրեր, և ոչ ոք պարտավոր չէ փոխհատուցել բնակիչներին վնասը, որը նրանք կրում են՝ վտանգավոր պոչամբարի ազդեցության տակ: Արժվանիկի պոչամբարը ոչինչով չի զիջում Գեղանուշի պոչամբարին: Նախագծային ծավալը կազմում է 310 մլն խոր. մ, այժմ արդեն իսկ լցված է մոտ 270-300 մլն խոր. մ պոչանքով: Էկոլոգիական վտանգի և ռիսկի տեսանկյունից այն գտնվում է անմխիթար վիճակում: Շրջակայքում չի գործում որևէ մոնիթորինգային դիտակայան:

Անդրադառնանք նաև Լոռու մարզի հանքահումքային համալիրի առանձնահատկություններին: Մարզի ցավոտ բնապահպանական խնդիրներից է Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ընթացքում շուրջ 357 հա անտառների հատումը: Առայժմ «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից իրականացվում են հանքավայրի լեռնահարստացուցիչ ֆաբրիկայի, պոչամբարի և այլ ենթակառուցվածքների շինարարություն, որի հետևանքով 2008թ. ընթացքում հատվել է 20 հա անտառ – 2814 խոր.մ 2009թ. հունվար-փետրվար ամիսներին հատվել է ևս 2 հա անտառ – 286 խոր.մ: Հանքավայրի շահագործման ծրագրով

նախատեսված է մինչև 2020թ. հատել 158.1 հա անտառ, իսկ մնացած 198.9 հա-ը՝ 2020թ. և հետագա տարիներին: Ընկերությունը պարտավորվել է կատարել 714 հա անտառատնկման աշխատանքներ (նկար 1. 1. 3):



Նկար 1. 2. 3

Թեղուտի հատված անտառները

Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման ընթացքում բնակչության անվտանգության ապահովման նպատակով 775 հա հանքավայրը շրջափակող անտառների նկատմամբ սահմանվելու է հատուկ իրավական ռեժիմի՝ սանիտարական գոտի: Հանքավայրի շահագործումը էական բացասական ներգործություն ունի Շնող գետի ջրային էկոհամակարգի վրա, որի որակը զգալիորեն վատացել է 2009-2016թթ-ին: Շահագործման արդյունքում գետի ջրերում բարձրացել են ծանր մետաղների, սուլֆատների, և բազմաթիվ վտանգավոր քիմիական միացությունների միջին կոնցենտրացիաները, ինչի առկայության պայմաններում տեղի բնակչությունը գետի ջուրն օգտագործում է ոռոգման նպատակներով: Այսպիսով, իրավիճակային վերլուծության և գնահատման արդյունքներից պարզվեց, որ ՀՀ-ում դեռևս ցածր է տնտեսական գործունեության բնապահպանական կողմնորոշվածության աստիճանը: Տնտեսական զարգացումը շարունակում է մնալ խիստ բնատար և բնաքայքայող՝ հատկապես հանքարդյունաբերական գործունեության էկոլոգիական հետևանքների մասով, իսկ

ընդերքօգտագործումը հիմնականում էքստենսիվ բնույթի է՝ տարեցտարի մեծացնելով շահագործվող հանքերի թիվը: Տեխնոլոգիական ինովացիաների ցածր պայմաններում այն բերում է թափոնագոյացման ցուցանիշների աճին և պոչամբարներում դրանց գերկուտակումների: Այս տեսանկյունից արդիական է էկոլոգիապես կարգավորել հանքավայրերի շահագործման լիցենզավորման և բնապահպանական վերահսկողության մեխանիզմները, հատկապես մոնիտորինգային դիտարկումների և էկոլոգիական անվտանգության ապահովման մասով

1.2 Բնապահպանական վերահսկողության գիտական բովանդակությունը

և զարգացման ուղղվածությունը

Ժամանակակից բնապահպանական վերահսկողությունը շրջակա միջավայրի կառավարման համակարգի կարևոր մեխանիզմներից մեկն է , որի հիմնական նպատակն է ապահովել շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման ոլորտներում իրականացվող տնտեսական ու գործունեության այլ տեսակների օրենքով սահմանված էկոլոգաիրավական նորմերի կատարումը: Բնապահպանական վերահսկողության միջազգային պրակտիկան ունի որոշակի ընդհանրություններ, հատկապես ԱԵԿԿԱ-ի երկրներում ստուգման օբյեկտների, մակարդակների, ձևերի և մեթոդների դասակարգման մասով (աղյուսակ 1.2.1): Ներկայիս քաղաքական վեկտորները ուղղված են բնօգտագործման թույլտվությունների և տեսչական գործունեության գնահատման և կատարելագործման նոր մեխանիզմների, ցուցանիշների որոնմանը ու դրանց համակարգմանը IT- տեխնոլոգիաների միջոցով:

Աղյուսակ 1. 2. 1

Էկոլոգիական վերահսկողության մեթոդների դասակարգման ձևերը և մակարդակները¹⁶

Վերահսկողության օբյեկտները	Վերահսկողության մակարդակները	Վերահսկողության ձևերը	Վերահսկողության մեթոդները
Շրջակա միջավայրի և նրա առանձին բաղադրիչների վիճակը	Պետական, այդ թվում՝ տարածաշրջանային և մունիցիպալ մակարդակ	Տեղեկատվական (էկոլոգիական տեղեկատվության հավաքագրում և ընդհանրացում համապատասխան մարմնի կողմից հետագա միջոցների ձեռնարկման համար)	Ձևնում, դիտողականություն շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, նրա ազդեցությունը կենսագործնության պայմանների վրա, տեղեկատվության վերամշակում, ընդհանրացում
Էկոհամակարգերի հաշվեկշիռների ցուցանիշների դինամիկա	Գերատեսչական՝ իրականացվող տնտեսության և նրա ստորաբաժանումների համատեքստում	Նախագուշակական՝ վնասակար հետևանքների առավելագույնս նվազեցնելու կամ կանխելուն ուղղված	
Էկոհամակարգերի և նրա առանձին բաղադրամասերի վրա վնասակար ազդեցությունները առավելագույնս նվազեցնելուն կամ կանխելուն ուղղված միջոցառումների իրականացումը	Արտադրական՝ իրականացվող բնօգտագործողների ձեռնարկատերերի կողմից	Հարկադիր (ստիպողական) բնապահպանական նորմատիվների, օրենքների, իրավունքների խախտման դեպքում պատժիչ միջոցառումների իրականացում	Էկոլոգիական խախտումների ստուգում, նախագուշակացում և արգելում /կանխում
Բնապահպանական օրենսդրության նորմերի, իրավունքների համապատասխանությունը շրջակա միջավայրի որակի և բնօգտագործման ստանդարտներին	Հասարակական՝ իրականացվող առանց վերահսկողության օբյեկտի սահմանափակման	Պարտադիր՝ բնապահպանության բնօգտագործման պահանջների իրականացման ժամանակ տուգանքների, սանկցիաների և այլ տույժերի նկատմամբ պատժամիջոցների կիրառում	Բնօգտագործման, դրա սահմանափակումների, արգելքների, դադարեցման, լիցենզիաների տրամադրում

¹⁶Яндуганов Я.Я Экономика природопользования М. -2005-с. 336-340

Ինչպես հայտնի է, էկոլոգիական վերահսկողության համակարգի զարգացումը մշտապես ուղեկցվում է հավաստի և հասկանալի տեղեկատվության պահանջարկի աճով, որը վերաբերում է շրջակա միջավայրի որակական փոփոխություններին և բնօգտագործման էկոլոգիական խախտումներին: Նման տեղեկատվության ստացումը կարևոր է ոչ միայն էկոլոգիական քաղաքականություն մշակող պետական մարմինների, ձեռնարկությունների, հասարակայնության, էկոլոգիական հասարակական կազմակերպությունների, այլև ուրիշ շահագրգիռ կողմերի համար:

Տվյալ համատեքստում միանշանակ հիմնավորված է գիտակիրառական հետաքրքրությունը էկոլոգիական հսկողության համակարգում բնապահպանական իրավունքի և իրավակիրառման նորմերի պահպանման համալիր և բովանդակալից ինդիկատորների մշակման և ներդրման նկատմամբ: Նման ինդիկատորները հնարավորություն են տալիս գնահատել և ուղղումներ մտցնել այն գործիքների և մոտեցումների մեջ, որոնք օգտագործվում են պետական էկոլոգիական հսկողության մարմինների կողմից: Հսկողության արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության ակտիվ տարածումը իր հերթին կարող է ապահովել արտաքին ենթահաշվետվությունը և սաստել բնապահպանական ու բնօգտագործման օրենսդրության խախտումները:

Գիտակցելով գործընթացի նշանակությունը գլոբալ համագործակցության շրջանակներում՝ **INECE-էկոլոգիական համապատասխանության և իրավակիրառման միջազգային ցանցը OECD-ի** և մի շարք այլ շահագրգիռ կողմերի հետ համատեղ 2003թ.-ից սկսեց էկոլոգիական հսկողության համակարգի գնահատման նախագծի իրականացումը: Գործընթացին մասնակցեցին աշխարհի ավելի քան 20 երկրներ, միջազգային և հասարակական կազմակերպություններ: ¹⁷ Արդյունքում «բեռնվածություն-վիճակ-պատասխան» մոդելին համապատասխան ինդիկատորները առանձնացված են 3 տեսակների՝

¹⁷ Оценка систем экологического контроля: Измерять значимое. Материалы международного семинара по индикаторам соблюдения норм экологического права и правоприменения. 3-4 ноября 2003г. Париж (Франция), 176 с.

1. Շրջակա միջավայրի վրա բեռնվածության ինդիկատորներ , ներառյալ՝ ուղղակի և անուղղակիները):
2. Շրջակա միջավայրի ինդիկատորներ:
3. Հասարակության ռեակցիայի/արձագանքի ինդիկատորներ:

Առավել հետաքրքիր է հասարակական արձագանքի ինդիկատորների կիրառման պրակտիկան, որը, օրինակ, Հայաստանում անարդյունավետ է, իսկ հասարակության արձագանքը հիմնականում տարերային, քան ազդեցիկ բնույթի է: Այս հանգամանքը ինչ-որ չափ խոչընդոտում է հասարակական կարծիքի ինստիտուտի ձևավորմանը: Դրան նպաստում է նաև հասարակության կողմից էկոլոգիական իրավունքի և իրավակիրառման նորմերի տեղեկացվածության ցածր աստիճանը, որն էլ, ի վերջո, բերում է հասարակության՝ որպես «պասիվ դիտորդի» ֆենոմենի ամրապնդմանը: **Բելգիայում**, օրինակ, իրավակիրառման պրակտիկան համարվում է արդյունավետ այն դեպքում, երբ էկոլոգիական հսկողության համակարգում առկա են՝

- Բավականաչափ և բարձր որակյալ անձնակազմ,
- Հստակ նպատակներ,
- Օգտագործվող ինդիկատորներ,
- Անհրաժեշտ իրավական գործիքներ,
- Հարմար գործիքներ ստուգումների իրականացման համար
- Կադրերի պատրաստման մշտապես գործող մեխանիզմներ:¹⁸

Ինդիկատորների մշակման և ներդրման գործընթացին արդյունավետ մասնակցություն ունեցան **Չինաստանը, Կանադան, Չեխիան, Գանան, Ղազախստանը, Մեքսիկան, Նիդերլանդները, Ռուսաստանը, Թայլանդը, ԱՄՆ-ն**: Պետք է նշել, որ տվյալ երկրներում օգտագործվող ինդիկատորները ունեն որոշակի նմանություն, իսկ ինդիկատորների ցանկը և երկրում կիրառվող հսկողության գործընթացի արդյունավետությունը անմիջականորեն կախված են էկոլոգիական

¹⁸ Поль Бернер. Бельгия. Индикаторы соблюдения природоохранного законодательства и правоприменения./ Оценка систем экологического контроля: Измерять значимое. Материалы международного семинара по индикаторам соблюдения норм экологического права и правоприменения. 3-4 ноября 2003г. Париж (Франция), с. 60-65:

քաղաքականության և օրենսդրության կատարելության աստիճանից: Առկա են նաև տարբերություններ: Այսպես, օրինակ՝ **Չինաստանում** հաջողությամբ օգտագործվում է շրջակա միջավայրի որակը բնութագրող տրանսպորտային մայրուղիների աղմուկի միջին մակարդակը ճԵ: **Մեքսիկայում PROFERA** – շրջակա միջավայրի պահպանության գործակալությունը ռազմավարական տեղեկատվության համակարգի օգնությամբ կարող է ստուգել երկրի հիմնական ռազմավարությունների իրականացման ընթացքը: Օգտագործվում է բարձր ռիսկայնության գրանցված արդյունաբերական ձեռնարկությունների ինդիկատորը (%-ներով):

Դրան համահունչ, **Նիդերլանդների** տեսչական պրակտիկայում առանձնացված են ռիսկի ինդիկատորների 4 դաս, որոնց գնահատման հիմքում ընկած են բնակչության առողջության, անվտանգության, կայունության և սոցիալական գործոնները (այն դեպքում, եթե տեսչությունը չի ապահովում օրենսդրության պահպանումը): Երկրում մշակված է և տեսչական պրակտիկայում կիրառվում է ռիսկերի որոշման և օրենսդրության պահպանման մատրիցը: Ենթադրվում է, որ տեսչական ստուգումներում ռիսկի և օրենսդրության պահպանման մատրիցների կիրառումը էապես բարձրացնում է գործունեության արդյունավետությունը և դրանով կանխում է ռիսկերի և վտանգների առաջացումը՝ նվազագույնի հասցնելով հասարակական առողջության վրա բացասական ազդեցությունները:¹⁹ Հայաստանի բնապահպանական վերահսկողության համակարգում նման գործիքների կիրառումը խիստ սահմանափակ է:

Ուշագրավ է հատկապես **Շոտլանդիայում** բնապահպանական օրենսդրության և իրավակիրառման նորմերի պահպանման ինդիկատորների մշակման և կիրառման փորձը: Այդ երկրում շրջակա միջավայրի պահպանության գործակալությունը բնապահպանության և բնօգտագործման ոլորտների կարգավորող մարմինն է: Գործակալության հաստիքը կազմում է 1000 աշխատակից, որոնք ծառայություն են իրականացնում երկրի 21 բնակավայրերում: Ընդ որում, բնապահպանական (այդ

¹⁹ Анжелик А.А. ван дер Шрааф, Ян ван дер Плос. Индикаторы соблюдения природоохранного законодательства и правоприменения в Нидерландах./ Оценка систем экологического контроля: Измерять значимое. Материалы международного семинара по индикаторам соблюдения норм экологического права и правоприменения. 3-4 ноября 2003г. Париж (Франция), с. 110-112.

թվում տեսչական) գործունեության բյուջեն կազմում է 50 մլն ֆունտ ստերլինգ (մոտ 83 մլն ԱՄՆ դոլ): Գումարի կեսը տրամադրում է պետությունը, իսկ մյուս կեսը հավելում են կարգավորման սուբյեկտների վճարներից: Փորձի ուսումնասիրումը վկայում է երկրում կիրառվող տեսչական հսկողության արդյունավետության մասին: Դա պատահական չէ, քանի որ այն հիմնված է օրենսդրության, բնապահպանական լիցենզիաների տրամադրման, իրավակիրառման, դատական հետապնդման, կամավոր համաձայնությունների և օպտիմալ պրակտիկայի խրախուսման մեխանիզմի վրա: Իրավակիրառման լծակները բավականին պարզ են բնապահպանական լիցենզիաների տրամադրման, վերանայման, փոփոխության և ետկանչման մասով:

Հայաստանում այդպիսի մեխանիզմի կիրառման անհրաժեշտությունը ակնհայտ է այն պարզ պատճառով, որ տնտեսական (հատկապես ձեռնարկատիրական) գործունեության նախագծերի բնապահպանական փորձաքննության օրենսդրությունը գրեթե անտեսել է հետնախագծային վերլուծության/մոնիթորինգային փուլի անցկացումը: Իրավիճակը բարդանում է նրանով, որ մոնիթորինգային ստուգումներում «չեզոք» դիրքում է գտնվում նաև տեսչական ծառայությունը: Հետևաբար՝ ոլորտում առկա է **«տեսչական հսկողության անորոշության» երևույթը**, ինչը պահանջում է ստուգման նոր մեխանիզմի կիրառումը գիտական որոնումների և առաջատար միջազգային փորձի տեղայնացման միջոցով:

Էկոլոգիական հսկողության ամերիկյան համակարգում մշակված են նույնիսկ ինդիկատորների որոշման չափորոշիչներ, իսկ դրանցից ընտրված առավել խոստումնալիցները օգտագործվում են երկու նպատակով՝

- Հասարակայնության, ԱՄՆ-ի կոնգրեսի և ադմինիստրատիվ բյուջետային վարչության առաջ հաշվետվության:

- Ռազմավարությունների և ծրագրերի վերլուծության և կատարելագործման համար:²⁰

²⁰Майкл Стал. Показатели действенности программ обеспечения соответствия природоохранным требованиям: Опыт АООС США./ Оценка систем эколог. контроля: Материалы международного семинара по индикаторам соблюдения норм экологического права и правоприменения. 3-4 н. 2003г. Париж (Фр), с. 137-153:

Այսպիսով, էկոլոգիական հսկողության համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման միջազգային բնապահպանական նախաձեռնությունները կողմնորոշված են էկոլոգիական իրավունքի և իրավակիրառման նորմերի պահպանման, ինդիկատորների մշակման և ներդրման բարդ և գիտատար գործընթացին: Ընտրված են երեք հիմնական չափորոշիչ՝

- կողմնորոշվածություն և օգտակարություն,
- վերլուծական հուսալիություն,
- չափելիություն:

Էկոլոգիական հուսալիության տեսանկյունից բնապահպանական ինդիկատորները պետք է ունենան գիտատեխնիկական հիմնավորում, ինչպես նաև փոխկապակցված լինեն տնտեսական մոդելների, կանխատեսումների և տեղեկատվական համակարգերի հետ: Այս տեսանկյունից տեսչական հսկողության համակարգի կատարելագործման Հայաստանի անելիքները բավականին բազմազան են՝ հաշվի առնելով «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ նոր օրենքի (2005թ.) գործածության և ոլորտում իրավակիրառման մեխանիզմի վերանայման ու կատարելագործման հրատապությունը: Դա են պահանջում նաև ԱԵԿԿԱ-ի երկրների համար մշակված շրջակա միջավայրի պահպանության ոլորտի հսկողության պետական մարմինների բարեփոխումների ղեկավար սկզբունքները:²¹

Էկոլոգիական վերահսկողության համակարգի ռազմավարական գերակայություններում հատուկ նշանակություն ունի բնապահպանական գործունեության արդյունավետության ստուգման/հսկողության նոր մեխանիզմների որոնումը: Այս առումով համոզիչ և ուշագրավ է հատկապես էկոլոգիական աուդիտի ժամանակակից մեթոդաբանության գրագետ կիրառման հնարավորությունը բնապահպանական վերահսկողության համակարգում: Այդ բացը առավել նկատելի է զարգացող երկրների տեսչական պրակտիկայում, որտեղ դեռևս իշխում է ավանդական ստուգողական մեխանիզմը, ցուցանիշների ընտրությունը, և գնահատումը ավելի մոտ է «վավերագրական գործավարության», քան ազդեցիկ

²¹ Guiding principles for reform of environmental enforcement authorities in transition economics of Eastern Europe, Caucasus and central Asia OECD. 2003. P. 36:

պայմաններում: Հետևաբար, այս առումով, էկոլոգիական աուդիտի՝ որպես բնապահպանական հսկողության նոր լծակի անելիքները և մեթոդոլոգիական բացահայտումները բավականին շատ են:

Հեռանկարային է նաև էկոլոգիական փորձաքննության մեթոդաբանական առավել ազդեցիկ լծակների օգտագործումը նախագծային լուծումների լավագույն տարբերակների ընտրության գործընթացներում: Հայտնի է, որ էկոլոգիական փորձաքննությունը իր ֆունկցիոնալ նշանակությամբ հսկողության ուժեղ տեսակ է ՇՄԱԳ գործընթացի նկատմամբ: Միաժամանակ էկոլոգիական փորձաքննությունը հսկելով՝ ՇՄԱԳ-ի գիտագործնական որակը նպաստում է տնտեսական և գործունեության այլ տեսակների էկոլոգացմանը, ազդեցությունների հետ կապված վնասների, ռիսկի և վտանգների պարտադիր գնահատմանը: Այդ հիմնախնդրի լուծումը առավել կարևորվում է ինովացիոն գործունեության աշխուժացման տեսանկյունից, ինչը առ այսօր չի ստացել անհրաժեշտ մակարդակի գիտական հիմնավորում:

«Հ-ում բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման նախադրյալներ կարելի է համարել գլոբալ բնապահպանական և ազգային արդի սոցիալ-տնտեսական ու էկոլոգիական հիմնախնդիրների գիտակցումը, դրանց լուծման գերակայությունների ընդունումը: Բնապահպանական հիմնախնդիրների լուծումը մեր հանրապետության համար արդիական է այն առումով, որ տնտեսության ներկայիս զարգացումն ուղեկցվում է շրջակա միջավայրի որակի կտրուկ վատթարացմամբ, ինչը հասարակության դժգոհության արդարացի պատճառ է դարձել: Հրատապ է նաև բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը միտված վերահսկողության ոչ ավանդական մոտեցումների մշակումը և օգտագործումը:

Բնական ռեսուրսների բանական օգտագործման խրախուսման գործող մեխանիզմների կատարելագործման համար հիմքը բնապահպանական մենեջմենթի արդյունավետ համակարգի ձևավորումն է: Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, բնապահպանական մենեջմենթի համակարգի արդյունավետության

գնահատման կարևոր գործիք կարող է ծառայել նաև բնապահպանական վերահսկողությունը: Եթե զարգացած երկրներում բնապահպանական վերահսկողությունը դարձել է տնտեսության բարելավման և շրջակա միջավայրի պահպանության համակարգում կառավարման արդյունավետ իրավական գործիք, ապա ՀՀ-ում այդ ուղղությամբ իրականացված աշխատանքները դեռևս չեն ապահովում շոշափելի բնապահպանական վերահսկողության էֆեկտ:

Վերջին տարիների համաշխարհային տնտեսական զարգացման օրինաչափությունների ուսումնասիրմանը նվիրված գիտական հետազոտությունները կողմնորոշված էին հիմնականում այնպիսի առանցքային հիմնախնդիրների լուծմանը, որոնք կապված են կայուն զարգացման և «կանաչ» էկոնոմիկայի մոդելի անցման մարտահրավերների հետ: Դա նորագույն էկոնոմիկայի կայացման բավականին բարդ և գիտահենք ժամանակահատված է, որի շրջանակներում իրականացված տարբեր երկրների պետական նախաձեռնությունները ունեցան և առաջընթաց, և որոշակի բացթողումներ՝ պայմանավորված նրանց անհավասար մեկնարկային իրավիճակով:

Գլոբալ մասշտաբով ծառայած հիմնախնդիրների լուծումը և հետագա զարգացման կանխատեսումային գնահատումները անցան քննարկումների բազմափուլային ճանապարհ «Rio + 5» → «Rio + 10» → «Rio + 20» քաղաքական նախաձեռնությունների/գործողությունների ներքո: Նպատակահարմար է անդրադառնալ այնպիսի խնդիրների վերլուծությանը և մեկնաբանմանը, որոնք առ այսօր չեն կորցրել արդիականությունը տնտեսական գործունեության էկոլոգիական կարգավորման և բնապահպանական վերահսկողության հարցերի շուրջ: Դրանք առավել նկատելի են զարգացող երկրներում, այդ թվում՝ նաև Հայաստանում: Այս համատեքստում բեկումնային կարելի է համարել «կանաչ» մակրոտնտեսական ցուցանիշների մշակումը և ներդրումը, ինովացիոն տեխնոլոգիաների զարգացումը, իրավիճակային գնահատման մեթոդաբանության նորացումը այնպիսի ցուցանիշներով, որոնք վերաբերում են տնտեսական գործունեության էկոլոգիական

անվտանգության ապահովմանը: ²² Նման խնդիրների կարգավորումը, ըստ էության, անբաժանելի է շրջակա միջավայրի էկոլոգիական որակի կառավարման և վերահսկողության ոլորտից:

Գիտական ուսումնասիրություններից հետևում է, որ, եթե կառավարման համակարգի բարեփոխումները գրանցել են որոշակի առաջընթաց, ապա տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության ոլորտում ինչ-որ տեղ «նահանջ» է դիտվում: Էկոլոգիական վերահսկողությունը կարծես դուրս է մնացել բնապահպանական գիտության շրջանակներից, թեև «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի (2005թ.) համաձայն՝ պետական տեսուչի աշխատանքը կատարվում է նաև ուսումնասիրությունների, բացատրությունների/խորհրդատվությունների միջոցով (հոդ. 26): Հեղինակի կարծիքով այստեղ ավելի արդյունավետ և ազդեցիկ կլիներ էկոլոգիական աուդիտի մեթոդական մոտեցումների կիրառումը և ստուգման/ուսումնասիրության գործընթացների նոր մեթոդների որոնումը:

Տնտեսական գործունեության էկոլոգիական կարգավորման արդի ուսումնասիրություններում առավել ուշագրավ են այն խնդիրները, որոնցում շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման հարցերը ստանում են գիտական նոր մարմնավորում: Հետաքրքիր և հեռանկարային է, օրինակ, միջճյուղային հաշվեկշռի մոդելի հիման վրա էկոլոգիական խախտումներից առաջացած վնասների գնահատման մեթոդական մոտեցումը: ²³ Մշակված մոդելի միջոցով տնտեսական արդյունքի վրա շրջակա միջավայրի որակի ազդեցության հաշվառմամբ հնարավոր դարձավ որոշել ազդեցությունը ուղղակի ծախսերի գործակիցների վրա այն դեպքերում, երբ փոխվում է միջավայրի վիճակը: Փաստորեն դրանով որոշվում է էկոնոմիկայի արձագանքը էկոլոգիական իրավիճակի նկատմամբ և գնահատվում է եկամտի չստացված մասը՝ կապված շրջակա միջավայրի աղտոտման հետ: Ընդ որում, ոչ լրիվ եկամուտը դիտվում է

²² Шаров Ю. Некоторые аспекты эколого-экономического анализа в обеспечении устойчивого развития.//.Экономика природопользования–N2.– М.-2000.-с. 19-30

²³ Рюмина Е.В., Имитационные расчеты дохода как ущерб от экологических нарушений // Экономика природопользования. 2015.-N4.-с. 31-35.

որպես ստացված և փաստացի վերջնական արդյունքի տարբերությունն ու որոշում է շրջակա միջավայրի աղտոտման վնասի մասը: Հեղինակի կարծիքով գիտական հիմնավորման կարիք ունի վնասի առանձնացումը միջճյուղային մատակարարման մատրիցում: Հեղինակը համարում է, որ երկրի ՀՆԱ-ի նկատմամբ 3-6,5%-ի չափով չստացված եկամուտը անհիմն ձևով կրկնակի անգամ հանվում է ՀՆԱ-ից նրա էկոլոգիական շտկման ընթացքում:

Բազում հետազոտություններում դեռևս գերիշխում է եզրույթը առ այն, որ մի շարք զարգացած և զարգացող երկրներ, հոչակելով կայուն էկոլոգատնտեսական զարգացման անցումն, այնուամենայնիվ, պահպանում են զարգացման անկայուն միտումները, որոնք ուղեկցվում են բնատարողության ցուցանիշների բարձր մակարդակով, բնակչության անթրոպոգեն էկոլոգիական հիվանդությունների աճով, էկոհամակարգային ծառայությունների արժեքների թերագնահատմամբ և սոցիալ-տնտեսական զարգացման կախվածությամբ՝ բնական ռեսուրսների արտահանման ծավալներից: ^{24, 25} Դա նշանակում է, որ էկոնոմիկայի էկոլոգացման հիմնախնդիրը շարունակում է մնալ գլոբալ բնապահպանական ռազմավարության գերակայությունների շարքում՝ փորձելով վերահաստատվել «կանաչ» էկոնոմիկայի գաղափարախոսության սկզբունքների իրականացման հրատապությունը դեկապլինգի էֆեկտին հասնելու միջոցով: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի ապահովել սոցիալ-տնտեսական բարեկեցության աճի այնպիսի մակարդակ, որը ուղեկցվում է ռեսուրսաօգտագործման ցածր տեմպերով և շրջակա միջավայրի դեգրադացման նվազեցմամբ:

Նման էկոլոգատնտեսական առաջնային երաշխիքներից մեկը տեխնոլոգիական ինովացիոն/նորամուծական գործունեության ակտիվացումն է տնտեսական գործունեության գրեթե բոլոր ճյուղերում: Դրա միջոցով հնարավոր կլինի ստեղծել համապատասխան ինստիտուցիոնալ կառույցներ

²⁴ Ляпина А.А. Тенденции макроэкономического развития на основе экологических данных // Экономика природопользования.-2000.-N 1.-с. 11-32.

²⁵ Гусев А.А. Соотношение рентных доходов и платежей в сфере использования биологических ресурсов // Экономика природопользования.-2002.-N 5.-с. 9-21.

էկոլոգատնտեսական զարգացման անցման, «կանաչ» էկոնոմիկայի պայմանների ձևավորման և դեկապլինգի գործընթացների հաստատման համար:

Ամենևին պատահական չէ այն հանգամանքը, որ էկոլոգատնտեսական բարեփոխումների ակնկալման գործընթացներում տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգերի կատարելագործումը գիտական նոր երանգ է ստացել: Այսպես, դեկապլինգ գործընթացներում անհրաժեշտ է նորովի իմաստավորել էներգախնայողության և նյութատարողության/բնատարողության դերը «էկոլոգիական հետքի» հաշվառման, «back-stop» տեխնոլոգիաների զարգացման, հետագա նորացման խնդիրները բնապահպանական ուղղվածության ժամանակակից գերակայություններում: ²⁶, ²⁷ Պետք է նշել, որ «կանաչ» էկոնոմիկայի անցման՝ տնտեսության էկոլոգացման ժամանակակից ուսումնասիրություններում, առավել գրավիչ է գիտության կողմնորոշումը այն խնդիրների նկատմամբ, որոնք կապված են էկոլոգիական վնասների գնահատման, էկոլոգիական հանցագործությունների պատասխանատվության, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների դրամական հատուցման, բնօգտագործման լիցենզավորման և այլ հարցերի հետ: Ուսումնասիրություններում արդիականացվել է բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման համալիր խնդիրների լուծումը:

Ուսումնասիրությունների արդյունքների ամփոփումից հետևում է, որ մի շարք երկրներում, հատկապես նորանկախ պետություններում, այդ թվում նաև Հայաստանում, էկոլոգիական խնդիրների բազմությունը և բարդությունը, էկոլոգիական անվտանգության ապահովման օրենսդրության անկատարությունը/անարդյունավետությունը պահանջում է նոր օրենսդրական ակտերի ու իրավակիրառման մեխանիզմների ստեղծում ու ներդրում բնապահպանական օրենսդրության

²⁶ ЕЭК ООН. Обзор инновационного развития Республики Армения. ООН Нью-Йорк и Женева, 2014-169с.

²⁷ Stamm A., Dantas E., Fischer D., Canguly S., Rennkamp B. Sustainability oriented innovation systems. Towards decoupling economic growth from environmental pressures. DIE Research Project “Sustainable solutions through research.”-Deutsche Institut für Entwicklungspolitik. 2009.-44 p.

խախտման և էկոլոգիական հանցագործությունների կանխման/պրեվենցիայի ապահովման տեսանկյունից:^{28, 29, 30}

Այս կապակցությամբ տեղին է նշել առաջընթացի մասին, որը բնորոշ է ԱՄՆ-ում գործող էկոլոգիական հանցագործությունների դիմաց քրեական պատասխանատվության սահմանման օրենսդրությանը: Առանձնացված են քրեական պատասխանատվության երկու կատեգորիաներ՝ ծանրագույն և այլ, որոնք չեն վերաբերում առաջինին: Ընդ որում, ծանրագույնի դեպքում կիրառվում է պատժի ծանրագույն միջոցը (տուգանք 200 հազ. ԱՄՆ դոլ. չափով կամ 15 տարով ազատազրկում կամ երկուսը միասին): Երկրորդ կատեգորիայի համար նախատեսված է ինչպես տուգանք, այնպես էլ մեկ տարի ազատազրկում: Հիմնական կառույցներն են Շրջակա միջավայրի պահպանության դաշնային գործակալությունը – EPA և Արդարադատության նախարարության քրեական հանցագործության դեմ պայքարի դեպարտամենտը (DJECS):

Այստեղ առավել ազդեցիկ հանգամանք է քրեաիրավական պատասխանատվության անխուսափելիությունը՝ որպես ցանկացած էկոլոգիական հանցագործության զսպման գործոն: Հակառակ դեպքում, երբ որ արդիականացվում է հիմնականում քրեաիրավական սանկցիայի չափսը, եկամուտները կարող են բազմակի անգամ գերազանցել վճարված տուգանքը (երևույթ, որ բնութագրական է Հայաստանի քրեաիրավական և բնապահպանական վերահսկողության, շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման ոլորտներին): Ենթադրվում է, որ տուգանքային սանկցիաների, ինչպես նաև քրեական պատժի ժամկետների մեծացումն կարող է որոշակի հետաքրքրություն առաջացնել ՀՀ-ի շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման քրեաիրավական քաղաքականության կատարելագործման տեսանկյունից և, վերջապես, օրինակելի է քաղաքական այն փաստը, համաձայն որի ԱՄՆ-ում էկոլոգիական հանցագործության հասարակական վտանգը որոշվում է հիմնականում բնակչության

²⁸ Darrel L. Ross // *Civil Liability in Criminal Justice*, Sixth Edition.-2013.-p. 231.

²⁹ Thomas J. Gardner, Terry M. Anderson // *Criminal law*, Tenth Edition, 2009.-p. 448:

³⁰ Lipski S. Private Ownership for Agricultural Lands: Advantages and Disadvantages (Experience of Two Decades // *Studies on Russian Economic Development*. 2015.-vol.26.-No1, p. 63-99.

առողջության վրա ազդեցության էկոլոգիական վնասի և վտանգի գնահատման միջոցով: Կարևորվում է այն վնասի հատուցումը, որը պատճառվում է բնակչության առողջությանը: Ցավոք, այս մոտեցումները գրեթե անտեսված են ՀՀ-ի ինչպես էկոլոգիական, այնպես էլ առողջապահական քաղաքականության հիմնադրույթներում:

1.3. Բնապահպանական վերահսկողության օրենսդրական կարգավորումը և մեթոդական ապահովումը

Բնապահպանական ռազմավարության արդի գիտական վերլուծություններն ու գնահատումները վկայում են այն մասին, որ սկսած 1991թ. «Շրջակա միջավայր Եվրոպայի համար» ՄԱԿ-ի ԵՏՀ հանրահայտ գործընթացից մինչև 2015թ. կլիմայի փոփոխության Փարիզյան համաձայնագրի մշակումը, իրականացված քաղաքական բարեփոխումները ունեցան զգալի առաջընթաց: ³¹. ³². ³³ Չխորանալով հանրահայտ գիտական և փորձագիտական մեկնաբանումների մեջ՝ նպատակահարմար է անդրադառնալ ատենախոսության թեմատիկ ուղղվածության այն խնդիրներին, որոնք կապված են բնապահպանական ու բնօգտագործման կառավարման, էկոլոգիական հսկողության և իրավակիրառման, բնապահպանական թույլտվությունների համակարգի կատարելագործման հետ: Այդ հարցերի դիտարկումը ԱԵԿԿԱ երկրների շրջանակներում ցույց տվեց, որ բնապահպանական օրենսդրական համակարգը զարգանում է բավականին արագ և կողմնորոշված է հիմնականում միջազգային ստանդարտների, հատկապես՝ ԵՄ օրենսդրության վրա: Սակայն առկա է օրենսդրական բարեփոխումների անհամակարգվածության գործոնը, որը առավել նկատելի է տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության և իրավակիրառման, նախագծերի փորձագիտական գնահատման մեթոդաբանության ոլորտներում:

ՀՀ-ի բնապահպանական օրենսդրության բարեփոխումները առավել նկատելի են վերջին 15-20 տարիների ընթացքում: Օրենսդրական դաշտի նորացումը և

³¹ ՀՀ / «Rio+20», Ազգային գնահատման զեկույց., Երևան.-2012.- էջ 40-45

³² Меры по улучшению экологической политики. Прогресс в регионе Восточной Европы, Кавказа и Центральной Азии. ОЭСР.-2007.-с.24-32

³³ Местная повестка дня на XXI век на Кавказе. Проблемы и вызовы. РЭЦ Кавказ. 2007.-Тбилиси.-50 С.

կատարելագործումը ընդգրկեց բնապահպանության և բնօգտագործման ազգային էկոլոգիական քաղաքականության և ռազմավարության գործողությունների գրեթե բոլոր հիմնարար ուղղությունները: Տեղին է նշել, որ 27 ընդունված բնապահպանական օրենքների կիրառման նպատակը շրջակա միջավայրի էկոլոգիական որակի, բնառեսուրսային ներուժի կայունության, բնակչության առողջության և էկոլոգիական անվտանգության ապահովումն է: ³⁴ Օրենքների կիրառման պրակտիկան ցույց տվեց, որ դեռևս օրակարգային է մնում իրավական ակտերի գործնական իրականացման մեխանիզմի կատարելագործման հրատապությունը, հատկապես այն հարցերի շուրջ, որոնք վերաբերում են էկոլոգիական վերահսկողությանը, բնապահպանական թույլտվությունների համակարգի գործիքակազմի ընդլայնմանը, ինչպես նաև՝ ՇՄԱԳ գործընթացի նորմատիվա-մեթոդական բազայի հստակեցմանը:

Ակնհայտ է, որ այդ խնդիրների լուծումը պահանջում է համալիր/համակարգային մոտեցում, որը տնտեսական գործունեության էկոլոգացման տեսանկյունից պետք է բարձրացնի բնական ռեսուրսների օգտագործման էկոլոգիական արդյունավետությունը, ուժեղացնի ցանկացած տնտեսվարող սուբյեկտի էկոլոգիական պատասխանատվությունը բնապահպանական պահանջների պահպանման նկատմամբ: Գիտական հետազոտություններում արդեն իշխում է կարծիքն առ այն, որ էկոլոգիական պատասխանատվության խախտումները հատկապես ակնառու են էկոլոգիական վնասների գնահատման (կամ գնահատման անտեսման) կիրառվող մեթոդաբանության անկատարության տեսանկյունից: Այս երևույթը նկատելի է նաև Հայաստանի բնապահպանական փորձաքննության համակարգում, ինչը որոշակի դժվարություն է ստեղծում հետագա տեսչական աշխատանքների կատարման ընթացքում: Հետևաբար, տնտեսական գործունեության էկոլոգացման և բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործումը պետք է կողմնորոշված լինի՝

- օրենսդրական և իրավական խելամիտ բարեփոխումների,

³⁴ ՀՀ բնապահպանության նախարարություն: Նախարարական զեկույց 2007-2011: Երևան. 2011.- էջ 94-95


- տնտեսվարող սուբյեկտների / առանձին ձեռնարկությունների էկոլոգիական վարկանիշի ամրապնդմանը ու ներքին արտադրական հսկողության արդյունավետության և հաշվետվության որակի բարձրացմանը,

- տեսչական տարածքային կառույցների ներգործության և իրավակիրառման մեխանիզմի գործիքակազմի կատարելագործմանը,

- կադրային ապահովման խնդիրների կարգավորմանը:

Այս տեսանկյունից տեղին է անդրադառնալ 2005թ. ընդունված «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթներին: Համաձայն հոդված 1-ի՝ օրենքը «կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության նորմերի նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները», ինչպես նաև՝ «դրանց հետ կապված հարաբերությունների և բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը»: ³⁵ Օրենքը ընդգրկում է մի շարք հոդվածներ, որոնք վերաբերում են բնապահպանական պետական համակարգին, տեսուչների պաշտոնների դասակարգմանը, իրավասություններին և պարտականություններին (գլուխ 3, հոդ. 10-14), ինչպես նաև՝ պետական բնապահպանական տեսչության գործունեության ապահովման առանձնահատկություններին (գլուխ 4, հոդ. 15-21): Ուշագրավ է հատկապես օրենքի 5-րդ գլուխը, որտեղ հոդ. 22-31 մանրամասն ներկայացված է բնապահպանական վերահսկողության իրականացումը՝ ըստ հիմնական ուղղությունների (գծապատկեր 1. 3. 1):

³⁵ Հայաստանի Հանրապետության էկոլոգիական իրավունք (իրավական ակտերի ժողովածու) – 2009.- էջ 382-403



Գծապատկեր 1. 3. 1.

Բնապահպանական վերահսկողության հիմնական ուղղությունները ³⁶

Վերահսկողության ուղղությունները հիմնականում ներդաշնակ են բնապահպանական և բնօգտագործման գործունեության ոլորտներին, սակայն ինչ-որ չափ անհասկանալի է ցանկում բնապահպանական փորձաքննության համակարգի ընդգրկումը: Վերջինը, ըստ էության, տնտեսական և գործունեության այլ տեսակների նախագծերի գնահատման ընթացքում ինքնուրույն վերահսկողություն է իրականացնում ՇՄԱԳ-ի որակի նկատմամբ և որոշում է կայացնում տնտեսական գործունեության նախագծերի իրականացման վերաբերյալ: Ավելին, ստուգումների և ուսումնասիրությունների ցուցանիշների թիվը սահմանափակ է, և տեղեկատվությունը դրա մասին համակարգված չէ հատկապես բնապահպանական փորձաքննության մասով: ՀՀ-ում մեթոդապես առանձնացված են բնապահպանական վերահսկողության ավանդական հետևյալ ցուցանիշները՝

- ստուգված օբյեկտների թիվը, հաստ

³⁶ Մշակվել է հեղինակի կողմից:

- ստուգված օբյեկտներում հայտնաբերված խախտումների թիվը, հատ
- կենսապաշարների ոլորտում հայտնաբերված բնախախտումների թիվը, հատ
- Ստուգումների, ստուգայցերի արդյունքում կազմված վարչական տուգանքների թիվը, հատ
- վարչական տուգանքների գումարը, մլն դրամ
- ստուգման արդյունքում հաշվարկված շրջակա միջավայրին պատճառված վնասի չափը, մլն դրամ:
 - բնապահպանական պատժամիջոցներից պետբյուջե գանձված գումարները, մլն.դրամ
 - բնապահպանական և բնօգտագործման հաշվարկված վճարները, մլն.դրամ
 - բնապահպանական և բնօգտագործման վճարներից պետբյուջե մուտքերը, մլն.դրամ:³⁷

Ելնելով տեսչական վերահսկողության ցուցանիշների ցանկից և բնույթից՝ տեսչական ստուգումների և ուսումնասիրությունների ամբողջական գործընթացը սխեմատիկորեն կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպում → խախտումների հայտնաբերում → էկոլոգիական օրենսդրության խախտումների դրամական գնահատում → բյուջեփային մուտքերի ապահովում

Տեսչական գործողությունների սխեման բավականի պարզ և հիմնականում հարկադրական բնույթի է: Ինչ վերաբերում է ստուգման ցուցանիշների ընտրությանը, ապա կարելի է փաստել, որ ՀՀ-ում տեսչական վերահսկողությունը և նրա մեթոդաբանությունը խիստ ավանդական բնույթի է, ինչը պահանջում է անցնել էկոլոգիական հսկողության համակարգում ժամանակակից նոր ինդիկատորների կիրառմանը և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացմանը: Ենթադրվում է, որ բացի տեսչական հսկողության հարկադրական մեխանիզմից, նպատակահարմար է ներդնել նաև էկոլոգիական աուդիտի ստուգողական/խորհրդատվական մեխանիզմը և մեթոդաբանությունը, որը կարող է զգալիորեն բարելավել տեսչական ստուգումների և ուսումնասիրությունների

³⁷ ՀՀ բնապահպանության նախարարություն: Նախարարական զեկույց, 2007-2011. Երևան,-էջ 32-34

արդյունքը: Մասնավորապես, հնարավոր կլինի բնապահպանական և բնօգտագործման վճարների «հետադարձ էֆեկտի» որոշման մեջ ավելի իրական դարձնել վնասների գնահատումը, հիմնավորել յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտի / ձեռնարկության էկոլոգիական քաղաքականության գերակայությունները: Դրանով կհարստանա ստուգման գործընթացի մեթոդաբանությունը բարձր ռիսկերով, վնասներով ու վտանգներով գործող արդյունաբերական ձեռնարկություններում: Ավելի առարկայական կդառնան նաև ստուգումները բնապահպանական ծախսերի նպատակային օգտագործման ոլորտում:

Էկոլոգիական աուդիտը միաժամանակ կարևորում է մեթոդական լծակների ներդրումը տնտեսական և գործունեության այլ տեսակների նախագծերի բնապահպանական փորձաքննության համակարգում:

Հայաստանի բնապահպանական փորձաքննության համակարգում այդ բացթողումը առավել նկատելի է, քանի որ սկսած 1995թ. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ազգային օրենքի ընդունումից մինչ 2014թ. նոր օրենքի՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ընդունումը, ոլորտում կիրառվող գնահատման մեթոդաբանությունը մնաց անփոփոխ: Հետևաբար ՇՄՍԳ-ի ցուցանիշների կատարելագործման հիմնախնդիրը պահպանում է արդիականությունը, հատկապես բնապահպանական վերահսկողության համակարգում: Ենթադրվում է, որ այստեղ անելիքները բազմազան են նաև փորձաքննական ինովացիաների ներդրման մասով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» նոր օրենքի առավել գնահատելի կողմերից կարելի է համարել ՇՄՍԳ գործընթացի և բնապահպանական փորձաքննության գործառույթների համատեղելիությունը, նախագծերի դասակարգման սկզբունքների հստակեցումը ըստ կատեգորիաների, հասարակության մասնակցության խնդիրների արդիականացումը և հասարակական առողջության վրա ազդեցության գնահատման պարտադիրությունը: Սակայն անփոփոխ է մնում իրավակիրառման մեխանիզմը, իսկ ավելի ստույգ՝ այն գրեթե անգործունակ է:

իրավակիրառման մեխանիզմի անկատարությունը և ուժեղացման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ-ի քրեական դատավարության օրենսգրքից (ընդունվել է 1998թ. հուլիսի 1-ին, ՀՀՊՏ 1998.09.81/22(55), ՀՕ-248), «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսդրության փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքից (բնապահպանության և բնօգտագործման մասով (ընդ. 11.12.2002թ.), «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագնի մասին» ՀՀ օրենքից և այլ օրենսդրական և իրավական ակտերից:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը աչքի է ընկնում հատկապես բնապահպանական պետական տեսչության, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների և ստուգվող սուբյեկտների պատասխանատվության գործոնի ուժեղացման (գլուխ 8, հոդ. 38), հասարակայնության հետ փոխհարաբերությունների կարգավորման և գործունեության թափանցիկության ապահովման մասով (գլուխ 7, հոդ. 37): Հստակություն է նկատվում նաև իրավակիրառման վերջնական արդյունքում, մասնավորապես ստուգվող սուբյեկտների գործողությունների դադարեցման, կասեցման և արգելման հարցերում (գլուխ 5, հոդ. 29): Դրա հետ կապված արդիականանում է լիցենզիաների վերանայման, ստուգումների իրականացման հաճախականությունը, իրավակիրառման մեխանիզմի կատարելագործումը, փորձանմուշների ընտրությունը և դրա հետ կապված շրջակա միջավայրին սպառնացող ռիսկերի գնահատումը: Այս տեսանկյունից չափազանց կարևոր է ինդիկատորների ընտրությունը և դրանց գնահատման մեթոդաբանության որոշումը (օրինակ, Դելֆիի և «մտավոր գրոհի» մեթոդներով):

Ազգային տեսչական պրակտիկայում ավելի հաճախ հետևում են կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը կամ դրանց հնարավորինս դադարեցմանը ու կանխմանը: Սակայն այդ ռիսկերի կանխումը կամ դադարեցումը գնահատման համապատասխան մեթոդական մոտեցումների, չափորոշիչային ցուցանիշների և տեղեկատվական բազայի բացակայության պայմաններում անհավանական է:

Հետևաբար, գերադասելի է ռիսկերի և օրենսդրության մատրիցների մշակումը և ներդրումը: Դրա կարևորությունը միանշանակ է, քանի որ օրակարգում է «Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ» ինքնահսկում իրականացնելու մասին ՀՀ օրենքի հիմնադրույթների գործածությունը: Ենթադրվում է, որ արդյունքում հնարավոր կլինի ապահովել ինքնահսկման վերաբերյալ տեղեկատվական թափանցիկությունը, ինչպես նաև ստուգումների հաճախականության կրճատումը: Սա ևս մեկ անգամ հաստատում է էկոլոգիական աուդիտի համակարգի ներդրման և մեթոդաբանության օգտագործման ռազմավարական նշանակության ՀՀ տնտեսական գործունեության էկոլոգիական վերահսկողության / իրավակիրառման մեխանիզմի կատարելագործման և ուժեղացման անհրաժեշտության մասին:

Դրա համար հրատապ է ՀՀ-ում «Շրջակա միջավայրի մասին» ՀՀ մայր օրենքի ընդունումը, որը ավելի առարկայական կդարձնի պետական նախաձեռնությունները շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման, պետական տեսչական ծառայության ղրրտներում: Օրակարգային է նաև «Էկոլոգիական աուդիտի մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը կարող է հաջողությամբ համալրել տեսչական գործունեության ներկայիս օրենսդրական դաշտը և ավելի արդյունավետ դարձնել իրավակիրառման մեխանիզմը: Այս համատեքստում ուշագրավ են բնապահպանության պետական տեսչության գործունեության դրական և բացասական կողմերի համառոտ վերլուծության արդյունքները 2004-2016 թթ կտրվածքով (աղյուսակ 1.3.1):

2004-2016թթ. ՀՀ-ում բնապահպանական պետական տեսչության գործունեության դրական և բացասական կողմերի վերլուծության արդյունքները

ՀՀ բնապահպանական պետական տեսչության գործունեության	
Դրական կողմերը	Բացասական կողմերը
1.«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի ընդունում	1. Տեսչական ծառայության խիստ ավանդական բնույթը և իրավական մեխանիզմի անկատարությունը
2. «Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում իրականացնելու մասին» ՀՀ օրենքի ընդունում	2. Իրավախախտումների հայտնաբերման և վնասների հատուցման զուտ հարկադրական/պատժիչ բնույթը
3. Մշակվել, ներդրվել և կիրարկվում է ստուգման արդյունքների ամփոփման միասնական փաստաթղթերի փաթեթ	3. Էկոլոգիական հսկողության ժամանակակից ինդիկատորների բացակայություն
4.Ներդրվել է ստուգման ամբողջ գործընթացի կազմակերպման ինտերնետային տարբերակ	4.Ստուգման գործընթացի մեթոդաբանության անկատարություն, հատկապես ռիսկերի և վնասների գնահատման մասով
5.Տնտեսվարող սուբյեկտների կողմից տեսչություն ներկայացվող պարտադիր հաշվետվության ընդունումը էլեկտրոնային տարբերակով	5.Կոռուպցիոն ռիսկերի որոշման չափորոշիչների բացակայություն
6.Ստուգման գործընթացի արդյունավետության բարձրացում ըստ բնապահպանական իրավախախտումների հայտնաբերման և բյուջետային մուտքերի բարձրացման ցուցանիշների	6. Տեսչական ծառայության և բնապահպանական փորձաքննության իրավասությունների սահմանազատման բացթողումներ («Երկակի հսկողության» ֆենոմենի դրսևորում)
7. Կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը ուղղված և բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկման / իրականաց- ման օրենսդրական ակտերի մշակում	7. Տեսչական ծառայության կարգավորման տեղեկատվական համակարգերի ներքին կառուցվածքի անկատարություն
8. Տեսուչների համար որակավորման բարձրացման դասընթացների մշտական կազմակերպում	8. Բնապահպան տեսուչների և փորձագետների պատրաստման հանդեպ ուշադրության / պահանջարկի անկումը բուհական համակարգերում
9.Տեսչությունում օնլայն կապի ներդրում և տարածքային բաժինների հետ փոխներգործության ակտիվացում	

Բացի այդ, տեսչական ստուգման գործընթացի պարամետրերի ընտրությունը հաճախ գիտականորեն հիմնավորված չէ, ինչը անարդյունավետ է դարձնում իրավակիրառման ներկայիս գործիքները: Դա առանձնապես նկատելի է տույժ / տուգանքների սահմանման, օրենսդրության խախտումների հատուցման գումարների որոշման պարագայում (օրինակ, կենդանական և բուսական աշխարհի առանձին տեսակներին պատճառված վնասների հատուցման սակագների որոշման դեպքերում): Տեղին է նշել, որ դեռևս 1993թ. **OECD-ի «Environmental indicators for environmental performance reviews»** փաստաթղթում նման չափորոշիչները վերաբերում են «իդեալական» ինդիկատորին, որի կիրառման անհրաժեշտությունը արդեն իսկ հաստատված է բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման տեսանկյունից: Ենթադրվում է, որ դա է պատճառներից մեկը, որ դեռևս պահպանվում է տեսչական և իրավակիրառման գործունեության անարդյունավետությունը:

Տեսչական գործունեության արդյունավետության ինդիկատորները պետք է կապված լինեն նաև մարդկային և ֆինանսական ռեսուրսների, տեսուչների գործունեության խրախուսման և դյուրատար սարքավորումներով ու զենքով ապահովման, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման հետ, հատկապես տեղական մակարդակներում: Այս դեպքում ի հայտ է գալիս նրանց արհեստավարժության մակարդակի նշանակությունը, ինչպես նաև հաշվետվությունների հավաստիության աստիճանը, մասնավորապես վնասների գնահատման և հատուցման գումարների որոշման մասով: Չեն բացառվում նոր բարդություններ «Բնապահպանության վերահսկողության մասին» ՀՀ օրենքի կիրառման դեպքում: Այսպես, օրինակ՝ օրենքի հոդ. 23-ում առանձնացված են բնապահպանական վերահսկողության երկու ձևերը՝ ստուգումներ և ուսումնասիրություններ: Եթե թեմատիկ ստուգումների ընթացակարգը ինչ-որ տեղ համոզիչ է, ապա նույնը դժվար է ասել ուսումնասիրությունների միջոցով վերահսկողության իրականացման կարգի և մեթոդաբանության մասին (հոդ. 26, կետ 1):

Հեղինակի կարծիքով խախտումների հայտնաբերումը, խախտումների

հետևանքների վերացման միջոցառումների (այդ թվում կատարման ժամկետների) նշումը հեռու է «ուսումնասիրություններ» բառի բուն իմաստից, նույնիսկ՝ ավագ պետական տեսուչի «պատշաճ ձևով» նախազգուշացումից հետո: Տվյալ դեպքում ակնհայտորեն երևում է իրավակիրառման մեխանիզմի անկատարությունը և ստուգման մեթոդաբանության «աղքատությունը»:

**ԳԼՈՒԽ 2. ԲՆԱԿԱՇՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ**

2.1 Վերահսկողության համակարգի կառուցվածքն և գործառույթները

Տնտեսական գործունեության ու տնտեսական աճի էկոլոգա-բնապահպանական առանձնահատկությունների ուսումնասիրման արդյունքները անհրաժեշտ պլատֆորմ ստեղծեցին ՀՀ բնապահպանական վերահսկողության համակարգային հարցերի դիտարկման համար: Դա միանգամայն տրամաբանական է և հնարավորություն է տալիս գնահատել վերահսկողության համակարգում բարեփոխումների վերջնարդյունքը, հատկապես «Բնապահպանական վերահսկողության մասին» նոր օրենքի ընդունումից հետո: Այս համատեքստում տեղին է անդրադառնալ վերահսկողության համակարգի կառուցվածքային, տեսչական գործունեության ուղղվածության, նպատակների, խնդիրների, սկզբունքների և այլ համալիր հարցերի համառոտ վերլուծությանն և գնահատմանը:

Համաձայն գործող բնապահպանության օրենսդրության ՀՀ-ում շրջակա միջավայրի պահպանության ոլորտի հիմնական պետական գործադիր մարմինն է ՀՀ բնապահպանության նախարարությունը: Նախարարության կարևոր գործառույթներից է պետական վերահսկողության իրականացումը շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, ընդերքի, հողերի, կենդանական ու բուսական աշխարհի՝ ներառյալ անտառների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, բնական ռեսուրսների բանական օգտագործման ու բնապահպանական օրենսդրության նորմերի/պահանջների պահպանման և էկոլոգիական անվտանգության ապահովման բնագավառներում:


Ինչպես արդեն նշվեց՝ ՀՀ-ում բնապահպանական վերահսկողությունը իրականացվում է համաձայն «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի (2005թ), որը մշակվել է՝ հիմք ընդունելով **OECD-ի EAP Task Force**

հանձնախմբի ղեկավար սկզբունքները: Այն կարգավորում է բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները, սահմանում է վերահսկողության կարգերի, պայմանների և դրանց հետ կապված հարաբերությունների իրավական ու տնտեսական հիմքերը: Դրան նպաստեցին նաև ՀՀ ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքում որոշ սահմանափակումների վերացման հետ կապված փոփոխությունները:³⁸

Բնապահպանական վերահսկողությունը իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարության համակարգում գործող Բնապահպանական պետական տեսչությունը, որը 2004թ-ից ենթարկվեց զգալի կառուցվածքային փոփոխությունների: Այսպես, ՀՀ բնապահպանական տեսչական միասնական համակարգից հանվեց աստմային էներգիայի օգտագործման միջուկային և ռադիացիոն անվտանգության տեսչությունը՝ ընդգրկելով այն ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կազմում: Մոնիթորինգային ծառայությունները, իրենց հերթին, փոխանցվեցին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը: Երկրորդ փոփոխությունը մեր կարծիքով այնքան էլ համոզիչ չէ, քանի որ առաջատար միջազգային փորձը միանշանակ վկայում է այն մասին, որ շրջակա միջավայրի մոնիթորինգը ցանկացած երկրի բնապահպանական կառավարման և հսկողության մեխանիզմի կարևոր գործիք է: Ավելին, մոնիթորինգային տվյալները և տեսչական ստուգման տվյալները ֆունկցիոնալ առումով հզոր տեղեկատվական աղբյուր են տեսուչների իրավիճակային գնահատման համար:

Ներկայումս բնապահպանական պետական տեսչությունը ունի հետևյալ կառուցվածք (գծապատկեր 2. 1. 1):

³⁸ ՀՀ բնապահպանության նախարարություն: Նախարարական զեկույց. 2003-2005թթ. Երևան, 2006, էջ 62



Գծապատկեր 2. 1. 1

«ՀՀ բնապահպանական պետական տեսչության կառուցվածքը»

Առանձնացվել են տեսչական հսկողության տարածքային 9 ստորաբաժանումները, որոնք ներկայացվել են գծապատկեր 2. 1. 2-ում:

ՀԲՊՏ-ն, ըստ էության, բնապահպանական օրենսդրության նորմերի պահպանման ու կատարման նկատմամբ ստուգման իրավասություն ունեցող լիազորված պետական մարմնիստորաբաժանում է: Միաժամանակ, բնապահպանական պետական տեսուչը ոլորտում բնապահպանական օրենսդրության նորմերի պահպանման ու կատարման նկատմամբ ստուգման լիազորություն ունեցող պաշտոնատար անձ է, իսկ տեսչության հիմնական խնդիրներն են՝

- ✓ ՀՀ շրջակա միջավայրի պահպանությանը և բնական ռեսուրսների բանական օգտագործմանն ու դրանց վերարտադրությանը նպաստելը,
- ✓ ՀՀ տարածքում իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից բնապահպանական օրենսդրության պահանջների/նորմերի կատարման նկատմամբ տեսչական վերահսկողության ապահովումը,
- ✓ ՀՀ տարածքային կառավարման մարմինների համապատասխան աշխատանքների նկատմամբ վերահսկողության ապահովումը:



Գծապատկեր 2. 1. 2

ՀՀ բնապահպանական պետական տեսչության (ՀԲՊՏ) տարածքային ստորաբաժանումները

Տեղին է նշել նաև, որ բնապահպանական վերահսկողությունը բնապահպանական պետական տեսչության (տեսուչի) կողմից իրականացվող ստուգումն է, որը նպատակաուղղված է՝

- ✓ շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, կենդանական ու բուսական աշխարհի, ներառյալ՝ անտառների ու բնության հատուկ պահպանվող տարածքների ընդհանուր օգտագործմանը,
- ✓ ընդերքօգտագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության տարածքների (ծառեր, թփեր, զբոսայգիներ եւ այլ կանաչ գոտիներ) պահպանությանը, դրանց վերականգնմանը,
- ✓ բնական ռեսուրսների բանական օգտագործման և ընդերքօգտագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության, ինչպես նաեւ կենսական անվտանգության, վտանգավոր նյութերի ու թափոնների անվտանգ գործածությանը, ռադիոակտիվ աղտոտվածությանը,
- ✓ բնապահպանական ու բնօգտագործման (բացառությամբ ընդերքօգտագործման) վճար վճարողների հաշվառման, վճարի օբյեկտ


համարվող փաստացի ծավալների հաշվարկման, վարչական վիճակագրական հաշվետվությունների ներկայացման և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ նորմերի կատարմանը:

Բնապահպանական հսկողությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների գործառույթներ են, որոնք նպատակաուղղված են իրենց ենթակա կառույցների կողմից կամ իրենց տնօրինության տակ գտնվող տարածքներում, ներառյալ՝ ընդհանուր օգտագործման հողային տարածքներում բնապահպանական օրենսդրության պահանջների կատարմանը: Այս ամենում հատուկ նշանակություն ունի ինքնահսկումը կամ արտադրական հսկումը, որը արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների կողմից իրենց գործառույթների եւ գործողությունների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունը ժամանակին հայտնաբերելու եւ հետեւանքները վերացնելու նպատակով ներքին մոնիթորինգի իրականացումն ու տվյալների գրանցումն է:

Որպես բնապահպանական վերահսկողության օբյեկտներ հայտնի են բնօգտագործողները/բոլոր տնտեսվարող սուբյեկտները, ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձինք՝ անկախ նրանց գործունեության բնույթից և ուղղվածությունից: Շրջակա բնական միջավայրի կառավարման և վերահսկողության օբյեկտների և սուբյեկտների միջև կապերի և հարաբերությունների հիմք են հանդիսանում տվյալ ոլորտի նորմատիվա-իրավական ակտերը, այդ թվում՝ օրենքները, կառավարության որոշումները, ինչպես նաև օբյեկտների և սուբյեկտների միջև կնքվող առանձին պայմանագրերը:

ՀՀ-ում «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքի համաձայն ստուգվող սուբյեկտ են համարվում ֆիզիկական ու իրավաբանական անձինք (ներառյալ՝ օտարերկրյա), անհատ ձեռնարկատերեր, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնց գործառույթների ու գործողությունների կատարման համար բնապահպանական օրենսդրությամբ ամրագրված են շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների բանական օգտագործման համար կատարման ենթակա նորմեր:

ՀՀ-ում բնապահպանական վերահսկողության հիմնական խնդիրներն ու սկզբունքները ներկայացվել են ստորև՝ գծապատկերներ 2. 1. 3-2. 1. 4 –ում:



Գծապատկեր 2. 1.3

ՀՀ-ում բնապահպանական վերահսկողության հիմնական խնդիրները

Բնապահպանական վերահսկողության սկզբունքներն են.				
ՀՀ Մահմանադրության օրենքների գերակայությունը, մարդու իրավունքների ազատությունների առաջնայնությունը	Բնապահպանական հիմնախնդիրների լուծման գործում հասարակայնության մասնակցությանն ապահովումը	Օրագրային գործողությունների իրականացումը՝ ըստ գերակա ուղղությունների և առաջնայնությունների	Շրջակա միջավայրի անվտանգության և առաջնայնությունը	Բնապահպանական օրենսդրության միատեսակ կիրառման ապահովումը

Գծապատկեր 2. 1. 4

ՀՀ-ում բնապահպանական վերահսկողության սկզբունքները

Բնապահպանական վերահսկողության լիազոր մարմնի իրավասություններն են՝

- ✓ բնապահպանական պետական տեսչության աշխատանքների համակարգումը և բնապահպանական վերահսկողությունը կանոնակարգող իրավական ակտերի մշակման ապահովումն ու իր իրավասության սահմաններում դրանց հաստատումը
- ✓ բնապահպանական պետական տեսչության աշխատանքային ծրագրերի հաստատումը և կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ընդունումը
- ✓ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավասություններ:

Բնապահպանական վերահսկողությունը ՀՀ-ում իրականացվում է 10 ուղղություններով և ընդգրկում է տեսչական ստուգման գործողություններ ըստ «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի հետևյալ ոլորտների՝.

1. Մթնոլորտային օդի պահպանություն՝

- ✓ մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների թույլտվությունների առկայությունը և այդ թույլտվություններով սահմանված նորմատիվների պահպանումը,
- ✓ կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների վրա ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվների պահպանումը,
- ✓ մթնոլորտային օդն աղտոտող արտանետումների մաքրման և հսկողության համար տեղակայված կառույցների ու սարքավորումների առկայությունը և դրանց կառուցման ու շահագործման ընթացքում մթնոլորտային օդի պահպանության պահանջների ու կանոնների պահպանումը և այլն:

2. Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն՝

- ✓ ջրային ռեսուրսների ինքնակամ և ոչ նպատակային օգտագործման սահմանափակումների պահպանումը,
- ✓ ջրօգտագործման թույլտվություն և ազատ ջրօգտագործում պահանջող ջրօգտագործման իրականացման պահանջների կատարումը,

- ✓ սահմանված չափաքանակներից ավել ջրային ռեսուրսներն աղտոտելու և ջրահավաք ավազաններում ջրային ռեժիմի սահմանափակումների պահպանումը,
- ✓ ջրային ռեսուրսների պետական հաշվառման վարման կանոնների պահպանումը և այլն:

3. Հողերի պահպանություն՝

- ✓ հողերը ջրային և հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, աղակալումից, արտադրական և կենցաղային թափոններով, քիմիական նյութերով աղտոտումից, սողանքներից և հողի վիճակը վատթարացնող այլ ազդեցություններից պահպանելու համար սահմանված սահմանափակումների ու նորմերի պահպանումն ու բնապահպանական միջոցառումների կատարումը,
- ✓ հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանման, պահման և օգտագործման պահանջների պահպանումը,
- ✓ բնապահպանական, ներառյալ՝ բնության հատուկ պահպանվող տարածքների, ընդերքօգտագործման համար տրամադրված հողերի, անտառային և ջրային հողերի օգտագործման համար սահմանված բնապահպանական սահմանափակումների ու նորմերի պահպանումը և այլն:

4. Ընդերքի օգտագործում և պահպանություն՝

- ✓ ընդերքի օգտագործման, պահպանության և ընդերքն օգտագործման տրամադրելու սահմանված պահանջների կատարումը,
- ✓ երկրաբանական ուսումնասիրության, օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման, օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված ստորերկրյա կառույցների շինարարության (ներառյալ՝ տրանսպորտային ուղիների) և արտադրական թափոնների տեղադրման, ինչպես նաև դրանց շահագործման համար սահմանված ընդերքօգտագործման և բնապահպանական պահանջների կատարումը,
- ✓ ընդերքօգտագործման ընթացքում երկրաբանական փաստագրության վարման լիարժեքությունը, արդյունահանված և ընդերքում թողնված օգտակար հանածոների պաշարների հաշվառման իրականացման և տեղեկատվության ներկայացման սահմանված պահանջների կատարումը և այլն:

5. Կենդանական և բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն՝

Կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության համար սահմանված պահանջների կատարումը,

- ✓ վայրի կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների՝ ՀՀ-ից արտահանման, ՀՀ դրանց ներմուծման սահմանված պահանջների պահպանումը,
- ✓ Կարմիր գրքում գրանցված կենդանիների և բույսերի, ինչպես նաև բուսական համակեցությունների պահպանության համար սահմանված պահանջների պահպանումը,
- ✓ կենդանական աշխարհի օբյեկտների վերաբնակեցման, կլիմայավարժեցման և սելեկցիոն նպատակով դրանց օգտագործման համար սահմանված պահանջների պահպանումը,
- ✓ բուսական աշխարհի օբյեկտների կլիմայավարժեցման և սելեկցիոն նպատակներով դրանց օգտագործման համար սահմանված պահանջների պահպանումը,
- ✓ ժամանակակից կենսաբանական տեխնոլոգիաների միջոցով ստացված կենդանի վերափոխված օրգանիզմների օգտագործման պահանջների պահպանումը,
- ✓ բուսական աշխարհի օբյեկտների աճելավայրերի, ինչպես նաև կենդանական աշխարհի օբյեկտների բնակության միջավայրի, բնակավայրերի, միգրացիոն ուղիների պահպանության համար սահմանված պահանջների պահպանումը և այլն:

6. Վտանգավոր նյութեր և արտադրության ու սպառման թափոններ՝

- ✓ Հայաստանի Հանրապետության տարածքում վտանգավոր նյութերի և արտադրության ու սպառման թափոնների (բացառությամբ՝ ռադիոակտիվ) գործածության՝ առաջացման, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման (թափոնի երկրորդային օգտագործում), հեռացման, վնասազերծման, շրջակա միջավայրում դրանց տեղադրման և թաղման համար սահմանված նորմերի պահպանումը,

✓ վտանգավոր նյութերն ու թափոնները ՀՀ-ից արտահանման, ՀՀ դրանց ներմուծման և ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման համար սահմանված պահանջների պահպանումը:

7. Ռադիոակտիվ նյութերով աղտոտվածություն՝

✓ ռադիոակտիվ նյութերով շրջակա միջավայրի աղտոտվածության կանխարգելմանն ուղղված նորմերի ու կանոնների պահպանումը, բացառությամբ ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի:

8. Բնապահպանական պետական փորձաքննություն՝

✓ բնապահպանական պետական փորձաքննական եզրակացության առկայությունը և փորձաքննության ենթարկված փաստաթղթերում ամրագրված բնապահպանական պահանջների ու միջոցառումների կատարումը:

9. Բնապահպանական և բնօգտագործման վճարներ՝

✓ բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողների հաշվառման կարգի պահանջների պահպանումը,

✓ բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների և վճարների հաշվարկման կարգի պահպանումը:

10. Բնապահպանական վարչական վիճակագրություն՝

✓ բնապահպանական վարչական վիճակագրության վարման և ներկայացման կարգի պահպանումը,

✓ բնապահպանական վերահսկողությունն իրականացվում է նաև բնապահպանական օրենսդրությամբ սահմանված պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ:

Հավելենք նաև, որ էկոլոգիական անվտանգության ապահովման տեսանկյունից բնապահպանական վերահսկողության խնդիրն է շրջակա միջավայրի որակը սահմանափակող մակարդակների և նորմատիվների սահմանումը և պահպանումը: Այդ նորմատիվներից հիմնականներն են.

- Սահմանային թույլատրելի խտությունները
- Սահմանային թույլատրելի արտանետումները մթնոլորտ և ջրային միջավայր

- Սահմանային թույլատրելի մակարդակները՝ աղմուկի, վիբրացիայի, էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցության և այլն
- Սահմանային թույլատրելի ծանրաբեռնվածությունը (օրինակ, զբոսաշրջիկների խտությունը հանգստյան գոտում, միավոր արոտավայրին ընկնող անասունների թիվը և այլն):

Նշենք, որ ՀՀ բնապահպանության նախարարության կազմում բացակայում է էկոլոգիական անվտանգության հարցերով զբաղվող որևէ հատուկ ֆունկցիոնալ նշանակության կառուցվածքային ստորաբաժանում: Մնում է ենթադրել, որ էկոլոգիական անվտանգության ապահովմանը կողմնորոշված են ստուգման բոլոր համալիր գործողությունները, որոնք իրականացվում են բնապահպանական պետական տեսչության կողմից:

Բնապահպանական վերահսկողությունը կատարվում է երկու ձևով՝ թեմատիկ ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով՝ սահմանելով նաև դրանց կարգը: Մասնավորապես, թեմատիկ ստուգումը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան ստուգումն է և իրականացվում է հետևյալ կերպ.

✓ Թեմատիկ ստուգումների համար հիմք են համարվում լիազոր մարմնի ղեկավարի հաստատած տարեկան ծրագիրը և լիազոր մարմնի ու իրավաբանական կամ ֆիզիկական անձանց միջև կնքված՝ շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման վերաբերյալ պայմանագիրը:

✓ Հաստատված տարեկան ծրագրին համապատասխան՝ ստուգում իրականացնելու մասին հրամանը տալիս է լիազոր մարմնի ղեկավարը, իսկ հանձնարարագիրը՝ ՀՀ բնապահպանական գլխավոր պետական տեսուչը կամ նրա հանձնարարությամբ՝ տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչը:

✓ Թեմատիկ ստուգումների ընթացքի և ժամկետների համար նախատեսված սահմանափակումները չեն տարածվում թեմատիկ ստուգումների ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ լիազոր մարմնի ղեկավարի հանձնարարականների ըստ ժամկետների կատարման նկատմամբ ստուգման ընթացքի և ժամկետի վրա:

Աշխատանքում վերլուծվել է բնապահպանական վերահսկողության համակարգի զարգացման և կատարելագործման առաջընթացը՝ հիմնվելով 2003-2005թթ. ու 2007- 2011թթ. ՀՀ բնապահպանության նախարարական զեկույցների և վերջին տարիների սեփական ուսումնասիրությունների վրա: Վերլուծություններից պարզվել է, որ բնապահպանական վերահսկողության արդյունքները առավել շոշափելի են «Բնապահպանական վերահսկողությանն մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո: Դրա մասին են վկայում, մասնավորապես բնապահպանական ռիսկեր ունեցող կազմակերպությունների 2009-2011թթ. ստուգման դիմաց տույժերի գումարային աճը (օրինակ, 2009թ. կատարված 725 ստուգումների դիմաց տույժի ընդհանուր գումարը կազմել է 194,87 մլն դրամ, իսկ 2010թ. 386 ստուգումների արդյունքում կիրառվել են 214,78 մլն դրամ գումարի տույժեր):³⁹ Պետք է ենթադրել, որ բնապահպանական վերահսկողությանն համակարգը ՀՀ-ում գործում է տեսչական աշխատանքի վերջնարդյունքի գնահատման հետևյալ սկզբունքով՝ ***ստուգումների քանակի կրճատումը բնապահպանական իրավախախտումների քանակի և տույժերի, ինչպես նաև վնասների հատուցման գումարի աճի միջոցով կարող է ապահովել տեսչական աշխատանքի արդյունավետության աճ:***

Առաջին մոտեցմամբ տեսչական գործունեության գնահատման նման «բնապահպանական տրամաբանությունը» ընդունելի է, սակայն հիմնավորված չէ, քանի որ ցուցանիշներից ոչ մեկում քանակապես չի գնահատվում ռիսկը և դրանից բխող վտանգի հավանականությունը: Այստեղ կարելի է համաձայնել միայն եզրույթը առ այն, որ տեսչական աշխատանքների արդյունքում հայտնաբերված խախտումների հաշվառումը (մեր կարծիքով նաև ամբողջ գործունեությունը) կրում է խիստ «ավանդական» բնույթ: ⁴⁰ Բացի այդ, համաձայն 2003-2005թթ-ի նախարարական զեկույցի 2005թ. միջին հաշվով մեկ դեպքի համար վնասի չափը 52,0 հազար դրամից աճել է մինչև 505,0 հազար դրամի: Աճի նման «թռիչքը» տպավորիչ չէ, եթե հայտնի չէ վնասի տեսակը, գնահատման մեթոդը և

³⁹ ՀՀ բնապահպանության նախարարություն: Նախարարական զեկույց. 2007-2011թթ. – Երևան, 2011. – էջ 33

⁴⁰ ՀՀ օրենք «Բնապահպանական վերահսկողության մասին»: Հոդված 4, 12, 13 (ընդ. 2005թ. ապրիլի 11)

նորմատիվային ցուցանիշը: Ընդ որում՝ նորմատիվային ցուցանիշների վերանայումը, նորերի մշակումը և հաստատումը մնում է օրակարգային ու առ այսօր չլուծված: Նման դեպքերում առավել բարդանում է **«տնտեսվարող սուբյեկտ- տեսչական վերահսկողություն»** համակարգում իրավակիրառման մեխանիզմի օբյեկտիվ և գրագետ օգտագործումը:

Համաձայն 2007-2016թթ-ի նախարարական զեկույցի, տեսչական գործունեության որոշակի ձեռքբերումներից կարելի է համարել ոլորտում կոռուպցիոն ռիսկերի անկման միտումը, տնտեսվարող սուբյեկտների կողմից պարտադիր հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակի ներդրումը և բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկման մեխանիզմի կիրառումը: Այնուամենայնիվ, տեսչական գործունեության «բնապահպանական որակը» այնքան էլ հուսադրող չէ, իսկ տեղեկատվությունը դրա մասին՝ «աղքատիկ»: Դրանում նկատելի է ստուգման ցուցանիշների սահմանափակությունը, ըստ գործունեության բնույթի և ցածր «տեղեկատվական կշիռը»: Այդ հարցերին մանրամասն կանդիդատանք հաջորդ ենթաբաժնում:

Ամփոփ պատկերացում կազմելով ՀՀ-ում տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի մասին և գրանցելով տեսչական գործունեության արդյունավետության որոշակի դրական տեղաշարժը, պետք է նշել, որ այնուհանդերձ ոլորտում նկատելի են նաև բացթողումներ: Մեր կարծիքով, ֆունկցիոնալ առումով բացակայում է հստակությունը «բնապահպանական վերահսկողության», «բնապահպանական հսկողության» ու «ինքնահսկման» միջև:⁴¹ Եվ ամենևին պատահական չէ, որ «թեմատիկ ստուգումների» և «ուսումնասիրությունների» միջև բովանդակային և վերջնարդյունքի ապահովման տեսանկյունից անորոշ են մնում ստուգման մեխանիզմը և ցուցանիշները: Հետևաբար, վերջնարդյունքի ապահովման և հետագայում ստուգման համար անհրաժեշտ և **հեռանկարային է կիրառել տեսչական և էկոաուդիտորական ստուգումների մեթոդաբանության համատեղելիության ու փոխօգնության սկզբունքը**: Հակառակ դեպքում վերջնարդյունքները ի զորու չեն լինելու ապահովել «պատշաճ ձևով» ուսումնասիրությունները, ոչ էլ ինքնաստուգման ներքին

մոնիթորինգի և տվյալների գրանցման իրականացումը:

Բացի այդ, տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգում գրեթե անտեսված է հասարակական հսկողությունը, որը միջազգային տեսչական պրակտիկայում ունի կարևոր դերակատարություն և անմիջականորեն կապված է բնապահպանական տեղեկատվության մատչելիության հետ:

Այսպիսով, բնապահպանական վերահսկողության համակարգի դիտարկումը ցույց է տալիս, որ ՀՀ-ում տեսչական ծառայության գործառույթները բավականին ընդարձակ են, իսկ արդյունավետությունը կախված է ստուգման գործընթացի նորմատիվային, մեթոդական ու իրավական հենքից, գնահատման ցուցանիշների ընտրության գիտական հիմնավորվածության աստիճանից: Դրանում կհամոզվենք բնապահպանական վերահսկողության մեխանիզմի և ստուգման ցուցանիշների կիրառման արդյունավետության գնահատման հարցերի դիտարկման հաջորդ ենթաբաժնում:

2.2 Վերահսկողության մեխանիզմների և ստուգման ցուցանիշների կիրառման արդյունավետությունը

Բնապահպանական վերահսկողության մեխանիզմի և ստուգման ցուցանիշների կիրառման արդյունավետությունը էապես կախված է յուրաքանչյուր երկրում իրականացվող էկոլոգիական քաղաքականությունից, վերահսկող կառույցների իրավական հենքից, մեթոդական ապահովվածությունից, բնապահպանական պետական տեսուչի արհեստավարժության մակարդակից և տեխնիկական հագեցվածության աստիճանից, կազմակերպական այլ գործոններից:

Վերահսկողության գործընթացը ՀՀ-ում ներառում է հիմնականում բնապահպանական օրենսդրության իրավախախտումների, արձանագրությունների քանակական գնահատման, վնասների հատուցման գումարի և վարչական տույժերի հայտնաբերման և հաշվառման ավանդական ցուցանիշների օգտագործումն ու

նորերի որոնումը: Բնապահպանական իրավախախտումների օբյեկտիվ կողմը բնութագրվում է հետևյալ երեք բաղադրատարրերով՝

- ✓ հակաօրինական վարքագիծ,
- ✓ պատճառված վնաս կամ դրա պատճառման իրական վտանգ,
- ✓ հակաօրինական վարքագծի և հասցված վնասի միջև կապ:

Տնտեսվարող սուբյեկտի հակաօրինական վարքագիծը անմիջականորեն կապված է հասարակական վտանգավորության հետ, որն էլ ազդում է պատասխանատվության տեսակի վրա (վարչական, քրեական և այլն): Բնապահպանական իրավախախտման սուբյեկտիվ կողմն արտահայտվում է մեղավորության ձևով: Իր հերթին, իրականացված բնապահպանական իրավախախտման նկատմամբ մեղավորությունը հանդես է գալիս երկու ձևով՝ դիտավորություն (ուղղակի և անուղղակի) և անզգուշություն:

Բնապահպանական իրավախախտումների համար բնութագրականն է այն, որ պատասխանատվությունը կարող է սահմանվել ինչպես պատճառված վնասի վտանգավոր հետևանքների, այնպես էլ հնարավոր վնասի առաջացման իրական վտանգի առկայության դեպքում: Հաշվի առնելով բնապահպանական իրավախախտումների բացահայտման և հնարավոր վնասի փոխհատուցման կարևորությունը՝ անդրադառնանք ՀՀ-ում տվյալ ոլորտը բնութագրող ստուգման գործընթացների հիմնական դինամիկ ցուցանիշների վերլուծությանն ու գնահատմանը:

Այսպես, աղյուսակ 2. 2. 1-ում ներկայացվել է 2007-2016 թթ. ստուգված օբյեկտների և դրանցում հայտնաբերված բնապահպանական իրավախախտումների քանակը:

2007-2016թթ. ստուգված օբյեկտների և հայտնաբերված բնապահպանական իրավախախտումների քանակը ՀՀ-ում, միավոր ⁴¹


<i>Տարի</i>	<i>Ստուգված օբյեկտների քանակությունը</i>	<i>Բնապահպանական իրավախախտումների քանակությունը</i>
2007	1849	1551
2008	1752	1417
2009	725	823
2010	769	385
2011	186	1197
2012	156	872
2013	88	774
2014	160	344
2015	128	872
2016	132	872

Աղյուսակ 2. 2. 1-ից երևում է, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում ստուգված օբյեկտների քանակի և բնապահպանական իրավախախտումների դինամիկ ցուցանիշները անկայուն բնույթի են: Այսպես, ստուգված օբյեկտների և հայտնաբերված իրավախախտումների քանակության տարբերությունը առավել նկատելի է 2008 և 2009 թթ-ի ցուցանիշների միջև, որոնք ստուգված օբյեկտների գծով բնութագրվում են 1027 (41.3%) միավորի տարբերությամբ և 594 (58%) միավորի տարբերությամբ բնապահպանական իրավախախտումների ցուցանիշի գծով: Ենթադրվում է, որ ստեղծված իրավիճակը պայմանավորված է Հայաստանում տնտեսական ճգնաժամի հետևանքների ազդեցությամբ:

Հետագայում՝ 2009 թ-ից նկատվում է ստուգված օբյեկտների քանակի զգալի անկում, սակայն միաժամանակ անկման միտում է դրսևորում նաև բնապահպանական իրավախախտումների քանակը: Եթե 2007-2008 թվականներին հայտնաբերված բնապահպանական իրավախախտումների քանակը ինչ-որ չափ համամասնական է ստուգված օբյեկտների քանակին, ապա 2009 թ-ից բնապահպանական իրավախախտումների ցուցանիշները զգալի նվազել են

⁴¹ ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք: Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2013 թթ.- էջ 72 / 2016թ/<http://www.armstat.am/file/doc/99493668pdf էջ 86>

(բացառությամբ 2011թ-ի)՝ հասնելով 2014թ-ին 344 միավորի (2015թ-ին աճ 2.5 անգամ): Այս դեպքում ևս, ուշագրավ են հատկապես 2011թ.-ի տվյալները, համաձայն որոնց 186 ստուգված օբյեկտների դիմաց հայտնաբերվել է 1197 բնապահպանական իրավախախտում (ստուգման գործընթացի դրական մոտիվացում): Նմանատիպ միտումներ գրանցվել է նաև 2012-2016 թթ.- ին (գծապատկեր 2. 2. 1):



Գծապատկեր 2. 2. 1

2007-2016թթ. ստուգված օբյեկտների և հայտնաբերված իրավախախտումների քանակը ՀՀ-ում

Գծապատկեր 2. 2. 1-ում բերված տվյալներն ակնհայտորեն հաստատում են ստուգված օբյեկտների և հայտնաբերված իրավախախտումների քանակությունների միջև հակադարձ համեմատական էֆեկտի ձևավորումը: Փաստորեն, դրանով հաստատվում է տեսչական գործունեության արդյունավետության գնահատման այն մոտեցումը, համաձայն որի՝ համեմատության մեջ է դրվում ստուգումների և հայտնաբերված բնապահպանական իրավախախտումների քանակը:

Նման մոտեցումը որոշակիորեն ներդաշնակ է ԱՄՆ-ում և Եվրոպական երկրներում կիրառվող «դաբլ» սկզբունքին, որի միջոցով կարգավորվում է արտանետման թույլտվությունների շուկան և հսկողությունը իրականացվում է հիմնականում խոշոր ու բարձր ռիսկով գործող ձեռնարկությունների արտանետման նկատմամբ: Այնուհանդերձ, տվյալների փոփոխության նման միտումների վերլուծությունից դժվար է գալ որևէ ստույգ եզրահանգման, քանի որ հաճախ

անհայտ են մնում ստուգվող օբյեկտների տեխնոլոգիական առանձնահատկությունները, ռիսկի/վնասի և վտանգի գործոններն ու բացասական ազդեցության ամբողջական սպեկտրը: Հնարավոր է կազմել միայն նախնական պատկերացում ստուգվող տնտեսական օբյեկտների էկոլոգիական մենեջմենթի համակարգի մասին:

Հայաստանում տնտեսական գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության և բնական ռեսուրսներին բնապահպանական իրավախախտումների հետևանքով հասցված վնասի փոխհատուցման խնդիրներում կարևորվում է նաև հայտնաբերված և սահմանված ժամկետում վերացված բնապահպանական իրավախախտումների հարաբերակցության վերլուծությունը (աղյուսակ 2. 2. 2, գծապատկեր 2. 2. 2):

Աղյուսակ 2. 2. 2


2007-2016 թթ. հայտնաբերված և սահմանված ժամկետում վերացված բնապահպանական իրավախախտումների քանակը ՀՀ –ում, միավոր ⁴²

<i>Տարի</i>	<i>Հայտնաբերված բնապահպանական իրավախախտումների քանակը, միավոր</i>	<i>Սահմանված ժամկետում վերացված բնապահպանական իրավախախտումների քանակը, միավոր</i>
2007	1551	564
2008	1417	463
2009	823	134
2010	489	126
2011	497	172
2012	351	117
2013	238	84
2014	344	109
2015	872	202
2016	132	896

Ինչպես երևում է աղյուսակ 2. 2. 2-ի և գծապատկեր 2. 2. 2-ի տվյալներից, հայտնաբերված և սահմանված ժամկետում վերացված բնապահպանական իրավախախտումների միջև հարաբերակցությունը ևս խիստ անհամամասնական է:

⁴² ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք. Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում. 2007- 2013թ.- էջ 68-82 /2015թ.- էջ 76

Բնութագրական է միայն դրանց նվազման միտումը 2007-2013 թվականներին (բացառությամբ՝ 2011թ-ի) և հետագա աճը 2014-2016 թվականներին:



Գծապատկեր 2. 2. 2

Հայտնաբերված և սահմանված ժամկետում վերացված բնապահպանական իրավախախտումների քանակը ՀՀ –ում / 2007-2016 թթ., միավոր ⁴³

Բացի այդ, 2007-2016 թթ. հայտնաբերված բնապահպանական իրավախախտումների քանակի անկման ֆոնի վրա, անհամեմատ ցածր են սահմանված ժամկետում վերացված իրավախախտումների ցուցանիշները, տատանվելով նեղ տիրույթում (16.2-36.3%) ու չհասնելով նույնիսկ դրանց հարաբերակցության 50%-ի: Այստեղ դժվար է դատել բնապահպանական իրավախախտումների հայտնաբերման դրական կամ բացասական տեղաշարժերի մասին, քանի որ բնապահպանական իրավախախտումների վերացմանն ուղղված ստուգողական աշխատանքները բնութագրվում են համեմատաբար ցածր արդյունավետությամբ և ինչ-որ չափ անորոշությամբ: Հետևաբար՝ անհրաժեշտ է գնահատել յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտի բնապահպանական վարքագիծը, ավելի ստույգ՝ արձագանքը «հետադարձ կապի» հաշվառման միջոցով, որը վերահսկողության արդյունքում հաճախ բերում է չընդհատվող դատական քննարկումների: Ամենայն հավանականությամբ նման դեպքերում գործում է

⁴³ ՀՀ բնապահպանության նախարարության հաշվառման և վերլուծության բաժին, տարեկան հաշվետվություն 72007-2016թթ.

իրավակիրառման մեխանիզմի սահմանափակությունը՝ բացասական ազդելով տեսչական գործունեության բնապահպանական որակի վրա:

Վերլուծության այս փուլում ուշագրավ են ստուգված օբյեկտներում հայտնաբերված իրավախախտումների ուսումնասիրության արդյունքները ըստ ՀՀ մարզերի: Դիտարկվել են հետճգնաժամային տնտեսական աճի 2010-2016թթ.-ի վիճակագրական տվյալները (աղյուսակ 2. 2. 3):

Աղյուսակ 2. 2. 3

Ստուգված օբյեկտներում հայտնաբերված իրավախախտումների քանակը՝ ըստ ՀՀ տարածքային տեսչությունների և Մ. Երևանի / 2010-2016թթ., միավոր ⁴⁴

ՀՀ մարզեր	2010	2011	2012	2013	2014	2015	2016	Ընդամենը մարզ
Մ. Երևան	93	45	10	22	45	48	51	314
Արագածոտն	16	42	40	25	26	47	49	245
Արարատ	23	9	23	28	12	49	52	196
Արմավիր	39	36	40	10	11	24	28	188
Կոտայք	19	56	18	14	18	43	45	213
Գեղարքունիք	19	12	18	12	28	131	135	355
Տավուշ	11	15	9	17	25	252	262	591
Լոռի	31	39	12	6	25	96	108	317
Շիրակ	43	55	33	37	41	59	62	330
Վայոց ձոր	9	12	12	3	9	36	40	121
Սյունիք	13	9	23	7	12	15	22	101
Ընդամենը ՀՀ	316	330	238	181	252	800	864	2981

Աղյուսակ 2.2.3-ի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավախախտումների առավելագույն քանակությունը կազմում է՝ Տավուշում-591 միավոր, Գեղարքունիքում-355, Շիրակում-330 միավոր, Լոռիում-317 միավոր, Երևանում-314 միավոր, Արագածոտնում-245 միավոր, Կոտայքում-213 միավոր և Արարատում-196 միավոր: Համեմատաբար քիչ քանակի իրավախախտումներ են արձանագրվել Արմավիրի (188 միավոր), Վայոց Ձորի (121 միավոր) և Սյունիքի (101 միավոր) մարզերում: Տվյալ դեպքում ստուգումների քանակի փոփոխությունը չի

⁴⁴ ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք: Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2014թ. <http://www.armstat.am/file/doc/99493668pdf> էջ 79,80/2015թ- էջ 76-79

ենթարկվում որևէ օրինաչափության և մոտ է ցուցանիշների ստոխաստիկ բնույթին: Ինչ վերաբերվում է առանձին մարզերին, ապա դրանց մակարդակով կարելի է մատնանշել միայն տեսչական ծառայությունների հարաբերական արդյունավետությունը ըստ ստուգված օբյեկտներում հայտնաբերված իրավախախտումների քանակի, որը փոխվում է 101-ից (Սյունիք) մինչև 591 (Տավուշ) միավորի տիրույթում: Տեղին է նշել նաև, որ ստուգումների քանակի ցածր ցուցանիշը դեռևս միանշանակ չի փաստում տվյալ մարզում էկոլոգիական բարեկեցության մասին: Սյունիքի մարզում, օրինակ՝ առկա է կայուն էկոլոգիական լարվածություն: Աղյուսակ 2. 2. 4-ում ներկայացված է ստուգված օբյեկտներում հայտնաբերված և իրավախախտումներից գոյացած ու ՀՀ պետական բյուջե մուտքագրված գումարն ըստ ՀՀ տարածքային տեսչությունների:

Աղյուսակ 2. 2. 4

**2010-2015թթ. ստուգված օբյեկտներում հայտնաբերված իրավախախտումներից
ՀՀ պետական բյուջե մուտքագրված գումարը՝ ըստ ՀՀ տարածքային
տեսչությունների և ք. Երևանի, հազ. դրամ ⁴⁵**

ՀՀ մարզեր	2010	2011	2012	2013	2014	2015
ք. Երևան	1624,08	6706,24	3891,01	5688,12	4511,82	17513.5
Արագածոտն	2529,0	4025,5	4973,7	2925,5	5410,6	1616.6
Արարատ	3700	1978	2828,83	1755,6	1206	1182.4
Արմավիր	4713	5794	4405	1202,5	1032	772.5
Կոտայք	4143	6402	5110,49	3445	5135	3350
Գեղարքունիք	3808,7	6353,1	5199,9	6090,5	5690,8	2878.6
Տավուշ	5218,1	5501,15	6990,9	9484,5	9306,10	14500
Լոռի	7417,1	9402,57	9500,75	9690,4	7596,7	6250
Շիրակ	4805,5	6008,5	4835,9	4943,8	5484,4	3930
Վայոց ձոր	2330,0	2614	3313	1061	5298,0	2400
Սյունիք	4480,4	13144,7	16891,9	9909,74	5769,15	1650
Ընդամենը ՀՀ	88126,72	95563,74	84173,95	79026,95	106128,12	24284.40

⁴⁵ ՀՀ բնապահպանության նախարարության հաշվառման և վերլուծության բաժին, տարեկան հաշվետվություն /2010-2014թթ.

ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք.: Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում /2014թ <http://www.armstat.am/file/doc/99493668pdf> էջ 82, 83/2015թ- էջ 78-80

2015թ.-ի դրությամբ առավելագույն գումարները մուտքագրվել են ք. Երևանի (17513.5 հազ.դրամ), Տավուշի (14500 հազ.դրամ), Լոռու (6250 հազ.դրամ) և Շիրակի (3930 հազ.դրամ) տարածքային տեսչություններում: ՀՀ տարածքային տեսչությունների և ք. Երևանի տվյալների համաձայն բյուջետային մուտքերի 2010-2015թթ.-ի գումարային մեծությամբ առաջատար դիրքերում են՝ Սյունիքը (50212.39 հազ.դրամ), Լոռին (436670.02 հազ.դրամ), ք.Երևանը (39934.77 հազ.դրամ), Տավուշը (36645.75 հազ.դրամ), Գեղարքունիքը (30021.60 հազ.դրամ) և Շիրակը (26117.40 հազ.դրամ):

Նման երևույթը ավելի շատ հակասական, քան տրամաբանական է ու հնարավորություն չի ստեղծում օբյեկտիվորեն գնահատել տարածքային տեսչությունների գործունեության արդյունավետությունը: Հեղինակի կարծիքով դրա համար նպատակահարմար է մշակել և ներդնել համապատասխան քանակական չափորոշիչներ, որոնք չեն կիրառվում ՀՀ-ի բնապահպանական վերահսկողության համակարգում:

Ինչ վերաբերվում է գումարային ցուցանիշին, ապա Սյունիքի մարզի տեսչական ստուգումների արդյունքում հայտնաբերված 79 իրավախախտումների դեպքում պետական բյուջե մուտքագրվել է 50212.39 հազ.դր., իսկ Մ. Երևանի 263 իրավախախտումների համար՝ 1.2 անգամ քիչ: Ենթադրվում է, որ այս պարագայում դրսևորվում է իրավախախտումներից գոյացած և ՀՀ պետական բյուջե մուտքագրված գումարների սակագնային կամ գնահատման ցուցանիշների հաշվարկման մեթոդի անհամարժեքության գործոնի ազդեցությունը:


Բնապահպանական իրավախախտումների հետևանքով վարչական տույժի ենթարկվածների քանակի, ինչպես նաև վարչական տույժի գումարի դինամիկայի ուսումնասիրման տվյալները ամփոփված են աղյուսակ 2. 2. 5-ում և գծապատկեր 2. 2. 3-ում համապատասխանաբար:

Աղյուսակ 2. 2. 5

2007-2016 թթ . վարչական տույժերի ենթարկվածների թվաքանակը և սահմանված ստուգումները ՀՀ –ում ⁴⁶

<i>Տարի</i>	<i>Վարչական տույժի ենթարկվածների թվաքանակը, մարդ</i>	<i>Վարչական տույժի համար սահմանված գումարը, մլն.դրամ</i>
2007	1072	71.7
2008	1099	76.7
2009	663	42.2
2010	807	60.9
2011	1109	78.9
2012	749	56.3
2013	642	43.7
2014	879	71.1
2015	794	61.3
2016	872	80.2

Աղյուսակ 2. 2. 5-ում բերված վարչական տույժերի ենթադրաձևերի թվաքանակի և վարչական տույժի համար սահմանված գումարի դինամիկ փոփոխություններից բավականին դժվար է գալ որևէ եզրակացության, բացի այն միտվածության դրսևորման, որի մասին արդեն խոսվել է նախկին վերլուծություններում: Ուղղակի կարելի է փաստել, որ սահմանված վարչական տույժի համար գումարը տատանվում է 42.2 մլն.դրամից մինչև 80.2 մլն.դրամ:




Գծապատկեր 2. 2. 3

Վարչական տույժերի ենթարկվածների թվաքանակը ՀՀ–ում / 2007-2016թթ. ⁴⁷

⁴⁶ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք. Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2007- 2013 թթ.. – էջ 74, 78/2009-2014 թթ. <http://www.armstat.am/file/doc/99493668pdf> էջ 84

Գծապատկեր 2. 2. 3-ի վերլուծությունը վկայում է, որ 2007-2016 թթ. վարչական տույժի ենթարկվածների թվաքանակի դինամիկան ունեցել է տատանողական բնույթ: Ինչ վերաբերվում է բնապահպանական իրավախախտումների հետևանքով սահմանվող վարչական տույժի գումարին, ապա գծապատկեր 12-ից կարելի է դատել, որ վերոհիշյալ ցուցանիշի գծով ուշագրավ է 2009-2013թթ. ժամանակահատվածը, որի շրջանակներում 2011-2013 թթ. նկատվում է մուտքերի նվազման միտում և կտրուկ աճ 2014թ.-ին (71.1 մլն. դրամ): 2008-2009թթ. վարչական տույժի ենթարկվածների թվաքանակին զուգընթաց նվազել է նաև վարչական տույժի գումարը:



Գծապատկեր 2. 2. 4
Վարչական տույժի գումարը ՀՀ-ում / 2007-2016 թթ. ⁴⁸

Ընդ որում՝ պետք է նշել նաև, որ թե վարչական տույժի ենթարկվածների թվաքանակի և թե վարչական տույժի համար սահմանված գումարի ենթարկվածների ցուցանիշները տարբերվում են ըստ բնապահպանական ուղղությունների: Որպես օրինակ ներկայացնենք 2016թ-ի համապատասխան ցուցանիշները (աղյուսակ 2. 2. 6):

⁴⁷ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք. Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում. 2007- 2014թթ.- էջ 7/2015թ- էջ 78,79

⁴⁸ ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք. Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում. 2007- 2014 թթ.- էջ 74/2015թ- էջ 78/2016 էջ 76-78


Աղյուսակ 2. 2. 6

Վարչական տույժերի բաշխվածությունն ըստ բնապահպանության ուղղությունների ՀՀ-ում, 2016թ. ⁴⁹

<i>Բնապահպանական ուղղություն</i>	<i>Վարչական տույժի ենթարկվածների թվաքանակը, մարդ</i>	<i>Վարչական տույժի համար սահմանված գումարը, հազ. դրամ</i>	<i>Վարչական տույժի համար սահմանված գումարը վարչական տույժի ենթարկված մեկ անձի հաշվով, հազ.դրամ</i>
Ընդերք	6	530	88.3
Զրային պաշարներ	40	8100	202.5
Օդային ավազան	71	5900	83.1
Հողային պաշարներ	71	5430	76.5
Բուսական աշխարհ	373	26100	70.0
Կենդանական աշխարհ	105	6780	64.6
Թափոններ	5	380	76.0
Ընդամենը	671	53220	77.2

Աղյուսակ 13-ից հետևում է, որ 2016թ.- ի դրությամբ դիտարկվող ցուցանիշների համեմատությամբ կարելի է նշել բնապահպանական 3 ուղղություն, որտեղ վարչական տույժի համար սահմանված գումարը բավականին բարձր է: Դրանք են. բուսական աշխարհի (26100 հազ. դրամ), ջրային պաշարների (8100 հազ. դրամ), կենդանական աշխարհի (6480 հազ. դրամ) և օդային ավազանի (5900 հազ.դրամ) պահպանության ոլորտները: Կենսաոռոտության պահպանության ոլորտում հայտնաբերված իրավախախտումների քանակը ներկայացված է գծապատկեր 2. 2. 5-ում:

⁴⁹ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք.Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում. 2007-2013 թթ. -էջ 74, 75/2015թ- էջ 78,79//2016թ-էջ 79



Գծապատկեր 2. 2. 5

2007-2016թթ. կենսառեսուրսների պահպանության ոլորտում հայտնաբերված իրավախախտումների քանակը ՀՀ –ում , միավոր ⁵⁰

Գծապատկեր 2. 2. 5-ից երևում է, որ, ընդհանուր առմամբ նկատելի է իրավախախտումների անկման միտումը և դրա «անսովոր» դրսևորումը հատկապես 2010թ.-ին, երբ միայն բուսական աշխարհի պահպանության ոլորտում վարչական տույժի ենթարկվածների թվաքանակը առավելագույնն է՝ կազմելով 373 մարդ, իսկ վարչական տույժի համար սահմանված գումարը հավասար է 26100 հազ.դրամի կամ ստուգման մեկ միավորի հաշվով – 69.97 հազ. դրամի: 2012թ-ից հայտնաբերված իրավախախտումների քանակը վերականգնվում է, կազմելով 2015թ-ին 478 մարդ , իսկ 2016 թ-ին՝ 488 մարդ:

Ուսումնասիրելով բնապահպանական իրավախախտումների գծով սահմանվող վարչական տույժերի դինամիկան՝ անհրաժեշտ է անդրադառնալ նաև հայտնաբերված բնապահպանական իրավախախտումների հետևանքով առաջացող վնասների փոխհատուցման արձանագրությունների քանակի և հատուցված վնասի գումարի ցուցանիշների դինամիկային (աղյուսակ 2. 2. 7):

⁵⁰ ՀՀ բնապահպանության նախարարության հաշվառման և վերլուծության բաժին, տարեկան հաշվետվություն /2007-2016թթ.

Աղյուսակ 2. 2. 7


2007-2016 թթ. վնասի հատուցման արձանագրությունների քանակը և հատուցված վնասի գումարը ՀՀ –ում ⁵¹

Տարի	Վնասի հատուցման արձանագրությունների քանակը, միավոր	Վնասի հատուցման գումարն ըստ արձանագրությունների, մլն. դրամ
2007	479	201.4
2008	466	267.1
2009	413	152.6
2010	454	153.9
2011	601	141.4
2012	518	137.4
2013	480	133.1
2014	618	480.3
2015	535	198.7
2016	589	212.4

Աղյուսակ 2. 2. 7-ի տվյալների ամփոփումից կարելի է նշել, որ վնասի հատուցման գումարի աճը (ավելի քան 3 անգամ) դիտվում է միայն 2013-2014 թթ: Սակայն անհայտ է մնում՝ վնասի որ տեսակի մասին է գնում խոսքը: Ինչ վերաբերվում է էկոլոգիական խախտումներից վնասների գնահատման ազգային փորձին և մեթոդաբանությանը, ապա դրանք արտահայտված են հիմնականում առանձին, այն էլ սակավաթիվ գիտական հրապարակումներում, իսկ պաշտոնապես՝ պետական վիճակագրական ամփոփագրերում: Եզակի են նաև վնասների պարտադիր գնահատման փորձերը ՀՀ տնտեսական գործունեության նախագծերի պետական բնապահպանական փորձաքննության համակարգում: Այս պարագայում նպատակահարմար է անդրադառնալ վնասների հատուցման գումարի պաշտոնական տվյալների վերլուծությանը և գնահատմանը, ըստ արձանագրության քանակության, հատուցված գումարների դինամիկայի, բնապահպանական ուղղությունների և մարզային բաշխվածության:

⁵¹ ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք. Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում. 2007- 2013 թթ.- էջ 77, 78, 79 / 2009-2014 թթ.- էջ 82, 83 / 2015 թ.- էջ 82, 83 / 2016 թ.- էջ 83


Գծապատկեր 2. 2. 6-ում ներկայացված է ՀՀ-ում 2007-2016 թթ-ին շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման արձանագրությունների դինամիկան:



Գծապատկեր 2. 2. 6
2007-2016 թթ. շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման
արձանագրությունների քանակը ՀՀ -ում ⁵²

Գծապատկեր 2. 2. 6-ում ուշագրավ են երկու ժամանակահատված՝ 2007-2011 թթ. և 2011-2016 թթ.: Առաջին ժամանակահատվածում 2007թ-ից ի վեր դիտվում է արձանագրությունների քանակության որոշակի անկում մինչև 2009թ., այնուհետև առավելագույն աճը 2011թ -ին: Երկրորդ ժամանակահատվածում 2011-2013 թթ. շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման արձանագրությունների քանակը նվազում է հասնելով 2013 թ-ին 480 միավորի, իսկ 2014 թ.-ին դիտվում նշված ժամանակահատվածի առավելագույն ցուցանիշը՝ 618 միավոր: 2011թ.-ից դիտվում է նաև բնապահպանական ու բնօգտագործման հաշվարկված վճարների կտրուկ անկումն՝ կապված բյուջետային մուտքերի անկայունության հետ (գծապատկեր 2. 2. 7): Վերլուծություններից պարզվեց նաև, որ էկոլոգիական խախտումների արձանագրություն: Հեղինակի կարծիքով այստեղ վերանայման կարիք ունի բնապահպանական և բնօգտագործման վնասների հաշվարկման մեթոդաբանությունը ուժեղացնել աուդիտորական հսկողության գործիքակազմով:

⁵² ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք. Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում .2007- 2013 թթ. , էջ77 -79/2009-2014 թթ.- էջ 82 ,83,85/2015թ- էջ 82,83/2016թ -էջ 82



Գծապատկեր 2. 2. 7

Բնապահպանական և բնօգտագործման հաշվարկված վճարները ՀՀ –ում/2007-2016թթ., հազ. դրամ⁵³

Վնասների հատուցման արձանագրությունների և համապատասխան գումարների բաշխվածությունը, ըստ բնապահպանական ուղղությունների ամփոփված են աղյուսակ 2. 2. 8 -ում: Վերլուծության համար ընտրված են միայն 2008թ. և 2013թ. ընտրովի տվյալները, որոնք, ըստ դիտարկումների, բնութագրական են ՀՀ մարզերի նախաճգնաժամային և հետճգնաժամային տնտեսական աճի ժամանակահատվածների համար:

Ինչպես սպասվում էր, բնապահպանական խախտումներից առաջացած վնասի առավելագույն ցուցանիշը դիտվում է բուսական աշխարհի պահպանության ոլորտում: Նշանակալից են նաև վնասները ջրային և հողային պաշարների պահպանության բնագավառներում: Անընդունելի և կասկածելի է միայն այն փաստը, որ ընդերքի պահպանության ոլորտում նման տվյալները բացակայում են, իսկ էկոլոգիական վիճակը շարունակում է մնալ տագնապալի:

⁵³ ՀՀ ԱԿԾ վիճակագրական տարեգիրք. Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում . 2016 թ. – էջ 210

ՀՀ –ում վնասի հատուցման արձանագրությունների բաշխվածությունն՝ ըստ բնապահպանական ուղղությունների⁵⁴

Բնապահպանական ուղղություն	Վնասի հատուցման արձանագրությունների քանակը, միավոր		
	Վնասի հատուցման գումարը, հազ. դրամ		
	2008 թ.	2013	2015թ
Ընդերքի	չկա	Չկա	Չկա
Ջրային պաշարների	46/23361.6	24/233126.2	19/30582.5
Օդային ավազանի	23/1559.9	29/6197.7	23/15653.0
Հողային պաշարների	22/4056.3	41/12723.0	32/16715.9
Բուսական աշխարհի	170/166145.0	117/226830.5	401/128860.6
Կենդանական աշխարհի	25/4136.0	40/480255.9	59/6955.0

Ուշագրավ են նաև վնասների հատուցման գումարների բաշխվածությունը ըստ այն մարզերի, որտեղ առավել արտահայտված է էկոլոգիական անբարեկեցությունը (աղյուսակ 2. 2. 9):

Աղյուսակ 2. 2. 9-ից միանշանակ հետևում է, որ նույնիսկ ընտրված 3 մարզերից վնասների հատուցման գումարը առավելագույն մեծությանն է հասնում Տավուշի մարզում (246646.83 հազ. դրամ), որտեղ վերջին տարիներին զգալիորեն ակտիվացել են բացասական էկոլոգիական հետևանքները:

⁵⁴ ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք. Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում . 2015 թ. - էջ 209,210

2010-2015թթ. վնասների հատուցման տվյալներն՝ ըստ ՀՀ – ի մարզային տեսչությունների (հազ. դրամ) ⁵⁵

ՀՀ մարզեր	2010	2011	2012	2013	2014	2015	Ընդամենը մարզ
Լոռի	8256.3	9402,57	13853,4	9434,2	14081,7	31738.3	86766.47
Սյունիք	8625.5	16610,9	22314,6	14910,6	3424,44	15265.7	81151.74
Տավուշ	54493.2	5501,15	35805,2	64914,2	85933,08	91163.4	337810.23
Ընդամենը ՀՀ	160512.4	138952	136941,3	133032,8	480266,9	198843.2	

ՀՀ-ում վնասի հատուցման արձանագրությունների քանակի առավելագույն ցուցանիշ է գրանցվել ըստ հետևյալ բնապահպանական ուղղությունների՝ 2171 միավոր բուսական աշխարհի, 278 միավոր կենդանական աշխարհի և 187 միավոր հողային պաշարների պահպանության ոլորտներում (աղյուսակ 2. 2. 10):

Աղյուսակ 2. 2. 10

ՀՀ –ում վնասի հատուցման արձանագրությունների քանակն՝ ըստ բնապահպանական ուղղությունների / 2010-2015 թթ., միավոր ⁵⁶

Բնապահպանական ուղղությունը	2010	2011	2012	2013	2014	2015	Ընդամենը մարզ
Ընդերքի	չկա	2	1	Չկա	չկա	չկա	3
Ջրային պաշարների	20	7	17	12	24	19	99
Օդային ավազանի	26	14	24	16	29	23	132
Հողային պաշարների	23	21	44	26	41	32	187
Բուսական աշխարհի	311	476	406	400	177	401	2171
Կենդանական աշխարհի	66	69	22	22	40	59	278
Թափոն	չկա	10	4	4	7	1	26
Ընդամենը ՀՀ	446	599	518	480	318	535	

⁵⁵ ՀՀ բնապահպանության նախարարության հաշվառման և վերլուծության բաժին ,տարեկան հաշվետվություն /2007-2015թթ.

ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք.Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում .2010- 2014թթ. - էջ 82,83/2015թ.- էջ80- 82

⁵⁶ ՀՀ բնապահպանության նախարարության հաշվառման և վերլուծության բաժին, տարեկան հաշվետվություն /2007-2014թթ

ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք.Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում .2010- 2016թթ. -էջ 82-85

Սակայն դժվար է միանշանակ ընդունել աղյուսակ 2. 2. 10-ի այն տվյալները, որոնք վերաբերվում են հատկապես ընդերքօգտագործման և թափոնագոյացման բնապահպանական ուղղվածությանը և որտեղ էկոլոգիական բարեկեցությունը բավականին թվացյալ է: Մասնավորապես թափոնների գծով միայն 2013-2014թթ.-ին գրանցվել է վարչական տույժերի սահմանված գումարի 2.7 անգամ աճ, հասնելով 2014թ.-ի 910 հազ.դրամի: Նույն տարում փորձաքննության ոլորտում վարչական տույժերի սահմանված գումարը կազմել է 1280 հազ.դրամ՝ գրանցելով 2011թ.-ի նկատմամբ ավելի քան 3 անգամ աճ: Սահմանված ժամկետում հաշվետվություն չներկայացնելու համար նկատելի է վարչական տույժի նվազման որոշակի դրական միտում 2011թ.-ի 10360 հազ.դրամից մինչև 2014 թ.-ի 6600 հազ.դրամի:

Այսպիսով, արձանագրելով տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության դրական միտումները՝ պետք է նշել, որ անցումն ավանդական ստուգումներից առավել արդյունավետ վերահսկողության համակարգի պահպանում է արդիականությունը, հատկապես ստուգումների նոր մեխանիզմների և գնահատման ցուցանիշների ներդրման տեսանկյունից:

2.3 Վերահսկողության համակարգի աուդիտորական բաղադրիչի դերը և նշանակությունը

Ինչպես հայտնի է միջազգային փորձից, ձեռնարկությունների բնապահպանական գործունեության կարգավորումը իրականացվում էր հիմնականում էկոլոգա-ֆինանսական աուդիտի միջոցով, որի նպատակը ֆինանսական հաշվետվությունների բնապահպանական ցուցանիշների ուսումնասիրությունն ու հավաստիության ստուգումն է:

Աստիճանաբար արդիականացվեց գործընթացի մեթոդաբանության էկոլոգաաուդիտորական ուղղվածությունը և ներկայումս էկոլոգիական աուդիտը (ԷԱ) ունի ինքնուրույն կիրառություն, իսկ նպատակը ձեռնարկության գործունեության խորքային էկոլոգացումն է՝ անցում կատարելով տնտեսական աճի

գաղափարախոսությունից էկոլոգիական կայունության գաղափարախոսությանը և դրանց միջև ներդաշնակության հաստատմանը: Զուգընթաց հարստացավ նաև ԷԱ-ի գիտական բովանդակությունը և կիրառման ֆունկցիոնալ նշանակությունը բնապահպանական վերահսկողության համակարգում, որտեղ դեռևս լիովին բացահայտված չեն այդ գործընթացի մեթոդաբանական հնարավորությունները:⁵⁷

Երբեմն էկոլոգիական աուդիտը և ֆինանսական աուդիտը նույնացվում են և մեկնաբանվում որպես բնապահպանական աուդիտ: Նման մեկնաբանման մեջ առկա է որոշակի տերմինաբանական «շեղում», աղավաղվում է ժամանակակից էկոլոգիական աուդիտի գործառնական/ստուգողական ֆունկցիոնալ սպեկտրը և **Եվրախորհրդի N1836/93 EMAS (Environmental Management and Audit System)** փաստաթղթով սահմանված գիտական բովանդակությունը:

«Էկոլոգիական աուդիտ» տերմինին համարժեք են «Էկոլոգիական հետազոտում», «Էկոլոգիական ստուգում», «Էկոլոգիական գնահատում», «Էկոլոգիական քաղաքականության ստուգում» տերմինները: Այդպիսի գիտական բովանդակությամբ և ֆունկցիոնալ սպեկտրով էկոլոգիական աուդիտի անցկացումը թույլ է տալիս եզրակացություն կազմել ձեռնարկության «Էկոլոգիական առողջության» և էկոլոգիական հաշվեկշռի, արդյունաբերական տեխնոլոգիական համակարգերի առանձնահատկությունների, շրջակա միջավայրի աղտոտման, ռիսկի ու վնասների կանխման վերաբերյալ ⁵⁸: Ավելին, էկոլոգիական աուդիտը լինելով համակարգված և հարատև՝ կարող է ամբողջական գնահատական տալ, թե ինչպես են հաշվառված և պահպանվում տնտեսվարող սուբյեկտի կողմից շրջակա միջավայրի վիճակի նկատմամբ սահմանված էկոլոգիական պահանջները ու բնապահպանական նորմերը:

Էկոլոգիական աուդիտի սուբյեկտներ են համարվում անձինք կամ կազմակերպություններ, ովքեր ունեն էկոլոգիական աուդիտ անցկացնելու համար համապատասխան որակավորման վկայական կամ լիցենզիա: Էկոաուդիտի

⁵⁷Макарова С., Шагарова Л. Направления перспективных разработок программы экологического аудирования//Аудитор.-1998.-N7-с.57-58

⁵⁸Мастушкин М.Ю. Инвестиции в экологически значимую деятельность. Экологический аудит: Необходимость проведения и типология.//Экологическая экспертиза.-2002.- N3-с.9-17

օբյեկտները բազմաբնույթ են: Զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում որպես էկոաուդիտի օբյեկտներ հայտնի են.

- ✓ բնապահպանական վերահսկողության ներքին համակարգը,
- ✓ ձեռնարկության էկոլոգիական քաղաքականությունը,
- ✓ բնապահպան նշանակության հիմնական միջոցները,
- ✓ կենցաղային ու արտադրական թափոնները,
- ✓ կազմակերպության բնապահպանական ծախսերը,
- ✓ բնօգտագործողի էկոլոգիական անձնագիրը և այլն:

Պետք է նշել, որ համապատասխան մեթոդական մշակումները հաջողությամբ կիրառվում են եվրոպական երկրներում, Ռուսաստանի Դաշնությունում, իսկ ԱՄՆ-ում նույնիսկ անշարժ գույքի գնահատման գործընթացներում: ^{59, 60}

Էկոաուդիտը, որպես բնապահպանական կառավարման և վերահսկողության առավել արդյունավետ գործիքներից մեկը, ունի հետևյալ նպատակները.

- ✓ կազմակերպության տնտեսական գործունեության բնապահպանական օրենսդրական և նորմատիվային փաստաթղթերին համապատասխանության ստուգումն ու ապահովում,
- ✓ տնտեսական և գործունեության այլ տեսակների իրականացման հետ կապված ռիսկերի գնահատում, վնասների/վտանգների նվազեցում և պատժամիջոցների կիրառման կանխում,
- ✓ բնապահպանության ոլորտում իրավախախտումների արագ հայտնաբերում, տնտեսական գործունեության էկոլոգիական կարգավորման առաջարկությունների մշակում,
- ✓ միջազգային շուկայում ձեռնարկության մրցունակության բարձրացում,
- ✓ տնտեսվարող սուբյեկտի ներդրումային գրավչության բարձրացում և այլն:

ԷԱ կողմնորոշված է համալիր էկոլոգատնտեսական խնդիրների լուծմանը, որոնք կարող են նպաստել ձեռնարկության, տնտեսվարող սուբյեկտի էկոլոգիական պատասխանատվության բարձրացմանը ու ֆինանսական կայունության

⁵⁹Бобылев С.Н., Медведева О.Е. Экология и экономика. М.-2004.-с. 70-73

⁶⁰Сергеева Т.В. Экологический аудит. М.-2005.-207с.

ապահովմանը: Հիմնական խնդիրն է՝ ճշգրիտ և հավաստի տեղեկատվության հավաքագրում օբյեկտի արտադրական գործունեության մասին և դրա հիման վրա մշակել տվյալ օբյեկտի էկոլոգիական վիճակի և իրականացվող բնապահպանական քաղաքականության վերաբերյալ եզրակացություն, բարելավման առաջարկություններ:

Բացի այդ, էկոլոգիական աուդիտը կարող է լուծել նաև տնտեսվարող սուբյեկտի համար կարևոր ֆունկցիոնալ խնդիրներ՝ գործունեության ճշգրտումներն ու կանոնակարգումը, **օպերատիվ վերահսկողությունը** և զարգացման ռազմավարությունը: Ճշգրտման էությունը կայանում է նրանում, որ տրվում են կոնկրետ առաջարկություններ՝ ուղղված հայտնաբերված թերությունների վերացմանը: Օպերատիվ վերահսկողությունը ենթադրում է մշտական ներքին աուդիտի անցկացում՝ անմիջապես արտադրական գործունեության ընթացքում «էկոլոգիական սխալներից» խուսափելու, ինչպես նաև, էկոլոգիապես հիմնավորված որոշումների մշակման և ընդունման համար:

Ինչպես վկայում են գիտական տվյալները, էկոաուդիտի զարգացած համակարգ ունեցող երկրներում տարբերում են դրա անցկացման հետևյալ մակարդակները՝ պետական կառույցների նախաձեռնությամբ, վերազգային կորպորացիաների էկոաուդիտ, ճյուղային էկոաուդիտ՝ կառուցվածքային, պրոբլեմային և տարածքային, ձեռնարկության ներքին աուդիտ: Վերջին տարիներին լայն տարածում է ստացել նաև մասնագիտացված էկոաուդիտը, որի միջոցով վերահսկողություն է իրականացվում, օրինակ՝ թափոնների նվազեցման, թողարկվող արտադրանքի էկոլոգիական անվտանգության գնահատման, կոնկրետ տարածքների աղտոտման, «պրոֆեսիոնալ հիվանդությունների» արդյունաբերական հիգիենայի պահպանման/«պրոֆեսիոնալ հիվանդությունների» կանխման և այլնի նկատմամբ: Աուդիտի այս տեսակը դեռևս չունի ստանդարտացված մեթոդներ, ինչի պատճառով սահմանափակ են կիրառման շրջանակները:

Ելնելով փուլայնության առանձնահատկություններից՝ նախ որոշվում է աուդիտի նպատակը, խնդիրները, անցկացման ժամկետներն ու բյուջեն, սահմանվում են աուդիտի չափանիշները, մշակվում աուդիտի պլանը և կազմվում է ծրագիրը: ԷԱ-ի հիմնական փուլն իրականացվում է անմիջապես օբյեկտում, որի նպատակը էկոաուդիտի ծրագրի ելակետային տվյալների վերջնական հավաքագրումն ու ձևակերպումն է, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվության ստացումը՝ շրջակա միջավայրի վրա արտադրության ազդեցությունը վերլուծելու, գնահատելու և փոփոխությունները կանխատեսելու համար: Ընդհանրացնելով ստուգման տվյալները՝ աուդիտի վկայությունները և համեմատելով դրանք աուդիտի չափանիշների հետ՝ կազմվում է եզրակացությունը: Համաձայն գործող պրակտիկայի՝ տարբերում են աուդիտորական եզրակացության հետևյալ տեսակները.

- ✓ լիարժեք /անպայման դրական
- ✓ պայմանականորեն դրական
- ✓ բացասական
- ✓ բնապահպանական գործունեության վերաբերյալ կարծիք հայտնելու մերժմամբ:

Էկոլոգիական աուդիտի եզրակացությունը պետք է իր մեջ ընդգրկի հետևյալ տեղեկատվությունը.

- ✓ Տնտեսվարող սուբյեկտի բնապահպանական և արտադրական գործունեության ոլորտում կիրառվող օրենքներին և նորմատիվ ակտերին համապատասխանության մասին,
- ✓ Ֆինանսա-տնտեսական հաշվետվության վիճակի, ընթացիկ էկոլոգիական վճարների չափի և ճիշտ ժամանակին վճարման, շրջակա միջավայրի պահպանության համար հատկացված կապիալ միջոցների օգտագործման նպատակաուղղվածության մասին,
- ✓ Տնտեսվարող օբյեկտի շրջակա միջավայրի վիճակի, արտադրական անձնակազմի առողջության, տարածաշրջանի էկոլոգիայի վրա

արտանետվող վնասակար նյութերի առկայության/ազդեցության և չափի մասին, որոնց արտադրությունը սահմանափակված կամ արգելված է պետության կողմից միջազգային պահանջներով,

- ✓ Արտադրանքի արտադրության աճի տեմպի և շրջակա միջավայրը աղտոտող արտանետումներ, արտահոսքերի և վտանգավոր թափոնների քանակի, էներգետիկ և նյութական ռեսուրսների օգտագործման վերլուծության արդյունքների մասին,
- ✓ Տնտեսվարող սուբյեկտի ու ուսումնասիրվող ձեռնարկության բնապահպանական և արտադրական գործունեության հիմնական ցուցանիշների համեմատական արդյունքների մասին Հայաստանում և այլ երկրներում և այլն:

Ստուգվող ձեռնարկության նորմերին, կանոններին և ստանդարտներին համապատասխանության մասին որոշումը կայացվում է՝ հաշվի առնելով որոշիչ կանոնը կամ ձեռնարկության գործունեությանը հավանություն տալու մասին չափանիշը: Գործունեությունը համարվում է պահանջներին համապատասխան, եթե բացակայում են նշանակալի անհամապատասխանություններ կամ առկա են 10-ից ոչ ավել աննշան անհամապատասխանություններ: Այնուհետև կազմվում է աուդիտի հաշվետվությունը, որը պետք է պարունակի լիակատար, ճշգրիտ, հակիրճ և հասկանալի գրառումներ: Հաշվետվության եզրակացության մեջ տրվում են նաև հանձնարարականներ ու առաջարկություններ՝ կապված բնապահպանական իրավախախտումների վերացման, ձեռնարկության էկոլոգիական բնութագրերի բարելավման հետ: Աուդիտն եզրափակվում է՝ հաշվետվությունը աուդիտի պատվիրատուի կողմից սահմանված հասցեատերերին տրամադրելով:

Մեթոդական ապահովման տեսանկյունից առավել մշակված են համարվում ձեռնարկություններում էկոաուդիտի հետևյալ ուղղությունները.

- Ներքին էկոլոգիական հսկողության համակարգի աուդիտ,
- Կազմակերպության էկոլոգիական քաղաքականության աուդիտ,
- Բնապահպանության ոլորտում գործունեության իրականացման աուդիտ,
- Բնապահպանական նշանակության հիմնական միջոցների աուդիտ,

- Արտադրության և սպառման թափոնների աուդիտ,
- Կազմակերպության բնապահպանական ծախսերի աուդիտ,
- Շրջակա միջավայրի աղտոտման համար վճարների աուդիտ,
- Կազմակերպության էկոլոգիական հաշվետվության աուդիտ,
- Բնօգտագործողի էկոլոգիական անձնագրի աուդիտ:

Այսպիսով, ժամանակակից ԷԱ-ի գիտական բովանդակության և ֆունկցիոնալ նշանակության ուսումնասիրումը հնարավորություն է տալիս մատնանշել գործընթացի զարգացման հետևյալ գերակայությունները՝

- ԷԱ-ի միջազգային առաջատար մեթոդաբանության տեղայնացման գիտական, կադրային, տեղեկատվական հիմքերի մշակում
- ԷԱ-ի նորմատիվային, իրավական և օրենսդրական միասնական դաշտի ստեղծում, ստանդարտացում

Շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման կառավարման ու հսկողության ժամանակակից համակարգերի կատարելագործման անհրաժեշտությունը առավել արդիականացվեց ՀՀ-ի տնտեսական բարեփոխումների արդի պայմաններում: ԷԱ-ի ձևավորման համար կարևոր նախադրյալ է հանդիսանում տնտեսական/ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ռիսկերի գնահատման անհրաժեշտությունը: ⁶¹. ⁶² Խոսքը գնում է շրջակա միջավայրին և հասարակությանը վնաս հասցնելու հավանականության մասին: Էկոլոգիական աուդիտի ժամանակակից մեթոդաբանության ուսումնասիրումը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր մեթոդիկայի ընտրությունը և տեղայնացումը, ինչպես նաև իրավական կարգավորումը պետք է հիմնված լինի հուսալի օրենսդրական, նորմատիվա-մեթոդական, տեղեկատվական և կադրային ապահովման միասնական համակարգի վրա: Այս տեսանկյունից հեռանկարային է արտադրության և սպառման թափոնները էկոլոգիական աուդիտի մեթոդիկայի օգտագործման և տեղայնացման հնարավորությունը ՀՀ-ում թափոնների գործածության ոլորտում: Համաձայն պետական վիճակագրական տվյալների ՀՀ-ում

⁶¹Яндыганов Я.Я. Экономика природопользования.-М.-2005.-с.340-348

⁶²Львов В.В. Снижение риска и страхование предприятий// Безопасность труда в промышленности.- 1992.- N10. с.45-49

վերջին 10-15 տարիներին դիտվում է առանց շոշափելի բնապահպանական վերահսկողության արդյունքի թափոնների աննախադեպ աճ՝ 2016թ.-ին հասնելով 55161 հազ. տ: Առավել մեծ քանակության թափոնների աճը դիտվում է Սյունիքի, Կոտայքի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի մարզերում և Երևանում: Ընդ որում, թափոնագոյացումը գերազանցում է դրանց վերամշակման տեմպերը, մեծանում է օգտակար տարածքների օտարումը և շրջակա բնական միջավայրի աղտոտումը: Տեղին է նշել, որ ՀՀ տարածքում գործող բոլոր կազմակերպություններում առաջացած թափոնների ծավալների հետ համեմատ՝ օգտագործման, ինչպես նաև վնասազերծման ծավալները զգալիորեն ցածր մակարդակի են: Այսպես, միայն 2008թ.-ին նկատվում է առաջացած թափոնների ծավալի կրճատում մոտ 1890.6 հազ.տ-ով՝ պայմանավորված ձեռնարկությունների գործունեության մասշտաբների կրճատումով (աղյուսակ 2. 3. 1):

Աղյուսակ 2. 3. 1


ՀՀ տարածքի կազմակերպություններում թափոնների առաջացումը, օգտագործումը վնասազերծումը/ 2007-2016թթ., հազ. տ ⁶³

Տարիներ	Առաջացել է	Օգտագործվել է	Վնասազերծվել է
2007	13346.0	2.5	2.5
2008	11455.4	2.4	1.5
2009	14766.1	2.4	0.5
2010	23307.8	159.9	0.3
2011	27609.0	134.0	0.02
2012	39030.9	9.1	0.2
2013	49332.1	5.9	4.3
2014	46511.9	9.1	8.7
2015	47338.5	4.5	0.2
2016	55161.4	630.1	0.6

Հատկանշական է, որ մեծ ծավալներով թափոնների առաջացմանը զուգահեռ 2007-2009թթ. դրանց օգտագործման ծավալները չեն ավելանում տարեկան շուրջ


⁶³ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք.Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում. 2015թթ.- էջ 65 <http://www.armstat.am/file/doc/99493638pdf-> էջ 208,

2.5 հազ տոննայից: Օգտագործման ծավալներից ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2016թ.-ին՝ կազմելով 630.1 հազ տ: (գծապատկեր 2. 3. 1):



Գծապատկեր 2. 3. 1
2007-2016թթ. արտադրական թափոնների օգտագործման քանակության դինամիկան, հազ. տ ⁶⁴

Ինչ վերաբերում է թափոնների վնասագերծմանը, ապա այն անկանոն բնույթի է, հասնելով 2016թ.-ին 0.6 հազ տ- ի (գծապատկեր 2. 3. 2):



Գծապատկեր 2. 3. 2
2007-2016թթ. արտադրական թափոնների վնասագերծման քանակության դինամիկան, հազ. տ ⁶⁵

⁶⁴ ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք. Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում. 2013 թ. էջ

63-68 // Հայաստանի վիճակագրական տարեգիրք. 2017-էջ 213

⁶⁵ ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք. Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում. 2014 թ էջ 62-69/2015 թ էջ 65-69

Ստեղծված իրավիճակը մասնակիորեն կարելի է կապել վնասագերծող ժամանակակից տեխնոլոգիաների բացակայության, ֆինանսական միջոցների սղության, ինչպես նաև ոլորտի կառավարման համակարգում առկա բացթողումների և կարգավորող այլ տնտեսական մեխանիզմների անարդյունավետության հետ: Ենթադրվում է, որ ձեռնարկությունները նույնիսկ 2004թ-ի «Թափոնների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո համարժեք չեն օգտագործում իրավակիրառման լծակները թափոնների վնասագերծման և ոչնչացման, երկրորդային հումքի ստացման և օգտագործման ոլորտում: Հանքարդյունաբերությանը, օրինակ, բնութագրական է թափոնների պետական հսկողության որոշակի թերացում, հատկապես կազմակերպությունների բնապահպանական վարկանիշի բարելավման տեսանկյունից: Հետևաբար, ակնհայտ է հսկողության նոր լծակների/միջոցների որոնման և ներդրման անհրաժեշտությունը, ինչը կարող է էապես բարելավել կամ համալրել ոլորտում պետական տեսչական ծառայության գործունեությունը:

Արտադրության և սպառման թափոնների էկոլոգիական աուդիտի մեթոդական մոտեցումը մեր կողմից փորձարկված է N-ՍՊԸ-ի էկոլոգիական անձնագրի և հաշվետվությունների տվյալների հիման վրա: Նշենք, որ ելնելով ընկերության գործունեությանը վերաբերող տեղեկատվության տրամադրման որոշակի սահմանափակումներից, վերլուծությունները կարող են ներառել ենթադրական տարրեր:

Համաձայն մեթոդական մոտեցման՝ աուդիտի նպատակը կազմակերպության թափոնների գործածության ոլորտում գործող նորմատիվների և կանոնների պահպանման հսկողությունն է: Աուդիտի խնդիրների լուծման համար, նախ և առաջ, անհրաժեշտ է կազմակերպության հաշվարման մեջ վերահսկել վերադարձվող թափոնների շարժի հավաստի արտացոլման կարգի համապատասխանությունը թափոնների ուտիլիզացման/օգտահանման և պահման հաստատված կանոններին և նորմերին: Աուդիտի ամբողջական գործընթացը ներառում է՝

- Թեստավորում

- Վերադարձվող թափոնների շարժի մասին փաստաթղթերի հաշվառման և ճիշտ ձևակերպման վերահսկողություն
- Արտադրության և սպառման թափոնների օգտահանման քանակի և ուղղվածության ստուգում
- Կազմակերպության կողմից թափոնների սահմանային թույլատրելի ծավալների ժամանակավոր կուտակումների և պահման կանոնների նկատմամբ հսկողություն:

Աուդիտորական գործողությունների առաջին քայլը կապված է համալիր հարցերի պատասխանների պարզաբանման հետ, որոնք ներկայացված են աղյուսակ 2. 3. 1-ում: Այդ նպատակով օգտագործվում է աշխատանքային փաստաթուղթ – թեստ «Կազմակերպության արտադրության և սպառման թափոններ»:

Աղյուսակ 2. 3. 1

Թեստ. «Կազմակերպության արտադրության և սպառման թափոններ»

N	Հարց	Պատասխան այո«+»,ոչ«-»	Ծանոթություն
1	Ունի արդյո՞ք կազմակերպությունը շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների տարածքային վարչության կողմից թափոնների վտանգավորության աստիճանը հաստատող փաստաթուղթ	+	
2	Գոյություն ունեն արդյո՞ք կազմակերպության թափոնների վտանգավորության անձնագրեր	-	Անթույլատրելի է
3	Ունեն արդյո՞ք անհատները մասնագիտական պատրաստվածության և վտանգավոր թափոնների հետ աշխատելու լիցենզիա/սերտիֆիկատ	-	Անհրաժեշտ է ներդնել վերապատրաստման դասընթացներ
4	Ունի արդյո՞ք կազմակերպությունը հաստատված նորմատիվներ թափոնների առաջացման մասին	+	Անհրաժեշտ է վերանայել վտանգավոր թափոնների առաջացման նորմատիվները
5	Ունի արդյո՞ք կազմակերպությունը հաստատված սահմաններ թափոնների տեղաբաշխման համար	+	
6	Իրականացնում է արդյոք կազմակերպությունը թափոնների հաշվառում	+	
7	Սպառվել է արդյոք թափոնների տեղադրման լիմիտի ժամկետը	+	

8	Պայմանագրերը կնքված են այն ձեռնարկությունների հետ, որոնք որոշված են թափոնների տեղադրման լիմիտներում	+	
9	Գոյություն ունեն արդյո՞ք թափոնները տեղափոխող կազմակերպությունների հետ պայմանագրեր	+	
10	Կազմակերպված է արդյոք ներքին վերահսկողություն առաջացած թափոնների տեսակի և քանակի նկատմամբ	-	Բացակայում են համապատասխան կաղեր
11	Վերահսկվում է արդյոք էկոլոգիական և սանիտարահամաճարակային պահանջները թափոնների. <ul style="list-style-type: none"> ❖ Հավաքման ❖ Օգտագործման ❖ Վերամշակման ❖ Պահետակման ❖ Այրման ❖ Տեղափոխման ❖ Վնասագերծման ❖ Թափոնների թաղման ❖ և այլ գործընթացներում 	-	Վերահսկողությունը կրում է ֆորմալ բնույթ

Աուդիտի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել, որ վտանգավոր թափոնները, կախված շրջակա միջավայրի և հասարակության առողջության վրա վնասակար ազդեցության աստիճանից, բաժանվում են վտանգավորության դասերի: Հետևաբար՝ կազմակերպության ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք, որոնց գործունեության արդյունքում առաջանում են թունավոր թափոններ, պարտավոր են հաստատել դրանց դասակարգումը ըստ վտանգավորության աստիճանի ու կազմել համապատասխան անձնագիր:

Ստուգման ընթացքում աուդիտորը պետք է համոզվի, որ առկա է թափոնների վտանգավորությունը վկայող անձնագիր՝ կազմված վտանգավոր թափոնների բաղադրության և հատկանիշների, կառուցվածքի և բնույթի մասին տվյալների հիման վրա (գործընթացը կարգավորող որոշումների առկայություն և վտանգավոր թափոնների անձնագրի պարտադիրություն): Վտանգավոր թափոնների հետ կարող են աշխատել միայն այն անձինք, որոնք ունեն որակավորում հաստատող սերտիֆիկատ, և որի հավաստիությունը ևս ստուգվում է աուդիտի ընթացքում: Թափոնների տեղավորման լիմիտը համարվում է թափոնների մասին կազմակերպության հիմնական նորմատիվ փաստաթուղթը և աուդիտորական

տեղեկատվության կարևոր աղբյուր, որոնք ձևավորվում են համաձայն շրջակա միջավայրի նկատմամբ թույլատրելի վտանգավոր ազդեցության նորմատիվներին համապատասխան:

Անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք, որոնք գործունեություն են ծավալում թափոնների շրջանառության բնագավառում, հիմնվելով ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից հաստատված մեթոդական ուղղությունների վրա՝ մշակում են նորմատիվային նախագծեր թափոնների առաջացման և կոնկրետ տեսակի թափոնների կոնկրետ օբյեկտում տեղաբաշխման լիմիտներ ու ներկայացնում են նախարարություն՝ հաստատման ըստ գործող ընթացակարգի: Թափոնների տեղաբաշխման լիմիտը սահմանվում է 5 տարի ժամկետով այն պայմանով, որ անհատ ձեռնարկատերերը/տնտեսվարող սուբյեկտները և իրավաբանական անձինք ամեն տարի պետք է ներկայացնեն արտադրության անփոփոխության մասին տեղեկատվություն: Թունավոր թափոնների շարժի աուդիտը իրականացվում է ընդհանուր և առարկայական մեթոդներով:

Աուդիտի տեղեկատվական բազա է ծառայում վիճակագրական հաշվետվությունը՝ N2 ՏՊ ձև (թունավոր թափոններ), թունավոր թափոնների հաշվառման ցուցակ, թափոնների հաշվառման ցուցակ, մուտքային անդորրագիր, տեղափոխված թափոնների հաշվառման կտրոն, հաշվապահի տեղեկանք-հաշվարկը:

Աուդիտի ընդհանուր մեթոդաբանությունը ներկայացվում է աղյուսակ 2. 3. 3-ում:

Աուդիտորի աշխատանքային փաստաթուղթ/թափոնների աուդիտի ընդհանուր մեթոդիկան

Թափոնների վտանգավորության աստիճանը	Հաշվապահական գրանցամատյան	Թափոնների շարժի բնութագիրը, տոննա					
		Հաշվետու տարվա սկզբին կազմակերպության թափոնների քանակությունը	Գոյացել է կազմակերպության հաշվետու տարում	Ստացվել է այլ կազմակերպություններից	Օգտագործվել է կազմակերպության կողմից	Ամբողջովի ն վնասագերծվել է կազմակերպությունում	Փոխանցվել է այլ կազմակերպություններին
1	Թունավոր թափոնների գույքագրման ցուցակ	-	0,100	-	-	-	0,100
	N 2 ՏՊ ձև (թունավոր թափոններ)	-	0,100	-	-	-	0,100
2	Թունավոր թափոնների գույքագրման ցուցակ	-	52,100	-	12,100	-	38,000
	N 2 ՏՊ ձև (թունավոր թափոններ)	-	52,100	-	12,100	-	38,000
3	Թունավոր թափոնների գույքագրման ցուցակ	-	-	-	-	-	-
	N 2 ՏՊ ձև (թունավոր թափոններ)	-	-	-	-	-	-
4	Թունավոր թափոնների գույքագրման ցուցակ	6.2 20	54,300	-	-	-	58,000
	N 2 ՏՊ ձև (թունավոր թափոններ),	6.2 20	54,300	-	-	-	58,000
5	Թունավոր թափոնների գույքագրման ցուցակ	-	-	-	-	-	-
	N 2 ՏՊ ձև (թունավոր թափոններ)	-	-	-	-	-	-
Ընդամենը		6.2 20	106,5	-	12,100	-	96,1
Աուդիտորի հաշվարկ		2.0 00	106,5	-	12,100	-	96,1

Թունավոր նյութերի հաշվառման ցուցակի ցուցանիշների և N 2 ՏՄ ձև-ի (թունավոր թափոններ) յուրաքանչյուր վտանգավոր կարգի թափոններին փոխադարձ համեմատումը հնարավորություն է տալիս հաշվապահին վերահսկելու հաշվառման տվյալների և հաշվառման ցուցանիշների համապատասխանությունը: Աղյուսակից հետևում է, որ թափոնների գործածության տեսանկյունից ընդհանրապես չի իրականացվում թափոնների վնասազերծումը, ցածր է սեփական թափոնների օգտագործման ցուցանիշը: Հետևաբար, կազմակերպության բնապահական գործունեության կարգավորումը պետք է կողմնորոշված լինի տեխնոլոգիական վերակառուցմանը և թափոնագոյացման ցուցանիշների նվազեցմանն ու արտացոլմանը կազմակերպության էկոլոգիական քաղաքականության մեջ: Վերադարձվող թափոնների շարժի հաշվառման և ձևակերպման փաստաթղթերում առկա էին որոշ անճշտություններ՝ կապված դրանց ժամանակավոր կուտակումների և անվտանգ պահման կանոնների պահպանման հետ:

Արտադրության և սպառման թափոնների աուդիտի հաջորդ գործընթացը համարվում է **փաստաթղթային ձևակերպման ճշտությունը և վերադարձվող թափոնների շարժի հաշվառումը**: Թափոնների սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել այլ անձանց կողմից առքուվաճառքի, փոխանակման և նվիրատվության պայմանագրի հիման վրա: Վտանգավոր թափոնների սեփականատերերը (մնալով այդ կարգավիճակում) կարող են օտարել թափոնները մեկ ուրիշի սեփականություն, եթե տվյալ անձը ունի վտանգավոր թափոնների գործունեությամբ զբաղվելու լիցենզիա: Աուդիտի այս փուլի իրականացումը որոշակիորեն սահմանափակվեց տեղեկատվության անմատչելիության պատճառով: Աուդիտորական գործունեության ժամանակ աուդիտորը պետք է ուշադրություն դարձնի **վերադարձվող թափոնների գնահատման կարգի վրա**, ինչը առավել արդիական է երկրորդային հումքի օգտագործման ազգային պրակտիկայում:

Արտադրության և սպառման թափոնների ուտիլիզացման ծավալի և ուղղվածության ստուգումը իրականացվում է կազմակերպության հետևյալ փաստաթղթերի/կարգերի միջոցով.

- ✓ Կազմակերպության արտադրության և սպառման թափոնների տեղաբաշխման լիմիտներ,
- ✓ Թափոնների ուտիլիզացման պայմանագրեր,
- ✓ Արտահանվող թափոնների հաշվառման կտրոն,
- ✓ Թափոնների հաշվառման մատյան,
- ✓ Աուդիտորի աշխատանքային փաստաթղթեր:

Կարգին համապատասխան աուդիտորը վերահսկում է.

- ✓ Արտադրության և սպառման թափոնների ուտիլիզացման հաստատված ուղղությունները,
- ✓ Թափոնների արտահանման հիմքերը. ուտիլիզացման պայմանագրերը, ուտիլիզացման ծավալն ու փաստացի ուղղությունները,
- ✓ Առաջնային փաստաթղթեր, որոնք ձևավորում են թափոնների արտահանումը՝ արտահանվող թափոնների հաշվառման կտրոնները,
- ✓ Հաշվապահական ռեգիստր, որը ներառում է արտահանվող թափոնների և իրենց քանակական վերջնահաշվարկի մասին տեղեկատվություն, որի թվաքանակային հաշվարկը նույնպես վերահսկվում է աուդիտորի կողմից:

Թափոնների շարժի հաշվառման փաստաթղթերի ստուգումը կատարվում է ըստ ձևական հատկանիշների և ըստ էություն (իրական ցուցանիշներով): Աուդիտորական ստուգման իրականացման ժամանակ պետք է հատուկ ուշադրություն դարձնել արտահանվող թափոնների տեսքի և քանակի վրա, որը նշված է ուտիլիզացման պայմանագրի մեջ և ցույց է տրված առաջնային փաստաթղթերի մեջ՝ ձևակերպելով թունավոր թափոնների արտահանումը, ինչպես նաև վերջնական հաշվարկի ճշտությունը:

Աուդիտորի աշխատանքային փաստաթղթերի մեջ թափոնները դասակարգվում են ըստ անվանացանկի, որը համապատասխանում է թափոնների վտանգավորության աստիճանին: Աուդիտորի համար ոչ պակաս կարևոր է նաև

փաստաթղթի համարը և թափոնների արտահանման ամսաթիվը, որոնք նույնպես մտնում են աշխատանքային փաստաթղթերի կազմի մեջ, ինչը աուդիտորին հնարավորություն է տալիս վերահսկելու փաստաթղթերի ձևակերպման ճշտությունը և թափոնների ճիշտ ժամանակին արտահանումը կազմակերպության տարածքից: **N- ՄՊԸ-ի** կազմակերպության ստուգման արդյունքները ամփոփված են աուդիտորի աշխատանքային փաստաթուղթ. էկոլոգիական քաղաքականության հարցաթերթում (աղյուսակ 2. 3. 4):

Աղյուսակ 2. 3. 4

Աուդիտորի աշխատանքային փաստաթուղթ. էկոլոգիական քաղաքականության թեստային հարցաթերթ

N	Հարցի բովանդակությունը կամ ուսումնասիրության օբյեկտը	Պատասխանը կամ ուսումնասիրության արդյունքը	Աուդիտորի եզրահանգումները
1	2	3	4
1. էկոլոգիական քաղաքականություն. հիմնական պահանջներ			
1.	Մշակված է արդյոք էկոլոգիական քաղաքականությունը	Այո	
2.	Հիմնավորված/ձևավորված է արդյոք էկոլոգիական քաղաքականությունը անհրաժեշտ փաստաթղթերով	Ոչ	Գոյություն ունի միայն աշխատանքային նախագիծ
3.	Հաստատված է արդյոք ղեկավարության կողմից	Ոչ	Անթույլատրելի բնապահպանական խախտում է
4.	Համապատասխանում են արդյո՞ք էկոլոգիական քաղաքականության դրույթները ձեռնարկության էկոլոգիական հաշվարկային քաղաքականության դրույթներին էկոլոգիական ոլորտում	մասնակի	Բացասաբար է անդրադառնում կազմակերպության էկոմենեջմենթի վրա
5.	Համապատասխանում է արդյոք էկոլոգիական քաղաքականությունը էկոլոգիական ազդեցությունների բնույթին ու մասշտաբներին	մասնակի	Անտեսված է ռիսկերի, վնասների և վտանգների գնահատումը, բացակայում է գնահատման մեթոդաբանությունը
6.	Ներառում է արդյոք էկոլոգիական քաղաքականությունը դրույթներ արտանետումների կրճատման /կանխման վերաբերյալ	Այո	
7.	Ներառում է արդյոք դրույթներ էկոլոգիական օրենսդրությանն և նորմատիվ-իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ	մասնակի	

8.	Պարունակում է արդյոք դրույթներ էկոլոգիական վնասների հատուցման և տեխնոլոգիական նորամուծությունների վերաբերյալ	մասնակի	Պակասում են դրույթներ տեխնոլոգիական նորամուծությունների վերաբերյալ
9.	Մատչելի է արդյոք ներքին և արտաքին օգտագործողների ու հասարակայնության համար	Ոչ	Բացակայում են կարգեր
2. Էկոլոգիական քաղաքականություն. լրացուցիչ դրույթներ և պարտավորություններ			
10.	Ենթադրում է արդյոք համագործակցություն շահագրգիռ կողմերի հետ	Այո	
11.	Պարունակում է արդյոք դրույթներ անձնակազմի առողջության և էկոանվտանգության պահպանման մասին	Ոչ	Անձնակազմը տեղեկացված չէ էկոանվտանգության ապահովման մասին
12.	Նախատեսում է արդյոք էկոլոգիական բարեգործություն	Ոչ	
13.	Նախատեսում է արդյոք աջակցություն էկոկրթությանն ու գիտական ուսումնասիրություններին	Ոչ	Անհրաժեշտ է անձնակազմի մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին
14.	Արդյոք լավ են տեղեկացված շահագրգիռ կողմերը /ռադիո, մամուլ, հեռուստատեսություն, / և այլն	մասնակի	

Ինչպես երևում է, էկոլոգիական քաղաքականության աուդիտի անցկացումը շատ բարդ գործընթաց չէ և հնարավորություն է տալիս պարզել, թե որքանով են համապատասխանում ձեռնարկության կողմից հրապարակայնորեն ներկայացվող միջոցառումները նորմատիվ-իրավական փաստաթղթերի պահանջներին և գործունեության իրական բնապահպանական պատկերին: Այն կարելի է համարել ձեռնարկության համալիր էկոաուդիտի սկզբնական և կարևոր բաղադրիչ: Աուդիտորական աշխատանքի արդյունքների վերլուծության միջոցով հայտնաբերվեցին հետևյալ թերությունները.

- էկոլոգիական քաղաքականությունը, կապված ձեռնարկության արտադրության հետ, լիարժեք չի համապատասխանում շրջակա բնական միջավայրի վրա էկոլոգիական ազդեցությունների մասշտաբից և տեխնոլոգիական գործընթացների բարդությանը,

- ձեռնարկության աշխատակիցները տեղյակ չեն էկոլոգիական քաղաքականության մասին, ծանոթ չեն նրա հիմնական դրույթներին, հնարավորություն չունեն կատարել փոփոխություններ և առաջարկներ,
- ձեռնարկության էկոլոգիական քաղաքականությունը մնում է ոչ թափանցիկ, քանի որ բացակայում է ձեռնարկության իրական էկոլոգիական թափանցիկության բնութագրերից կարևորը՝ կամավոր էկոլոգիական պարտավորությունների լայն սպեկտրի որոշումը և իրագործումը (աշխատակազմի, ներդրողների, բաժնետերերի, հասարակության, տեղական իշխանության հանդեպ):

Տվյալ թերությունները վերացնելու համար առաջարկվում է՝

- ավելի հստակ և համառոտ ներկայացնել էկոլոգիական քաղաքականության տեքստը, որպեսզի այն ընկալվի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին սպառողների կողմից,
- հասարակությանը էկոքաղաքականության մասին տեղեկացնելու համար լայնորեն օգտագործել տեղեկատվական միջոցները՝ բուկլետները, պլակատները, գովազդային պաստառները,
- ինտերնետային ցանցում գործարանի կայքում տեղադրել էկոլոգիական քաղաքականության հիմնական դրույթները:

Նշենք նաև, որ տեղայնացման տեսանկյունից դիտարկվող մեթոդը բավականին մատչելի է և կարող է կիրառվել ՀՀ-ում թափոնների գործածության և այլ ոլորտներում:

**ԳԼՈՒԽ 3. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

**3.1 Բնապահպանական վերահսկողության հիմնախնդիրները
տնտեսական գործունեության էկոլոգացման ճանապարհին**

Վերջին տարիներին տնտեսագետները և բնապահպանները ավելի հաճախ են անդրադառնում տնտեսական գործունեության էկոլոգացման հիմնախնդիրների գիտական նոր լուծումների որոնմանը, հատկապես «կանաչ» էկոնոմիկայի համակարգային և ռազմավարական մշակումների շրջանակներում:

Առաջացած հիմնախնդիրների լուծումը բարդ և գիտատար է, քանի որ տնտեսական գործունեության էկոլոգացման ու բնապահպանական վերահսկողության ավանդական մոտեցումները ինչ-որ չափ սպառվել են, իսկ վերջնական էկոլոգաբնապահպանական արդյունքը դեռևս հուսադրող չէ:

Ներկայումս տնտեսական գործունեության էկոլոգացումը ստացել է գիտատեխնիկական նոր երանգ՝ արդիականացնելով արդյունաբերական արտադրության էկոլոգացման համալիր խնդիրների լուծումը՝ ռեսուրսախնայող և էներգախնայող տեխնոլոգիաների ներդրման միջոցով: Դրանով կարևորվեց նաև տեխնոլոգիաների պարտադիր էկոլոգացումը, հատկապես վերամշակող արդյունաբերական ճյուղերում՝ ներդնելով սակավաթափոն և էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաներ: Ըստ էության, դա հեռանկարային քայլ է առաջին կարգի տեխնոլոգիաների մշակման ուղղությամբ:

Նման գործողությունների ամբողջությունը դիտվում է ժամանակակից ինովացիոն ռազմավարական խնդիրների շարքում: Ենթադրվում է, որ միայն այդ գաղափարախոսությամբ հնարավոր է հարթել ճանապարհը դեպի էկոնոմիկայի էկոլոգացումը՝ զուգընթաց վերանայելով բնապահպանական վերահսկողության համակարգի զարգացման գերակայությունները: Գիտական գնահատումները


հաստատում են, որ տնտեսության նման տրանսֆորմացումը պետք է իրականացվի երկու նորամուծական տեխնոլոգիաների մշակման և ներդրման միջոցով՝

1. Վտանգավոր խառնուրդներից ելքային բաղադրիչների մաքրման տեխնոլոգիաներ (**էքստենսիվ մոտեցում**՝ հիմնված «խողովակի վերջավորության» էֆեկտի վրա): Տեխնոլոգիայի այս տեսակը, բացի վերջնական արդյունքի ստացումից, նաև հնարավորություն է տալիս չեզոքացնել վտանգավոր կողմնակի նյութերը/արտադրանքը:

2. Էկոլոգիապես մաքուր և անվտանգ տեխնոլոգիաներ: Այս ուղղությունը բովանդակությամբ և նշանակությամբ հայտնի է որպես բնության պահպանության **ինտենսիվ մոտեցում**, որը հիմնված է տեխնոլոգիաների պարփակության, անթափոնության, հումքի և էներգիայի խնայողության, այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործման սկզբունքների հաշվառման վրա:

Այս տեսանկյունից ուշագրավ են գիտական ուսումնասիրությունները, որոնցում փորձում են առաջարկել նոր մեթոդական մոտեցումներ տնտեսական գործունեության էկոլոգացման վերջնական արդյունքի գնահատման համար: Ուսումնասիրություններում գիտնականները եկան այն եզրույթի, որ տնտեսական գործունեության ցանկացած տեսակը պետք է ծավալվի այսպես կոչված, «**երկակի շահույթի**» **հայեցակարգի** հիման վրա և դրանում որոշակի կարգավորիչ նշանակություն ունի բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործումը:

Էկոլոգիական տեսանկյունից դա նշանակում է տեխնոլոգիաների մոդեռնացում, այսինքն՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցում, նրա կենսաապահովման որակի պահպանում և բնատեսուրսային ներուժի վաղաժամ հյուծման կանխում: Տնտեսական տեսանկյունից նշանակում է, որ յուրաքանչյուր էկոլոգիական շահույթը պետք է ապահովի տնտեսական շահույթ: Երկու շահույթների միջև այդ դեպքում կգործի փոխուժգնության էֆեկտը:



Սա այն էֆեկտն է, որը հարթում է կայուն զարգացման նպատակների հաղթահարման ճանապարհը՝ հրաժարվելով զարգացման այնպիսի մոդելներից, որոնք հիմնված են բնատարողության բարձր ցուցանիշների, ազգաբնակչության անթրոպոգեն էկոլոգիական հիվանդությունների աճի, էկոհամակարգային ծառայությունների արժեզրկման և բնական ռեսուրսների արտահանումից սոցիալ-տնտեսական զարգացման կախվածության վրա:

Նման հարցերի էկոլոգիական և իրավական կարգավորումը, ինչպես արդեն նշվեց, հնարավոր է «կանաչ» էկոնոմիկայի շրջանակներում կյանքի կոչելով տնտեսական գործունեության էկոլոգացման և նորամուծական/ինովացիոն ակտիվացման, բնապահպանական վերահսկողության բարձր տեղեկատվական կշիռ ունեցող ինտեգրատիվ ցուցանիշների մշակման մեթոդական մոտեցումները^{66, 67, 68}:

Այս ամենը պետք է կողմնորոշված լինի էկոնոմիկայի պարադիգմայի փոփոխությանը՝ հատկապես նրա հատվածավորման կառուցվածքի գործառնության մասով: Անհրաժեշտ է անցումը նյութական կուլտուրայի նոր մակարդակի, որը համադրելի և հավասարակշռված լինի բնական ռեսուրսներով արդեն իսկ աղքատացած շրջակա բնական միջավայրի հետ: Ժամանակակից էկոնոմիկան այլևս չի կարող զարգանալ ավանդական ճանապարհով և շրջանցել տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության էկոլոգիական հետևյալ սահմանափակումները՝

- շրջակա բնական միջավայրի ասիմիլացիոն ներուժի սահմանափակ հնարավորությունները,

- չվերականգնվող ռեսուրսների վերջավոր բնույթը:

Ժամանակակից գիտական հետազոտությունների արդյունքում ձևավորվել է հիմնարար կարծիք առ այն, որ տնտեսական զարգացումը պետք է ենթարկվի

⁶⁶ Яшалова Н.Н. “Зеленая” экономика: монография.-СПб, Изд-во Политехн, ун-та, 2014.-208 с.

⁶⁷ Lukyanchikov N.N., Potravny L.M. Economics and Organization of nature: a textbook.- Moscow: UNITU-DANA.-2014.-687p.

⁶⁸ Morozova E.V. Problems of allounding problems of nature // Economics Analysis: Theory and practice, 2009.-N4.-p. 58-62.

Էկոլոգիական իմպերատիվին՝ կողմնորոշվելով ցանկացած տնտեսական գործունեության (և տնտեսության ամբողջությամբ) խելամիտ «քանակական նահանջի» հանուն շրջակա միջավայրի, հասարակական առողջության և կյանքի որակական ցուցանիշների կայունության ապահովման: Հետևաբար, Էկոնոմիկայի տնտեսական գործունեության բոլոր ճյուղերի էկոլոգացումը ժամանակի հրամայական է: Այդ նպատակով առանձնացված են էկոլոգացման հետևյալ բաղադրիչները՝

- էկոլոգիական արժեքների, պայմանների և գործոնների ընդգրկումը տնտեսական կատեգորիաների համակարգի մեջ,

- Էկոնոմիկայի բնագավառի ինվեստիցիաների/ներդրումների կառուցվածքի վերանայում՝ ի օգուտ ռեսուրսախնայող և էկոլոգիապես անվտանգ ճյուղերի զարգացման,

- արտադրության անցումն որակական աճի ռազմավարությանը՝ ճյուղային կառուցվածքի փոփոխության և բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման ու տեխնիկական վերազինման հիման վրա,

- վճարովի բնօգտագործման համակարգի էկոլոգացում, անցում գնագոյացման նոր համակարգի, որը լիարժեք հաշվի է առնում էկոլոգիական սահմանափակումները/գործոնները, վնասները և ռիսկերը, ինչպես շրջակա միջավայրի, այնպես էլ հասարակական առողջության վրա ազդեցության դեպքում:

Անշուշտ, անհրաժեշտ է հրաժարվել շրջակա միջավայրի պահպանության հանդեպ մնացորդա-ծախսային մոտեցումից և տնտեսական զարգացման իրավահավասարության պայմաններում ապահովել հասարակական բարեկեցության սոցիալապես ընդունելի մակարդակ:

Գիտական որոնումները ներկայումս շարունակվում են «կանաչ» էկոնոմիկայի հայեցակարգային մշակումների ներքո: Որպես կանոն գիտնականները անդրադառնում են էկոնոմիկայի էկոլոգացման տարբեր ասպեկտներին և ավելի հաճախ էկոնոմիկայի էկոլոգացման ինտեգրատիվ ցուցանիշների մշակման խնդիրներին: Նշենք, որ այդ նպատակով օգտագործվում է պաշտոնական բաց վիճակագրական տեղեկատվությունը: Նման ուսումնասիրություններից մեկում,

օրինակ, կատարված է միջոցազորում տարածքի տարբերակումը ըստ տարածքների ընդլայնվածության և էկոլոգիական բնութագրի, համախառն տարածքային արդյունքի և բնակչության քանակության ցուցանիշների ⁶⁹: Դա հնարավորություն է տալիս որոշել աղտոտման ինտենսիվության ցուցանիշները, իսկ աղտոտման ինդեքսի հաշվարկի համար օգտագործել շուրջ 15 ցուցանիշ: Համեմատական վերլուծությունների միջոցով որոշվում է էտալոնային ռեգիոնը, որը ունի չափորոշիչների լավագույն փաստացի արժեք (առավելագույն կամ նվազագույն), որն էլ հավասար է մեկի: Այնուհետ գնահատվում է առաջատար տարածաշրջանի մասնաբաժինային հարաբերակցությունը այլ սուբյեկտների հետ՝ ըստ հետևյալ բանաձևերի՝

$$P_i^n = K_i^n / K_{max}^n \text{ կամ } P_i^n = K_{min}^n / K_i^n,$$

որտեղ

K_i^n - i տարածաշրջանի n-րդ բազային ցուցանիշի արժեքն է

K_{max}^n, K_{min}^n - n-րդ բազային ցուցանիշի լավագույն առավելագույն կամ նվազագույն արժեքն է

P_i^n = i-րդ ռեգիոնի զարգացման մակարդակի գնահատումն է առաջատար ռեգիոնի n-րդ ցուցանիշի նկատմամբ

Տեղին է նշել, որ հեղինակների կարծիքով առաջարկվող մեթոդական մոտեցումը բավականին պարզ է, չունի տեղեկատվական ապահովվածության սահմանափակումներ և չի պահանջում թանկարժեք ծրագրավորման միջոցներ: Հեղինակի ենթադրությամբ, այս մոտեցումը կարելի է իրագործել ՀՀ-ում՝ մարզերի մակարդակով կրիտիկական էկոլոգիական գոտիների հայտնաբերման և ստուգման, միջհամայնքային տարածքների տարբերակման համար:

Կոռեկցիայի խնդրի օպտիմալացման համար նախընտրելի է գնահատման ցուցանիշների քանակության կրճատում՝ ըստ դրանց տեղեկատվական կշռի

⁶⁹ Яшалова Н.Н. Эколого-экономический аспекты регионального устойчивого развития. Изд-во Политехн. Ун-та.-2013.-136 с.

հաշվառման, և պարտադիր ձևով գնահատել բնակչության հիվանդության հետ կապված տնտեսական վնասը: Տվյալ համատեքստում անհրաժեշտ է համաձայնել նաև գիտական այն դրույթը, որ տնտեսության/էկոնոմիկայի էկոլոգացումը մեկուսացված ոլորտ չէ, այլ ինտեգրված է էկոլոգացման ընդլայնված համակարգի մեջ՝ ներառելով նաև էներգետիկայի, տրանսպորտի և գյուղատնտեսության էկոլոգացման համալիր խնդիրները:

Նշված ոլորտների էկոլոգացման կապող օղակը տեխնոլոգիական նորամուծություններն են, որոնց ներդրումը և բնապահպանական վերահսկողության մեխանիզմների խելամիտ կիրառումը կարող է կարգավորել ռեսուրսախնայողության և շրջակա միջավայրի էկոլոգիական որակի կայունության ապահովման հիմնախնդիրները:

Միջազգային փորձի ուսումնասիրումը հնարավորություն ստեղծեց կողմնորոշվել գիտական այն հարցերում, որոնք կարող են երաշխավորել վերահսկողական աշխատանքների գործիքների ճիշտ ընտրությունը: Պետք է նշել, որ հետազոտությունների այդ փուլում դժվար էր նախապատվությունը տալ բնապահպանական վերահսկողության որևէ երկրի տեսչական գործունեության մեթոդաբանությանը, գնահատման ցուցանիշների համարժեք ընտրությանը, գործող կառուցվածքին, կադրային և ֆինանսական ապահովվածությանը:

Համալիր վերլուծություններից միանշանակ երևում էր ստուգման գործընթացների արդյունավետության գնահատման ցուցանիշների «ավանդական» բնույթը և նմանությունը: Սակայն զգալիորեն տարբերվում են իրավակիրառման մեխանիզմները, նորմերը և ցուցանիշները/ինդիկատորները: Հեղինակի կարծիքով, անժխտելի է այն փաստը, որ միայն ստուգման այցելությունների քանակության կրճատման միջոցով դժվար է երաշխավորել տեսչական գործունեության արդյունավետությունը: Այս դեպքում կարելի է փաստել արդյունավետության ավելի շատ «թվացյալ», քան իրական շոշափելի էֆեկտը:

Հետևաբար, այս պարագայում դժվար է ակնկալել որևէ երկրում, այդ թվում նաև ՀՀ-ում, կոռուպցիոն ռիսկերի կանխումը, եթե բնապահպանական ուղղությունների բազմազանության պայմաններում անհայտ են մնում գնահատման

մեթոդական մոտեցումները: Բացակայում են դրանց կանխման չափորոշիչները:

Տվյալ համատեքստում արդիականանում է նաև հաշվետվությունների ներկայացման, և դրանց հիման վրա տեսչական աշխատանքների արդյունավետության գնահատման տարբեր մեխանիզմների կիրառման նպատակահարմարությունը: Հեղինակի կարծիքով այստեղ այնքան էլ համոզիչ չէ որևէ ունիվերսալ մեկ «բացառիկ» մոտեցման ընդունումը: Բացի այդ, ՀՀ-ում ինտերնետային տարբերակով հաշվետվությունների ներկայացումը դեռևս չի նշանակում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիք, քանի որ կոռուպցիոն ռիսկերը ունեն համալիր բազմագործոնային բնույթ և գնահատման մեթոդաբանություն: Տվյալ դեպքում արդարացված է հիմնականում տեսչական գործունեության թափանցիկության ապահովման սկզբունքի կիրառումը:

Տեսչական/վերահսկողական աշխատանքների գնահատման տեսանկյունից այնքան էլ ընդունելի չեն ՀՀ-ում «տնտեսվարող սուբյեկտների հետ տեսուչների շփումների նվազեցումը» (60%-ով կրճատվել է տեսչական ստուգումների թիվը), քանի որ դա կոռուպցիոն ռիսկերի կրճատման լավագույն/օպտիմալ տարբերակներից չէ ⁷⁰: Հետևանքներից կարող է լինել խորհրդատվական աշխատանքների արդյունավետության կտրուկ անկումը տեսչական ուսումնասիրությունների ընթացքում:

Տեղայնացման համար ընդունելի են, օրինակ, հաշվետվությունների ներկայացման կարգը և աշխատանքի արդյունավետության գնահատման մեխանիզմները, որոնք կիրառվում են Շոտլանդիայում: Այսպես, առանձնացված են հաշվետվությունների երեք տեսակ՝

- ամենամսյա - վկայագրում է գործունեության իրականացման ծավալները,
- եռամսյակային - ցույց է տալիս, թե ինչպես են կատարվում օրենսդրության և արդյունքների նպատակային ցուցանիշները,
- տարեկան - վկայում է գործունեության առաջընթացի մասին:


Ընդ որում, սահմանված են հատուկ պահանջներ՝ կապված տնտեսվարող

⁷⁰ ՀՀ բնապահպանության նախարարություն: Նախարարական զեկույց. 2007-2011թթ.– Երևան, 2011. – էջ 33-34:

սուբյեկտներին բնապահպանական լիցենզիաների տրամադրման և իրավակիրառման մեխանիզմների արդյունավետության ապահովման հետ: Դրանք կողմնորոշված են շրջակա միջավայրին պատճառման վնասների կրճատմանը, նրա էկոլոգիական որակի պահպանմանը:

Հետազոտության արդյունքներից պարզ դարձավ նաև, որ ՀՀ-ի բնապահպանական վերահսկողության համակարգի տեսչական ստուգումներում և ուսումնասիրություններում լիարժեք չի օգտագործվում ռիսկի գնահատման մեթոդաբանությունը, և նրա կապը վնասների ու վտանգների կանխման հետ:

Խոսելով ՀՀ բնապահպանական վերահսկողության համակարգի արդյունավետության մասին՝ անհրաժեշտ է, նախ և առաջ, պետական կառավարման մարմիններին և լայն հասարակայնությանը ներկայացնել/տրամադրել հավաստի տեղեկատվություն **«ներդրումներ»**, **«գործունեության ինտենսիվություն»** և **«վերջնական արդյունք»** էկոլոգիական հսկողության արդյունքների գնահատման եռանկյան շրջանակներում:



Գծապատկեր 3. 1. 1

Էկոլոգիական հսկողության արդյունքների գնահատման կառուցակարգը⁷¹

որտեղ՝

Ն- ցուցանիշների/ինդիկատորների քանակության

ստուգողական/վերահսկողական մարմինների բյուջե

ԳԻ - ստուգումների քանակը և իրավակիրառման միջոցների քանակը

⁷¹ Մշակվել է հեղինակի կողմից:

ՎԱ - իրավակիրառման գործունեության արդյունավետության

գնահատում՝ հաշվի առնելով այն գործոնները, որոնք կախված չեն տեսուչների գործողություններից:

Բոլոր դեպքերում, գնահատման ցուցանիշների գրագետ և հիմնավորված ընտրությունը, և դրանց հիման վրա էկոլոգիական նորմերի դինամիկ փոփոխությունների, նվաճումների և ծառայած հիմնախնդիրների հավաստի արտացոլումը կարող է նպաստել էկոլոգիական քաղաքականության գերակայությունների շտկմանը՝ փոփոխվող ներքին և արտաքին պայմաններում:

Անորոշ իրավիճակ է ձևավորված՝ կապված ՀՀ բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի էկոլոգիական որակի ազդեցության հետ, որտեղ ակնհայտորեն դիտվում է «տեսչական գործունեության պասիվությունը» և դրա մասին տեղեկատվության սահմանափակությունն ու անմատչելիությունը: Այս բնագավառում առկա են կազմակերպական, մեթոդաբանական, տեղեկատվական, կադրային, ֆինանսական և գիտական ապահովման բազում հիմնախնդիրներ:

Դեռևս 1999թ.-ին Լոնդոնում կայացած շրջակա միջավայրի պահպանության և մարդու առողջության հարցերին նվիրված նախարարների 3-րդ կոնֆերանսում (**The Third Ministerial Conference on Environmental and Health**) ընդունվեց հռչակագիր՝ նշելով համապատասխան տեղեկատվական համակարգերի ստեղծման և մոնիթորինգային դիտարկումների իրականացման հրատապությունը, հատկապես հասարակական առողջությանը պատճառված ռիսկերի/վնասների գնահատման և կանխման տեսանկյունից: ՀՀ-ում այդ գործընթացը չունեցավ արժանի գիտական արձագանք:

Այդ նպատակով առաջարկվել են իրականացնել հասցեական միջոցառումներ, որոնք իրենց դրական ազդեցությունը կարող են ունենալ բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման վրա:

ՀՀ-ում տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործումը պետք է կողմնորոշված լինի, նախ և առաջ, տեսչական գործունեության գնահատման համակարգային փոփոխությունների իրականացմանը և հետևյալ խնդիրների լուծմանը՝

- ✓ գնահատման ավանդական ցուցանիշներից անցում կատարել կատարելագործված քանակական նոր ցուցանիշների օգտագործմանը,
- ✓ որոշել և գիտականորեն հիմնավորել առավել նշանակալի և տեղեկատվական բարձր կշիռ ունեցող ցուցանիշների և չափորոշիչների ներդրումը,
- ✓ իրականացնել տնտեսվարող/բնօգտագործող հզոր սուբյեկտների գույքագրում և ստեղծել դրանց կառավարման ու բնապահպանական վերահսկողության և որոշումների կայացման վերահսկողական տեղեկատվական համակարգ,
- ✓ բարձրացնել տեսուչների անհատական պատասխանատվությունը տրամադրվող տեղեկատվության և ստուգման գործընթացի որակի համար,
- ✓ վիճակագրական տվյալների, անհատական ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքների համակարգչային մշակումների ծրագրային ապահովում,
- ✓ հաշվետվությունների տեղեկատվության և անհատական ստուգումների ու ուսումնասիրությունների հիման վրա տեսչական գործունեության «թեժ»/պրոբլեմային տեղամասերի որոշում և ռիսկերի, վնասների ու վտանգների կանխման բնապահպանական միջոցառումների մշակման գործընթացներում տնտեսվարող սուբյեկտներին խորհրդատվական ծառայությունների տրամադրում,
- ✓ տեսչական գործունեության արդյունավետության բարձրացման հարկադրական և աուդիտորախորհրդատվական մեխանիզմների սիներգետիկ ներգործության էֆեկտի ապահովում,
- ✓ բնապահպանական և բնօգտագործման լիցենզիաների/թույլտվությունների տրամադրման, դրանց իրագործման և շրջակա միջավայրին հասցվող վնասների ու վտանգների կանխման, օրենսդրության համապատասխանությանը ստուգման իրավակիրառման լծակների ընդլայնում,
- ✓ տեսուչների արհեստավարժության մակարդակի բարձրացում և գիտելիքների հարստացում,

- ✓ հասարակական էկոլոգիական հսկողության համակարգի ներդրում և գործունեությանը պետական աջակցում,
- ✓ բնապահպանական վերահսկողության ոլորտի մասնագետների պատրաստում ՀՀ-ի բուհական համակարգում:

Վերոնշյալից հետևում է, որ տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործումը պետք է իրականացվի որոշակի ընդհանուր շրջանակներում և համապատասխանի հետևյալ պահանջներին՝

- ✓ տեսչական անձնակազմի կայուն հաստիքային քանակություն, տեխնիկական (այդ թվում՝ հետազոտական դյուրակիր) միջոցներով հագեցվածություն և ֆինանսական աջակցում՝ ազգային բնապահպանական հիմնադրամներից,
- ✓ ստուգվող օբյեկտների հիմնախնդիրների և բնապահպանական քաղաքականության մանրամասն դիտարկում տեսչական անձնակազմի կողմից,
- ✓ բնօգտագործման թույլտվությունների և լիցենզիաների համակարգի առկայություն և հսկողության ու որոշումների կայացման IT տեխնոլոգիաներով ապահովում,
- ✓ տեսչական գործունեության մոնիթորինգային համակարգի ընդլայնում ՀՀ մարզերում և սահմանամերձ շրջաններում էկոլոգիական անվտանգության ապահովման տեսանկյունից,
- ✓ վարչատարածքային փոփոխությունների և համայնքների խոշորացման պայմաններում հստակեցնել բնապահպանական վերահսկողության համակարգի գործունեության ֆունկցիոնալ գործառույթները և կանխել տեսչական գործունեության հնարավոր տարածայնությունները,
- ✓ տեսչական ստուգումների իրականացման ադապտացված մեթոդաբանության և գնահատման ցուցանիշների առկայություն, հատկապես ռիսկի, վնասների և վտանգների գնահատման մասով,
- ✓ շրջակա միջավայրի էկոլոգիական որակի գնահատման ստանդարտացված մեթոդների և համապատասխան սարքավորումների առկայություն:

Անհրաժեշտ է նաև իրատեսական գնահատում տալ տեսչական ստուգումների ցուցանիշների նորացմանն ու կիրառման հնարավորություններին:

Էկոլոգիական աուդիտի միջազգային փորձի, ինչպես նաև շրջակա միջավայրի կառավարման ու բնապահպանական վերահսկողության ազգային համակարգի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ տնտեսական գործունեության հսկողության նոր տեսակի՝ ԷԱ-ի ներդրումն և զարգացումը հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներից է: Դրա լուծման անհրաժեշտության մասին է վկայում Էկոաուդիտի առաջատար միջազգային փորձը, մասնավորապես ԱՄՆ-ում, Կանադայում և մի շարք եվրոպական երկրներում: Հուսադրող են նաև ԷԱ-ի ներդրման և բնապահպանական վերահսկողության համակարգի հաստատման համար նախադրյալները ՀՀ-ում:

Աուդիտորական ծառայությունների ոլորտի կարգավորման ուղղությամբ ՀՀ-ում կատարված առաջին քայլը կարելի է համարել 2001թ.-ին Հաշվապահների միջազգային դաշնության կողմից հրատարակված «Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխանող աուդիտորական գործունեության կանոնների» ստանդարտների ընդունումը: Այնուհետև, 2002թ.-ին ընդունվեց «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում են աուդիտորական գործունեության իրականացման հիմունքները և կանոնակարգվում աուդիտորական գործունեության հետ կապված իրավահարաբերությունները:

Վերը նշված իրավաբանական ակտերում, սակայն անդրադառձ չկա աուդիտի առանձին տեսակներին, մասնավորապես՝ Էկոլոգիական աուդիտին: Այնուամենայնիվ, ուսումնասիրության արդյունքում եկանք այն կարծիքի, որ **աուդիտորական գործունեությունը նպատակահարմար է ներդնել նաև ՀՀ բնապահպանության և բնօգտագործման ոլորտների վերահսկողության միասնական համակարգում:** Այդ ուղղությամբ կարևոր օրենսդրական նախաձեռնություն է ՀՀ Կառավարության կողմից 2009թ.-ի «Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում իրականացնելու մասին» օրենքի նախագծի ներկայացումը ՀՀ ԱԺ հաստատմանը:

Էկոաուդիտը, որպես ինքնահսկման նոր ձև, ունի ֆունկցիոնալ բավականի լայն շրջանակներ, մասնավորապես տնտեսվարող սուբյեկտների և կազմակերպությունների գործունեության արտադրական գործընթացի վիճակի,

ավելի ստույգ՝ էկոլոգիական հաշվեկշռի (հումքի օգտագործման ընթացքում առաջացած վնասակար նյութերի որակի և քանակի, օգտագործվող բնական ռեսուրսների որակի և քանակի) ու բնապահպանական օրենսդրության պահանջներին համապատասխանության գնահատման մասով:

Սակայն ԷԱ-ն ավելի հաճախ դիտվում է միայն որպես իրավիճակային գնահատման գործընթաց: Մինչդեռ, ինչպես արդեն նշել ենք, բացի գնահատման գործընթացից կարևորվում է նաև բնապահպան գործունեության բարելավմանը ուղղված էկոաուդիտորական առաջարկությունների մշակումը՝ դրսևորելով *բիֆունկցիոնալ նշանակության խորհրդարկական վերահսկողության ծառայություն*: Ավելին, էկոլոգիական աուդիտի իրականացումը բնապահպանական վերահսկողության հետ համատեղ հնարավորություն կտա ձեռնարկությանը բարելավել ոչ միայն բնապահպան և ֆինանսական ցուցանիշները, ապահովել տնտեսական շահավետությունն ու էկոլոգիական անվտանգությունը, այլ նաև թողարկվող արտադրանքի որակը՝ դարձնելով այն ավելի մրցունակ:

3. 2 Տեսչական ստուգումների ցուցանիշների նորացման և կիրառման հնարավորությունները

Տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման նպատակով միջազգային մեթոդաբանությունից առանձնացված են էկոաուդիտորական աշխատանքային լրամշակված երեք փաստաթղթեր, որոնք կարող են հեռանկարային լինել ՀՀ-ում տեսչական ստուգումների իրականացման համար: Դրանք են՝

Տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման ուղղություն A:

1. Աուդիտորի աշխատանքային փաստաթուղթ/քաղաքականության թեստային հարցաթերթ,
2. Աուդիտորի աշխատանքային փաստաթուղթ.թափոնների աուդիտի ընդհանուր մեթոդիկա,

3. Թեստ «Կազմակերպության արտադրության և սպառման թափոններ»:

Ենթադրվում է, որ ՀՀ-ում էկոաուդիտի կամավոր անցկացումը խթանելու հետ մեկտեղ նպատակահարմար է նաև տնտեսվարման առավել վտանգավոր/ռիսկային ձևերի համար պարտադիր էկոաուդիտի պահանջների օրենսդրորեն ամրագրումը: Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության ազգային համակարգում էկոաուդիտի իրավական կարգավորումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է՝

- ✓ մշակել և օրենսդրորեն ամրագրել էկոաուդիտորներին ներկայացվող մասնագիտական/որակական պահանջները,
- ✓ ներդնել էկոաուդիտորներին սերտիֆիկատների/լիցենզիայի տրամադրման կարգը,
- ✓ սահմանել պարտադիր ԷԱ-ն պահանջող գործունեության տեսակները և էկոաուդիտի եզրակացության կարգավիճակը,
- ✓ էկոաուդիտի անցկացման ծախսերի դասակարգման կարգի հաստատում,
- ✓ տեսչական գործունեության տեսակների դասակարգիչներում էկոաուդիտը որպես գործունեության ինքնուրույն տեսակ ներկայացում,
- ✓ պետության կողմից անհրաժեշտ որակի էկոաուդիտորական ծառայությունների իրականացման համար երաշխիքների ապահովում՝ ատեստավորման, գործունեության վերահսկման և այլ ճանապարհներով:

Էկոաուդիտի իրավական նորմերի և մեթոդաբանության ուսումնասիրումը թույլ է տալիս միանշանակ հանգել այն կարծիքի, որ ԷԱ-ն անհրաժեշտ է որպես էկոլոգիական հաշվառման, ձեռնարկության հաշվետվություններում նորմերի և կանոնների պահպանման հսկողության գործիք: Հետևաբար ԷԱ-ի և ֆինանսական (ընդհանուր) աուդիտի փոխկապվածությունը այսուհետ անհրաժեշտ է դիտել ժամանակակից բնապահպանության քաղաքականության ու վերահսկողության նոր դիրքերից: Հասնել նրան, որ ԷԱ-ի արդյունքները ազդեն տնտեսական շահութաբերության վրա, ընդլայնեն ֆինանսական և կապիտալ ներդրումները ու զարգացնեն կոմերցիոն հետաքրքրությունը՝ կապված էկոլոգիական ոլորտում

ձեռնարկության գործունեության եկամուտների և էկոլոգիական ռիսկերի նվազեցման հետ:

Ենթադրվում է, որ էկոլոգիական աուդիտը՝ որպես ժամանակակից աուդիտորական գործունեության ազդեցիկ տեսակ, գաղափարապես ներդաշնակ է բնապահպանական վերահսկողության հիմնադրույթներին և գիտական բովանդակությամբ, սկզբունքներով և մեթոդաբանությամբ արդարացիորեն կարող է ապահովել իր տեղը և ֆունկցիոնալ կարգավիճակը ՀՀ-ի բնապահպանական վերահսկողության ընդհանուր համակարգում: Համոզիչ են նաև օգուտները, որոնք կարող է ստանալ կազմակերպությունը էկոլոգիական աուդիտի անցկացումից՝

- էկոլոգիական հարկերի և բնօգտագործման վճարումների հաշվարկներում սխալների հայտնաբերում՝ ինչը հնարավորություն է տալիս բացառել սուղանքների ավելագումարները,
- բարձրանում է սահմանափակ բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը՝ ավելացնելով ռեսուրսի միավորի դիմաց արտադրանքի թողարկումը, լրացուցիչ եկամուտների ստացումը,
- թողարկվող արտադրանքի էկոլոգիականության հավաստիացման միջոցով նրա մրցունակության, հետևաբար նաև գնման պահանջարկի և կազմակերպության եկամուտների երաշխավորում,
- էկոլոգիական և տեխնաժին աղետների/վթարների ռիսկերի կրճատում, վնասների և վտանգների կանխում,
- հսկողական և խորհրդատվական աուդիտորական ստուգման մեխանիզմների փոխուժգնության միջոցով բնապահպանական վերահսկողության վերջնարդյունքի բարձրացում,
- բնապահպանական վերահսկողության մեխանիզմի գործիքակազմի ընդլայնում, ստուգման ցուցանիշների տեղեկատվական կշռի բարձրացում,
- ձեռնարկության նորամուծական տեխնոլոգիական գործունեության խթանում:
Էկոլոգիական աուդիտի ներդրումը ՀՀ բնապահպանական հսկողության համակարգում էապես կբարելավի տնտեսական և գործունեության այլ տեսակների

բնապահպանական վարկանիշը, շրջակա միջավայրի որակը՝ խրախուսելով ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը:

Տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի կադրային ապահովման ուղղություն B:

ՀՀ-ում շրջակա միջավայրի վիճակի և հասարակական առողջության մասին տեղեկատվությունը տարածված է տարբեր գերատեսչությունների միջև: Սակայն կապը շրջակա միջավայրի էկոլոգիական որակի և մարդու առողջության վրա չունի անհրաժեշտ մակարդակի գիտական հիմնավորում ու մեթոդական ապահովում: Մշակված ու ստանդարտացված չեն այդ կապը բնութագրող գնահատման ինդիկատորները:

Ստեղծված իրավիճակում դժվար է ակնկալել տեսչական գործունեության որևէ առաջընթաց, քանի որ մշակված և ներդաշնակ չեն գնահատման նոր ինդիկատորները, տվյալների հավաքագրման և համակարգման միջուկները և հաշվետվությունների ներկայացման կարգը: Ենթադրվում է, որ այստեղ որոշիչ դերակատարություն ունեն ՀՀ առողջապահության, ՀՀ բնապահպանության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունները՝ հաշվի առնելով դրանց ֆունկցիոնալ առանձնահատկությունները: Հաշվարկներում որպես կողմնորոշիչ կարելի է օգտագործել հեղինակի կողմից մշակված էկոլոգաառողջապահական ինդիկատորների հետևյալ մատրիցը (աղյուսակ 3. 2. 1):

Աղյուսակ 3. 2. 1

Տեսչական ստուգումների էկոլոգաառողջապահական ինդիկատորների մատրիցա

N	Ինդիկատորների անվանումները
1	Շրջակա միջավայրի աղտոտման արձանագրված էկոլոգիական իրավախախտումների քանակը, միավոր
2	Շրջակա միջավայրին պատճառված էկոլոգիական վնասը, հազ. դրամ
3	Հասարակական առողջապահությանը պատճառված էկոլոգիական վնասը, հազ. դրամ,
4	էկոլոգիական վնասի ենթարկված մարդկանց թիվը, միավոր
5	էկոլոգիական հիվանդությամբ տառապող մարդկանց ընդհանուր թիվը, միավոր
6	էկոլոգիական հիվանդությամբ տառապող 0-14 տարեկան մարդկանց թիվը, միավոր
7	էկոլոգիական վնասի հատուցման արձանագրությունների քանակը, միավոր
8	Շրջակա միջավայրին պատճառված էկոլոգիական վնասի հատուցման գումարը, հազ. դրամ,

9	Շրջակա միջավայրին պատճառով Էկոլոգիական վնասի սահմանված ժամկետում հատուցված գումարը, հազ. դրամ
10	Էկոլոգիական հիվանդության վնասի հատուցման գումարը, հազ. դրամ,
11	Էկոլոգիական հիվանդության սահմանված ժամկետում վնասի հատուցված գումարը, հազ. դրամ,
12	Էկոլոգիական հիվանդության վնասի հատուցման գումարը/100000 բնակչության հաշվով, հազ. դրամ

Բնակչության հիվանդության տնտեսական վնասը ($V_{հիվ}$) կարելի է գնահատել հետևյալ բանաձևի օգնությամբ ⁷²,

$$V_{հիվ} = \sum_{i=1}^n N_i \sum_{j=1}^m (A_{pij} \cdot B_{pij} - A_{kij} \cdot B_{kij}) \cdot C_{ij}$$

որտեղ՝

i – ն – բնակչության հասակային խմբի համարն է

j – ն – նոզոլոգիական միավորի կամ հիվանդությունների խմբի համարն է

N_i – ն – բնակչության քանակությունն է i -րդ հասակային/տարիքային խմբում

A_{pij}, A_{kij} – աղտոտված և ստուգողական շրջանների համապատասխան 1000

մարդկանց համար որոշված հիվանդությունների քանակն է

B_{pij}, B_{kij} – j -րդ տեսակի հիվանդության տևողությունն է աղտոտված

և ստուգողական (ֆոնային) շրջաններում

C_{ij} – հիվանդության ծախսերը, այսինքն հասարակության մեկօրյա կորուստներն

են՝ կապված մեկ մարդու հիվանդության հետ: C_{ij} բաղկացած է

բուժապասարկման ծախսերից, աշխատանքի դուրս չգալու պատճառով

չստացված եկամուտներից, ժամականավոր աշխատունակության

կորստի նպաստներից և այլնից:

⁷² Акимова Т.А., Кузьмин А.П., Хаскин В.В. Экология. Природа-Человек-Техника. ЮНИТИ.-М.-2001.-с. 299- 231.

Անշուշտ, տվյալ պարագայում անհրաժեշտ է մշակել հիվանդության արձանագրման ձևը, գրագետ ընտրել վնասի գնահատման մեթոդիկան և հիմնավորել հատուցման կարգը, օրենսդրական/իրավական կարգավորման լծակների կիրառման նպատակահարմարությունը: Դա նաև կարողականացնի ՀՀ-ում (ներառյալ՝ առանձին մարզերում) էկոլոգիական ապահովագրության համակարգի ներդրման անհրաժեշտությունը և ներդաշնակության մեխանիզմի/սկզբունքների ապահովումը երկրում գործող բժշկական ապահովագրության համակարգի հետ:

Տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման ուղղություն C:

Տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման տվյալ ուղղության մեջ շեշտադրված է աուդիտորական ստուգման գործընթացում բարձր ռիսկի արդյունաբերական ձեռնարկությունների տոկոսի ցուցանիշի ռազմավարական նշանակությունը:

Տեղեկատվությունը դրա մասին էապես բարձրացնում է տեսչական ծառայության արդյունավետությունը՝ արժեվորելով տեսուչների արհեստավարժության վարկանիշը և ապահովելով նրանց ծառայության թափանցիկությունը: Մեքսիկայում, օրինակ, էկոլոգիական հսկողության համակարգի

«բարձր ռիսկի արդյունաբերական ձեռնարկությունների» թիվը, որպես կանոն, գրանցվում է էկոլոգիական աուդիտի Ազգային ծրագրում:

Տվյալ համատեքստում տեղայնացման համար հետաքրքիր է բնապահպանական օրենսդրության և իրավակիրառման ինդիկատորների պահպանման **նիդերլանդյան փորձը**: Երկրում գործում է պարզ սկզբունք՝ **օրենսդրության պահպանման ինդիկատորը համարվում է օրենսդրության չպահպանման ցուցանիշ**:


Առանձնացված են օրենսդրության պահպանման բացթողումների չորս դաս՝

	դաս	տրոկոս
- պատշաճ	1	90-100
- բավարար	2	90-80
- միջակ	3	80-60
- ոչ պատշաճ	4	<60

Նույն մեթոդաբանությամբ փորձագետները դասակարգել են ռիսկի ինդիկատորները՝

ռիսկի ինդիկատոր	նշում	դաս
- բավականին բարձր	++	դաս 4
- բարձր	+	դաս 3
- միջին	+/-	դաս 2
- ցածր	-	դաս 1

Ռիսկի և օրենսդրության պահպանման ինդիկատորների տեղադրումը **2x2 մատրիցի** տեսքով հնարավորություն է տալիս որոշել գործողությունների գերակայությունը (գծապատկեր 3. 2. 2)⁷³.




Գծապատկեր 3. 2. 2

Ռիսկերի և օրենսդրության չպահպանման մատրիցը

⁷³Оценка систем экологического контроля: Измерять значимое. Материалы международного семинара по индикаторам соблюдения норм экологического права и правоприменения. 3-4 ноября 2003г. Париж (Франция), с .111

Միջազգային փորձի տեղայնացման առումով կարելի է նշել նաև **Գերմանիայում կիրառվող հողերի և ստորերկրյա ջրերի աղտոտման ռիսկի** գնահատման մեթոդական մոտեցումը՝ օգտագործելով չափանիշների հինգ կատեգորիաները և շրջակա միջավայրի աղտոտման մակարդակի քանակական տվյալները:

Մասնագիտական վերլուծությունները վկայում են, որ այս մեթոդը հնարավորություն է տալիս տեսուչին հայտնաբերել առավել վտանգավոր տարածքները և ժամանակին իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ: Տվյալ դեպքում ստուգման և գնահատման գործընթացներում կարևորվեց **(3x3)** հատուկ մատրիցների կիրառումը, որոնց միջոցով հնարավոր եղավ ռիսկային իրավիճակների հայտնաբերումը (գծապատկեր 3. 2. 3):



Հետևանքների մասշտաբները

Գծապատկեր 3. 2. 3

Հողերի և ստորերկրյա ջրերի աղտոտման ռիսկի գնահատում

Ձևավորված է նաև կարծիք առ այն, որ տեսչական գործունեության վերջնարդյունքում դեռևս նկատելի են տարածքներով բաժանված տեսչությունների գործունեության գնահատման տարբեր արժեքները՝ հաշվի առնելով, օրինակ՝ վթարից տուժված տարածքների մոտիկության, խոշոր արդյունաբերական

ձեռնարկությունների, անտառային, ջրային օբյեկտների առկայություն և այլն (գումարային ցուցանիշների գնահատման մեթոդների բացակայություն): Ենթադրվում է, որ վերջին դեպքում ստուգման ընդունելի տարբերակներից կարող է լինել հենց մատրիցների մեթոդի կիրառումը, որի արդյունավետությունը առավել բարձր է, եթե համադրելի են դիտարկվող ցուցանիշները և գործունեության ընդհանուր շրջանակները:

Այստեղից հետևում է, որ առաջնահերթ խնդիր է տեսչական գործունեության ստուգման/ գնահատման մեխանիզմի գործիքակազմի համալրումը մեթոդական նոր մոտեցումներով: Դրա հրատապությունը առավել արդիական է տնտեսական գործունեության նախագծերի բնապահպանական փորձաքննության ոլորտում իրականացվող տեսչական ստուգումներում: Ելնելով բնապահպանական փորձաքննության գիտական բովանդակությունից և գործառնական նշանակությունից՝ ոլորտում առկա է որոշակի հակասություն փորձաքննության և տեսչական հսկողության մեթոդաբանության միջև:

Բնապահպանական փորձաքննության համակարգում տեսչական հսկողությունը իրականացվում է ՇՄԱԳ-ի մոնիթորինգային փուլում, որի կարևորությունը գրեթե անտեսված է գործող օրենսդրությամբ: Նման պայմաններում դժվար է որոշել ինչպիսի ինդիկատորների հիման վրա է կատարվում ստուգումը, կամ օժտված է արդյոք տեսուչը համապատասխան գիտելիքներով իրավակիրառման տեսանկյունից: Այս դեպքում կարծես նվազում է փորձաքննական հսկողության դերը բնապահպանական փորձաքննության համակարգում:

Ենթադրվում է, որ տեղի է ունենում ֆունկցիոնալ գործունեության անհստակություն, որի շրջանակներում ավանդական տեսչական ստուգումները չեն կարող ապահովել հետնախագծային վերլուծության/մոնիթորինգային փուլի վերջնարդյունքը:

Հաշվի առնելով էկոլոգիական ինդիկատորների ընտրության միջազգային չափորոշիչները, քաղաքական կողմնորոշվածությունը և օգտագործողի համար նպատակահարմարությունը, անալիտիկ հուսալիությունը և չափելիությունը

տեսչական գործունեության արդյունավետության գնահատման ավանդական ցուցանիշները կարելի է համալրել հետևյալներով՝

1. նախապահականության և խախտումների վերացման աշխատանքների հատկացված օրերի քանակությունը,
2. բարձր ռիսկի և էկոլոգիական վտանգի արդյունաբերական ձեռնարկությունների տոկոսը,
3. կրիտիկական էկոլոգիական գոտիների ստուգման տոկոսը,
4. կրիտիկական էկոլոգիական գոտիներում քաղաքացիական/ հասարակական կազմակերպությունների թիվը,
5. ստուգումների արժեքը հաշվարկված մեկ գոտու, մեկ տեսուչի և մեկ մարզի համար,
6. բարձր ռիսկի և վտանգի արդյունաբերական ձեռնարկությունների ստուգման թիվը,
7. ազդեցության միջոցների արդյունավետության գործակից (ԱՄԱԳ), % (դատարանում դիտարկված գործերի քանակություն (դիգք)/դատարան հասցեագրված գործերի քանակություն (դիգք) $K_{ամագ} = P_{դիգք} / P_{դիգք}$),
8. շրջակա միջավայրին վնաս պատճառող խախտումների թիվը,
9. հասարակական առողջությանը վնաս պատճառող խախտումների թիվը:

Տեղայնացման համար դրանք առավել ցանկալի են մարզերի բնապահականական վերահսկողության կրիտիկական էկոլոգիական գոտիներում:

Տնտեսական գործունեության բնապահականական վերահսկողության

համակարգի կարարելագործման ուղղություն D:

Միջազգային փորձի ամփոփումը վկայում է, որ բավականին արդյունավետ է դատախազական վերահսկողությունը բնապահականական փորձաքննության համակարգում, որտեղ գրեթե նույնատիպ գործունեություն է ծավալում, օրինակ, ՀՀ բնապահականության նախարարության համակարգում գործող Պետական բնապահականական տեսչությունը:

Ազգային փորձից երևում է, որ վերջինիս գործունեությունը բնապահպանական փորձաքննության համակարգում ինչ-որ չափ պայմանական բնույթի է, իսկ իրավակիրառման տեսանկյունից՝ անարդյունավետ:

Ռուսաստանի Դաշնությունում, օրինակ, օրենսդրորեն հստակեցված է «քրեական պատասխանատվություն» իրավաբանական կատեգորիան, ինչը հնարավորություն է տալիս, բոլոր այն անձանց, որոնք կատարել են էկոլոգիական հանցագործություն, ենթարկել քրեական պատասխանատվության (այդ թվում՝ պաշտոնեական անձինք կամ կոմերցիոն կազմակերպություններում կառավարչական ֆունկցիաներ իրականացնող անձինք)⁷⁴:

ՀՀ-ում համարժեք հիմնավորված չէ կապը «քրեական պատասխանատվություն» և «էկոլոգիական հանցագործություն» իրավաբանական կատեգորիաների միջև: Արդյունքում պատասխանատվություն կրելու տեսանկյունից բնապահպանական փորձաքննության համակարգը հիմնականում մնում է «չեզոք» դիրքերում, իսկ բնապահպանական վերահսկողությունը՝ անարդյունավետ ու ոչ ազդեցիկ:

ՀՀ-ում էկոդատախազական վերահսկողության ներդրումը կարող է էապես բեռնաթափել ավանդական տեսչական հսկողությունը նաև բնապահպանական փորձաքննության համակարգում ու արդիականացնել էկոլոգիական ոստիկանության գործունեությունը շուրջօրյա մոնիթորինգային դիտարկումներում:

Ենթադրվում է, որ նման մոտեցման գործնական և օրենսդրական մարմնավորումը հեռանկարային է Հայաստանի համար, որտեղ տնտեսական գործունեություն առանձին տեսակները չեն ենթարկվում ազդեցիկ էկոլոգիական վերահսկողության, հատկապես փորձաքննական պետական գործադիր իշխանության գերատեսչական կառույցներում դրանց վերաբերյալ դրական որոշումների կայացումից հետո:

Տեղին է նշել նաև, որ Հայաստանում բացակայում է մայր օրենք «Շրջակա միջավայրի պահպանության մասին», ինչի հետևանքով համակարգված չեն շրջակա

⁷⁴ Экологическая экспертиза / В.К. Донченко, В.М. Питулько, В.В. Растоскуев, С.А. Фролова, М.- “Академия”. -2010.-с. 482-500.

միջավայրի պահպանությանը վերաբերող էկոլոգիական պահանջները, հատկապես տնտեսական գործունեության առանձին տեսակների, ձեռնարկությունների շահագործման ոլորտում:

Երկրում գործող տնտեսավարող գրեթե բոլոր օբյեկտները հեռու են ձևավորված էկոմենեջմենթի համակարգից, հռչակագրված չեն դրանց գործունեության էկոլոգիական պարտավորությունները, լիակատար չեն հաշվետվությունները էկոլոգիական հաշվեկշռի և նրա փոփոխության մասին: Տվյալ պարագայում անհնար է ակնկալել տեսչական ստուգումների համարժեք արդյունքը հսկողության ավանդական ցուցանիշների կիրառման միջոցով: Դա ևս մեկ անգամ հաստատում է, որ հուսադրող կարող է լինեն էկոաուդիտորական մեթոդաբանության կամ տեսչական գործունեության նոր մեխանիզմների ներդրումը:

Այդ տեսանկյունից միանգամայն արդարացված է առանձին տնտեսավարող սուբյեկտների մակարդակով էկոլոգիական քաղաքականության աուդիտի անցկացումը: Այս պարագայում տեղին է ներդնել էկոլոգիական աուդիտի բնապահպանական վերահսկողության հետևյալ երկու ինդիկատորները՝

- 1. Գրանցված բարձր ռիսկի արդյունաբերական ձեռնարկությունների քանակությունը, %-ներով,*
- 2. Գրանցված բարձր ռիսկի արդյունաբերական ձեռնարկություններում էկոլոգիական անվտանգության անձնագրերի առկայություն, միավոր:*

Նշված ինդիկատորների ներդրման և կիրառման արդյունավետությունը էապես կախված է տնտեսավարող սուբյեկտների գործունեության դասակարգման մեթոդաբանության և ռիսկի, վնասների ու վտանգների որոշման քանակական չափորոշիչներից: Տվյալ հիմնախնդիրն առ այսօր պահպանում է արդիականությունը << բնապահպանական վերահսկողության համակարգում:

3.3 ԱԵԿԿԱ-ի ղեկավար սկզբունքների իրագործման հեռանկարները

Հետազոտություններից պարզվեց, որ բազում երկրներում բնապահպանական օրենսդրության խախտումները դեռևս տարածված են տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում և մակարդակներում: Հաստատվեց միաժամանակ այն կարծիքը, որ բնապահպանական պահանջների անտեսման կարևորագույն գործոններից են պետական կառավարման համակարգի կատարելագործման դանդաղ տեմպերը և դրանում էկոլոգիական վերահսկողության մեխանիզմի նորացման գիտական հիմնահարցերի բացթողումները:

Այս տեսանկյունից բավականին ազդեցիկ և հեռանկարային է ԱԵԿԿԱ-ի երկրների համար մշակված բնապահպանական ոլորտի պետական հսկողության մարմինների գործունեության բարեփոխման ղեկավար սկզբունքների հետագա ներդրումը՝ ակնկալելով բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման ռազմավարական գործողությունների իրականացումը: Այդ գործընթացներում առավել հուսադրող է ЮНЕП-ի, ЮНИТАР-ի, ОЭСР-ի ներկայացուցչությունը և ֆինանսական աջակցությունը ԵՄ-ի, ԱՄՆ-ի, Նիդերլանդների, Շվեդիայի, Մեծ Բրիտանիայի կողմից:

Գործողությունների հրատապությունը ակնհայտ է, քանի որ ԱԵԿԿԱ-ի երկրներում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում պետական հսկողության մարմինների գործունեության բարեփոխման ղեկավար սկզբունքները կողմնորոշված են՝

- բնապահպանական վերահսկողության այնպիսի մոդելի ստեղծմանը, որը կօգնի պետական մարմիններին վերհանել իրավակիրառման արդյունավետ համակարգի և օրենսդրության պահպանման խրախուսման առանցքային բնութագրերը, կատարել նաև ինստիտուցիոնալ բարեփոխումներ,
- էկոլոգիական օրենսդրության պահպանման ապահովման նպատակով գործունեության բոլոր մասնակիցների միջև համագործակցության և տեղեկատվության փոխանակման աջակցմանը,

➤ ռեգիոնալ ակնարկների և բնապահպանական իրավակիրառման ու օրենսդրության պահպանման խրախուսման գոյություն ունեցող փոխադարձ գնահատման, ինքնավերլուծության անցկացման հիմքերի ապահովմանը:

Տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման գերակայությունները դարձան ավելի ընկալելի տեսչական գործունեության ցուցանիշների, թերությունների և կատարելագործման ուղիների համեմատական վերլուծության միջոցով (գծապատկեր 3. 3. 1):



Գծապատկեր 3. 3. 1

Տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման գերակայությունները ⁷⁵

⁷⁵ Մշակվել է հեղինակի կողմից:

Տեղին է հիշեցնել, որ OECD-ի բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման գործընթացների մասնակից էր նաև Հայաստանը՝ առ այսօր շարունակելով տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում վերահսկողության մեխանիզմի նորացման գիտական որոնումները: Բացի այդ, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի հիմնադրույթները որոշակիորեն ներդաշնակ են ղեկավար սկզբունքներին, ինչը կարող է ստեղծել հուսալի նախադրյալներ պետական հսկողության մարմինների տեսչական ստուգումների և իրավակիրառման մեխանիզմների արդյունավետության բարձրացման համար:

Ուշագրավ են հատկապես **OECD-ի** այն սկզբունքները, որոնք կողմնորոշված են՝

- *բնակչության առողջության և շրջակա միջավայրի պահպանության ապահովմանը (սկզբունք 1),*
- *բնապահպանական իրավակիրառման արդյունավետության բարձրացման գործում հասարակության մասնակցության ակտիվացմանը (սկզբունք 10),*
- *կարգավորման սուբյեկտներում արտադրական հսկողության/ներքին մոնիթորինգի պարտադիր իրականացմանը (սկզբունք 12),*
- **պետական հսկողության մարմինների գործունեության գնահատման և աշխատանքի կատարելագործման ցուցանիշների մշակմանը (սկզբունք 19):**

Ամփոփ դիտարկենք որոշ սկզբունքները, որոնք, հեղինակի կարծիքով,

առավել նշանակալի են ՀՀ-ի տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման և հետագա զարգացման տեսանկյունից՝

- Համաձայն կիրառվող օրենսդրության՝ վերահսկողության համակարգերը նախատեսված են ապահովելու հասարակության առողջության և շրջակա միջավայրի արդյունավետ պահպանությունը:
- Ոլորտում հարկադրանքի կիրառման հաջողությունը կայանում է ոչ թե իրականացվող միջոցառումների և խթանող աշխատանքների քանակով, այլ որոշակի բնապահպանական արդյունքին հասնելը:
- Վերահսկողության պետական մարմինը պարտավոր է գիտակցել, որ

հարկադրանքները իրենք իրենցով չեն հանդիսանում արժեքավոր, այլ՝ ներկայացնում են միայն հասարակության կողմից նվազագույն ծախսերով պահանջների համապատասխանության հասնելու գործիքներ:

- Օրենքին համապատասխանության ապահովման իրավախախտումների կանխարգելիչ աշխատանքները ավելի գերադասելի են, քան դրանց հետևանքների վերացման աշխատանքները:
- Վերահսկողության պետական մարմինը պետք է ստեղծի պայմաններ արդյունավետ կանխարգելիչ ազդեցության համար, այսինքն՝ խթանի լայն տարածումը այն հասկացողության, որ խախտումների համար անհրաժեշտ է պատժվել:
- Վերահսկողության պետական մարմինը կարգավորման սուբյեկտների հետ իր հարաբերությունները ձևավորի արդարության սկզբունքների հիման վրա, իսկ տույժերի կիրառումը լինի հիմնավորված:
- Ձգտելով հասնել արդարության՝ վերահսկողության պետական մարմինը պետք է ձևավորի իր հարաբերությունները կարգավորման սուբյեկտների հետ հաջորդականության, թափանցիկության և համաչափության հիման վրա:
- Հաջորդականությունը նշանակում է նմանատիպ իրադրություններում բոլոր խախտումների ժամանակ աշխատանքային միևնույն մեթոդների կիրառում:
- Թափանցիկությունը նշանակում է բացատրությունը այն բանի, թե ինչպիսի տույժեր կարող են կիրառվել, ինչ իրադրություններում և ինչու: Թափանցիկությունը անհրաժեշտ է նաև նրա համար, որպեսզի օգնի կարգավորման սուբյեկտներին և այլ հետաքրքրվողներին հասկանալ՝ ինչ է նրանցից պահանջում վերահսկողության պետական մարմինը, ինչպես նաև, թե ինչ կարող են սպասել նրանք վերահսկողության պետական մարմնից:
- Համաչափությունը նշանակում է, որ իրականացվող միջոցառումների խստությունը պետք է լինի վտանգին համարժեք, որին ենթարկվում է շրջակա միջավայրը:

➤ Գործերի անկախ և արդար քննարկման ապահովման ու պահանջվող օրենքների իրականացման համար անհրաժեշտ է որոշումների բողոքարկման մեխանիզմների մշակում՝ կիրառվող ինչպես վարչական, այնպես էլ դատական կարգով: Բարեխղճությունը և պատասխանատվությունը պետք է լինեն վերահսկողության պետական մարմնի հիմնական հատկանիշները:

➤ **Վերահսկողության պետական մարմինը պետք է՝**

- արտացոլի կազմակերպական կառուցվածքի գերակայությունը շրջակա միջավայրի ոլորտում և իրավական գործառույթների ամրագրումը, որոշի այն մարմինների և հաստատությունների շրջանակը, որոնց գործունեությունը ազդեցություն է ունենում շրջակա միջավայրի վրա,
- ապահովի հասարակության լայն խավերի հետ տեղեկատվության արդյունավետ փոխանակում և ստեղծի պայմաններ բնապահպանության արդյունավետության բարձրացման համար,
- ստեղծի կարգավորման սուբյեկտների աջակցության մեխանիզմներ՝ ուղղված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում կամավոր և բացատրական հետախուզության,
- օգտագործի արդյունավետ գործունեության վրա հիմնված մոտեցում, որը փոխկապակցված լինի ինտերակտիվ՝ ցիկլային կարգավորման գործընթացի,
- ծրագրավորի իր ռազմավարական գործունեությունը՝ հիմնվելով տարեկան աշխատանքային նախագծերի վրա,
- հստակ բնութագրեն գործունեության գործառնական և ռազմավարական ծրագրերը և որոշեն կարգավորման սուբյեկտները և այլն:

Հեղինակի ենթադրությամբ սկզբունքները պետք է կրեն համալիր բնույթ, պահպանեն դրանց երկարաժամկետ ռազմավարական նշանակությունը և իրականացմանն ուղղված պետական խթանման հնարավորությունները:

Այսպիսով, ելնելով վերոնշյալից՝ կարելի է փաստել, որ ՀՀ-ում բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման ռազմավարական գործողությունների իրականացման համար ձևավորված են բավականի հուսալի նախադրյալներ՝

- ✓ միասնական բնապահպանական օրենսդրության համակարգի ստեղծում և Հայաստանի անդամակցությունը միջազգային բնապահպանական 19 կոնվենցիաներին
- ✓ համագործակցություն OECD-ի համապատասխան կառույցների հետ՝ բնապահպանական տեսուչների մասնագիտական որակավորման բարձրացման ուղղությամբ
- ✓ ԱԵԿԿԱ-ի երկրներում պետական բնապահպանական վերահսկողության բարելավման պրակտիկ ձեռնարկի կազմման և տարածման աշխատանքներին մասնակցություն, շրջակա միջավայրի պահպանության ոլորտում վերահսկողության պետական մարմինների բարեփոխումների իրականացում
- ✓ ՀՀ-ում բնապահպանական պետական տեսչության աշխատանքների հետագա կատարելագործման «ՀՀ-ում բնապահպանական պահանջների պահպանման, մակարդակի բարձրացման» առաջարկների մշակում:

Այս ամենում առավել նշանակալի է պետական աջակցությունը և միջազգային բնապահպանական համագործակցության ընդլայնումը տարածաշրջանային էկոլոգիական անվտանգության ապահովման գործընթացներում և անդրսահմանային բնապահպանական վերահսկողության ու իրավակիրարկման համատեքստում:

Հեռանկարային է, մասնավորապես, Հայաստանի փորձաքննությունների Ազգային բյուրոյի Ճապոնիայի առաջատար կառույցների հետ համագործակցության քաղաքական վեկտորների մշակումը՝ կապված մարդու առողջությանը պատճառված վնասների դիմաց քրեական, քաղաքացիական և վարչարարական օրենսդրությամբ սանկցիաների կիրառման հետ: Ընդ որում, դրանում հատուկ կարևորվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության կամ այլ ազդեցությունների հաշվառումը էկոլոգիական խախտումների հայտնաբերման միջոցով:

Կարևոր նախաձեռնություններից է նաև ՀՀ Նախագայի կողմից հավանություն ստացած «Կենսաբանական անվտանգության ապահովման ուղղակիության» 2016 թվականի նախագիծը: Նախագծի նպատակային

դրվածքներից մեկն է կենսաբանական սպառնալիքների ռիսկի կրճատումը/կանխումը շրջակա միջավայրի և մարդու համար: Դրանով ի հայտ են գալու տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման ու զարգացման նոր ուղղություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրությունների հիմնական արդյունքները թույլ են տալիս ձևակերպել հետևյալ եզրակացությունները և առաջարկել առկա հիմնախնդիրների լուծման հնարավոր եղանակները:

1. Հայաստանի արդի տնտեսական զարգացումը ընթանում է կայուն զարգացման մոդելի շրջանակներում և նպատակաուղղված է «կանաչ» էկոնոմիկայի սկզբունքների իրականացմանը:
Տնտեսության դիվերսիֆիկացումը, օրենսդրական բարեփոխումները, ինչպես նաև միջճյուղային կառուցվածքի օպտիմալացման ու նորամուծական գործունեության խրախուսման պետական նախաձեռնությունները կարողացան ապահովել որոշակի առաջընթաց տնտեսական աճի հուսադրող ցուցանիշների նվաճման գործընթացներում, այն էլ բարդ հետճգնաժամային պայմաններում: Արդեն 2016թ. առաջին եռամսյակում արդյունաբերական արտադրանքի ծավալը ավելացավ մինչև 8.9%:
2. Գիտական վերլուծություններից պարզվեց, որ ՀՆԱ-ի կառուցվածքում գերակշռում են առևտրի շրջանառությունը, արդյունաբերությունը, ծառայությունները, գյուղատնտեսությունը ու շինարարությունը: Ընդ որում՝ արդյունաբերական արտադրանքի ծավալային աճի մեջ նշանակալի դերակատարություն ունի հանքարդյունաբերությունը, որի ներդրումը հասնում է 27.7%-ի: Ենթադրվում է, որ երկրի հետագա տնտեսական կայուն և անվտանգ զարգացումը էապես կախված է հանքարդյունաբերական ոլորտից, որը տնտեսական օգուտների ապահովման տեսանկյունից բավականին շահավետ է: Սակայն շրջակա բնական միջավայրի էկոլոգիական առողջության պահպանման դիրքերից խորը կարգավորման կարիք ունեն, հատկապես տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի արդյունաբերության բարձրացման ու կատարելագործման հարցերը:

3. Տնտեսական զարգացման և տնտեսական գործունեության էկոլոգաբնապահպանական նկարագիրը ՀՀ-ում ունի որոշակի առանձնահատկություններ, որոնցից ռազմավարական տեսանկյունից արդիականացված են ռեսուրսաապահովվածության և ռեսուրսախնայողության, շրջակա միջավայրի բնական կայունության և կյանքի որակի պահպանման խնդիրները: Այդ հիմնախնդիրների լուծման հրատապությունը հիմնավորված է այնքանով, որ երկրում ակնհայտորեն նկատվում է շրջակա միջավայրի կենսաապահովող որակի կայուն անկում, առաջնային բնական ռեսուրսների հյուծում և էկոլոգիական լարվածության ուժեղացում առանձին մարզերի լոկալ տարածքների մակարդակով (Սյունիք, Լոռի, Արարատ, Գեղարքունիք, Կոտայք, Արմավիր և Տավուշ): Այս ամենում զգալի մասնաբաժինը պատկանում է ընդերքօգտագործմանը, որը տնտեսական աճի հետճգնաժամային փուլում առաջընթաց է գրանցում հիմնականում մետաղական հանքանյութի արդյունահանման ֆիզիկական ծավալների միջոցով:
4. Բնօգտագործման վճարների ընդհանուր ծավալում ընդերքօգտագործմանը բաժին է ընկնում ավելի քան 90%-ը: Ոլորտում դիտվում է թափոնների շարունակական աճ, իսկ դրանց օգտագործման և վնասազերծման ծավալը հեռու է նույնիսկ 1%-ից: Առկա է «չքաղված օգուտների» էֆեկտը, և թափոնների մեծ մասը կուտակվում է պոչամբարներում, որոնք դուրս են մնացել ակտիվ մոնիթորինգային դիտարկումներից: Ենթադրվում է, որ ոլորտում ձևավորված իրավիճակը ընդերքօգտագործման ոլորտի «բնապահպանական կողմնորոշվածության» ցածր մակարդակը բնապահպանական վերահսկողության համակարգերի թերացումն է: Թերացումները առավել նկատելի են հսկողության մեթոդաբանության, լիցենզավորման և իրավակիրառման մեխանիզմի անկատարության մասով:
5. Տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության միջազգային փորձի և մեթոդաբանության ուսումնասիրման արդյունքների համեմատությունը՝ տեսչական հսկողության ազգային փորձի հետ, ցույց

տվեց, որ վերջինիս դեպքում ստուգման գործընթացի մեթոդաբանությունը և ցուցանիշները խիստ «ավանդական» բնույթի են և իրավակիրառման տեսանկյունից՝ անարդյունավետ: Վերահսկողության երկու տեսակները՝ «ստուգում» և «ուսումնասիրություն» մեթոդապես հստակ սահմանազատված չեն, մշակված չեն համապատասխան չափորոշիչները: Իրավիճակը առավել անհամարժեք է ուսումնասիրությունների դեպքում, որտեղ, համաձայն

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի (2005թ.), հատուկ նշանակություն ունի տեսչական գործունեության արհեստավարժության մակարդակը՝ հատկապես «հետադարձ էֆեկտի» ապահովման տեսանկյունից: Սակայն տեսչական գործունեությունը խիստ հարկադրական բնույթի է և կողմնորոշված է հիմնականում բյուջետային մուտքերի ապահովմանը:

6. Տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման համատեքստում առավել ուշագրավ և հեռանկարային է INECE - էկոլոգիական համապատասխանության և իրավակիրառման միջազգային ցանցի և OECD-ի ինդիկատորների մշակման և տեղայնացման դրական փորձը, որը սկիզբ դրեց առ այսօր շարունակվող տեսչական գործունեության հարկադրական և խորհրդատվական համադրված նոր մեխանիզմների որոնմանը: Ընդունելի տարբերակներից կարող է լինել Նիդերլանդների և ԱՄՆ-ի փորձը՝ կապված դիսկերի և օրենսդրության պահպանման մատրիցների ու բնակչությանը պատճառված վնասի որոշման/գնահատման հետ:

7. «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի ընդունումը կատարվեց թեև որոշ ուշացմամբ (2005թ), այնուհանդերձ, այն մեկ քայլ առաջ է տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի գործունեության բարեփոխումների առումով: Օրենքով սահմանված են բնապահպանական վերահսկողության 9 ցուցանիշներ, որոնք ստուգման վերջնարդյունքի ապահովման մասով «ավանդական» և ոչ այնքան ազդեցիկ բնույթի են, մասնավորապես բնապահպանական և

բնօգտագործման հաշվարկված վճարների, դրանցից պետբյուջեի մուտքերի ստուգման գործընթացում: Ենթադրվում է, որ տվյալ դեպքում համարժեք չէ ստուգման գործընթացի իրականացման մեթոդական մոտեցումների և ցուցանիշների ընտրությունը: Հսկողությունը էկոլոգիական փորձաքննության բնագավառում կրում է ավելի շատ «կրկնակի հսկողության» էֆեկտի դրսևորում՝ այն էլ առանց իրավիճակի բարելավման էական արդյունքի: Մեր տեսանկյունից, այստեղ առկա է հակասություն «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի միջև, որը ավելի է խորանում «Շրջակա միջավայրի պահպանության մասին» ՀՀ մայր-օրենքի բացակայության պայմաններում:

8. ՀՀ բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման մասով, բացի «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումից, բեկումնային եղավ նաև OECD-ի կողմից ՍԵԿԿԱ-ի երկրներում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում պետական հսկողության մարմինների գործունեության բարեփոխումների համար մշակված ղեկավար սկզբունքների իրագործման փորձը: Հուսադրող են, մասնավորապես, տեսչական գործունեության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կանխման, հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակների ներդրման, տեսչական աշխատանքների արդյունավետության բարձրացման, ֆինանսական, կադրային և տեղեկատվական ապահովման, տեսուչների մասնագիտական վերապատրաստման պետական նախաձեռնությունները:
9. Հետազոտության արդյունքներից պարզվեց, որ բացի ոլորտում դիտվող բարեփոխումները, առկա են նաև որոշ չլուծված հիմնախնդիրներ: Դրանք վերաբերում են հատկապես տեսչական գործունեության մեթոդաբանության, ստուգման մեխանիզմների և գնահատման ցուցանիշների ընտրությանը և վերանայմանը, ինչպես նաև «տնտեսվարող սուբյեկտ – տեսչական վերահսկողություն» համակարգում իրավակիրառման մեխանիզմների օբյեկտիվ և գրագետ օգտագործմանը: Ֆունկցիոնալ, բովանդակային և ստուգման վերջնարդյունքի ապահովման տեսանկյունից նկատելի է

տարընթերցվածք «բնապահպանական վերահսկողություն», «բնապահպանական հսկողություն» ու «ինքնահսկում» հասկացությունների և համապատասխան գործողությունների միջև:

10. Համոզիչ չէ տեսչական գործողությունների ֆունկցիոնալ տարբերությունը ստուգման և ուսումնասիրության ձևերի միջև: Տվյալ հանգամանքը միանգամայն հաստատում է եզրույթը առ այն, որ ստուգման գործընթացի վերջնարդյունքը էապես կբարձրանա, եթե կիրառեն տեսչական և էկոաուդիտորական ստուգումների մեթոդաբանության համատեղելիության և փոխուժգնության սկզբունքները: Ընդհանրապես չի գործում հասարակական հսկողության մեխանիզմը՝ ինչը ավելի է «չեզոքացնում» հասարակության մասնակցությունը բնապահպանական որոշումների կայացման գործընթացներում և հակասում է Օրիուսի հանրահայտ կոնվենցիայի հիմնադրույթներին:

11. Բնապահպանական իրավախախտումների դիմամիկ ցուցանիշների ուսումնասիրության արդյունքներից պարզվեց, որ դիտարկվող ժամանակահատվածում արդեն 2008թ.-ից նկատելի է ստուգման օբյեկտների քանակության անկման և բնապահպանական իրավախախտումների քանակության աճի հակադարձ էֆեկտը՝ ի հաշիվ տեսչական մարմինների վերահսկողական ֆունկցիայի կենտրոնացման հիմնականում բարձր ռիսկի ձեռնարկությունների/տնտեսվարող սուբյեկտների գործունեության վրա: Մարտավարական տեսանկյունից նման մոտեցումը որոշակիորեն ընդունելի է, ինչը հաստատվեց նաև վերահսկողության մարզային ուղղվածության ստուգումներում: Բնապահպանական իրավախախտումների աճը առավելագույնի է հասնում Երևանում, Շիրակում, Արագածոտնում, Արմավիրում, Կոտայքում և Լոռիում: Համեմատաբար քիչ քանակի իրավախախտումներ են արձանագրվել Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում, ինչը որոշ չափով կասկածելի է տվյալ մարզերում էկոլոգիական անբարեկեցության ուժեղացման տեսանկյունից:

12. Բյուջետային մուտքերի ապահովման մասով ըստ տարածքային տեսչությունների 2014-2016թթ.-ի տվյալների առաջատարերն են՝ Տավուշի,

Լոռու, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերը: Սակայն 2010-2015թթ.-ի բյուջետային մուտքերի գումարային մեծությամբ առաջատար դիրքերում են Սյունիքը (50212.39 հազ.դրամ), Լոռին (436670.02 հազ.դրամ, ք.Երևանը (39934.77 հազ.դրամ), Տավուշը (36645.75 հազ.դրամ), Գեղարքունիքը (30021.60 հազ.դրամ) և Շիրակը (26117.40 հազ.դրամ): Նման երևույթը ինչ-որ տեղ հակասական է և հնարավորություն չի ստեղծում օբյեկտիվորեն գնահատել տարածքային տեսչությունների արդյունավետությունը:

13. Վարչական տույժերի համար սահմանված գումարները տատանողական/անկայուն բնույթի են, իսկ բնապահպանական ուղղությունների մասով, որպես կանոն, առաջատարն է բուսական աշխարհի պահպանության ոլորտը, որը տարեցտարի մոտենում է էկոլոգիական աղետի: Եվ դա այն դեպքում, երբ տվյալ ոլորտում բնապահպանական և բնօգտագործման հաշվարկներում 2011թ.-ից դիտվում է վճարների կրճատում:

14. Բնապահպանական իրավախախտումների հետևանքով առաջացող վնասների արձանագրության քանակի և հատուցված վնասների գումարի դինամիկայի վերլուծությունը ցույց տվեց, որ տնտեսական զարգացման հետճանաժամային փուլում՝ սկսած 2011թ.-ից ՀՀ-ում դիտվում է վնասների հատուցման արձանագրությունների քանակի աճ և դրան հակառակ վնասի հատուցման գումարի անկում (բացառությամբ 2014թ.): Այստեղ ևս վնասի հատուցման առավելագույն ցուցանիշը բնութագրական է բուսական աշխարհի, այնուհետ ջրային և հողային ռեսուրսների պահպանության ոլորտներին: Ենթադրվում է, որ հաշվարկներում վերանայման կարիք ունի վնասների գնահատման մեթոդաբանությունը, որը անհայտ է մնում հատկապես ռիսկերի ու վտանգների գնահատման մասով: Նման իրավիճակի պահպանման դեպքում կոռուպցիոն ռիսկերի կանխումը կկրի զուտ «վավերագրական» ձև, իսկ տեսչական գործունեությունը կշարունակի պահպանել իր «ավանդական» բնույթը: Անարդյունավետ կմնա նաև էկոլոգիայի կանխման տեսչական ստուգումը, այն էլ՝ մեթոդաբանական թերությունների պայմաններում:

15. Համեմատական վերլուծությունների հիման վրա (որպես տեղայնացման մեթոդական տարբերակ) առաջարկվում է «Արտադրության և սպառման թափոնների», էկոքաղաքականության աուդիտի, որի օգնությամբ գնահատվում է ստուգվող օբյեկտի բնապահպանական գործունեությունը, և ձեռնարկության էկոմենեջմենթի կատարելագործման հիմնական ուղղությունները:
16. Ձեռնարկություններում կատարված «Արտադրության և սպառման թափոնների» աուդիտը ցույց տվեց, որ առաջարկվող մեթոդական մոտեցման արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է մշակել գործընթացի անցկացման հատուկ կարգեր և նորմատիվային փաստաթղթեր: ԷԱ-ի առաջատար միջազգային փորձի կիրառումը կարող է որոշիչ ազդեցություն ունենալ նաև ՀՀ-ում տարբեր էկոլոգիական ծառայությունների, այդ թվում էկոմենեջմենթի, էկոլոգիական հավաստագրման և ապահովագրման, էկոկրթության ու դաստիարակության և էկոլոգիական այլ ծառայությունների շուկաների ձևավորման ու զարգացման վրա:
17. Բնապահպանական վերահսկողության և տնտեսական գործունեության էկոլոգացման հիմնախնդիրների համեմատական վերլուծության արդյունքից պարզվեց, որ իրավիճակի բարելավումը հնարավոր է տնտեսական ամբողջական կառուցվածքի մոդեռնիզացիայի, տեխնոլոգիական նորամուծությունների ներդրման միջոցով՝ հիմնված «երկակի շահույթի» հայեցակարգի հիմնադրույթների վրա: Դրան համապատասխան նորացված պիտի լինեն բնապահպանական վերահսկողության/տեսչական աշխատանքների գնահատման ինդիկատորները, որոնք դեռևս հեռու են ԱԵԿԿԱ-ի երկրներում ներդրվող էկոլոգիական հսկողության իրականացման ղեկավար սկզբունքներից: Հետևաբար՝ կարելի է փաստել, որ ՀՀ-ում տեսչական գործունեության վերջնարդյունքը ավելի շատ մոտ է «թվացյալ», քան իրական շոշափելի էֆեկտին:
18. ՀՀ-ում տեսչական գործունեությունը շարունակում է մնալ «ավանդական», իսկ ստուգումների հաճախականության, բնապահպանական իրավախախտումների պատճառված և հատուցված վնասների միջև կապը

դժվար է ենթարկվում որևէ տրամաբանական վերլուծության, հատկապես շրջակա միջավայրի վիճակի բարելավման, վնասների հատուցման և վտանգների կանխման մասով: Նկատելի է տեսչական գործունեության «պասիվության» ֆենոմենը շրջակա միջավայրի որակի, տնտեսական գործունեության հետևանքների ազդեցության ու իրավակիրառման մեխանիզմի/գործիքակազմի մասով, հատկապես հասարակական առողջության վրա ազդեցության դեպքերում: Այդ ամենը առավել վտանգավոր է երկրի հանքարդյունաբերության ոլորտում, որտեղ առկա է խորը հակասություն տնտեսական և էկոլոգիական օգուտների միջև, իսկ տեսչական գործունեության արդյունավետությունը կասկածելի է:

19. Իրավիճակի բարելավման համար մշակված է ինդիկատորների նոր մատրից, որը հնարավորություն է տալիս վերահսկել շրջակա միջավայրի որակի ազդեցությունը բնակչության առողջության վրա, դրականորեն օգտագործել էկոլոգաբժշկական մոնիթորինգային տվյալները՝ վնասների և վտանգների կանխման ու հատուցման մասով: Գիտականորեն հիմնավորվել է ռիսկերի գնահատման և կանխման մատրիցների, թափոնների առաջացման, օգտագործման և վնասազերծման էկոաուդիտորական հսկողության մեթոդական մոտեցումների որոնման, տեսչական գործունեության արդյունավետության գնահատման ինդիկատորների նորացման և ՀՀ բնապահպանական վերահսկողության համակարգում ներդրման ու զարգացման ռազմավարական նշանակությունը:

20. Տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման հիմնախնդիրների վերհանումը և գնահատումը բերեց վերջնական այն կարծիքի ամրապնդմանը, որ տեսչական գործունեությունը անհրաժեշտ է համալրել և նորացնել ստուգման նոր մեխանիզմներով, գործիքակազմով, մեթոդական մոտեցումներով և ստուգման նոր ինդիկատորներով: Տվյալ համատեքստում հեռանկարային և արդյունավետ կլինի ներկայիս տեսչական և էկոաուդիտորական ստուգումների մեխանիզմների համադրումը սիներգետիկ սկզբունքով: Այդ նպատակով առանձնացված և հիմնավորված են բնապահպանական

վերահսկողության համակարգի կատարելագործման չորս ուղղություններ, որոնց գործնական իրականացումը կարող է էապես փոխել տեսուչի աշխատատեղը և բարձրացնել նրա պատասխանատվության աստիճանը:

Առաջարկվում է.

- **տրամաբանական ավարտին հասցնել** ԱԵԿԿԱ-ի ղեկավար սկզբունքների իրագործման հնարավորությունները՝ ուղղված ՀՀ-ում տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործմանը,
- **մշակել** Հայաստանի Հանրապետության տնտեսական գործունեության էկոլոգացման ազգային ռազմավարությունը և իրականացնել դրա նախագծի հասարակական լսումները,
- **ընդունել** «Էկոլոգիական աուդիտի մասին» ՀՀ օրենք և կարևորել ՀՀ-ի բնապահպանական վերահսկողության համակարգում ռիսկի, վնասների և վտանգների գնահատման ցուցանիշների մշակումը և ներդրումը,
- **իրականացնել** փոփոխություններ «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքում՝ ընդգրկելով «Էկոլոգիական աուդիտ» հատուկ նոր բաժին, որտեղ կարտացոլվեն գործընթացի իրավական և նորմատիվամեթոդական դաշտի ձևավորման հիմքերը:
- **ներդնել** ՀՀ-ում տնտեսական գործունեության բնապահպանական վերահսկողության համակարգի կատարելագործման ինդիկատորների նոր մատրից և էկոաուդիտորական մեթոդներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Օրենքներ, իրավական ակտեր, պաշտոնական վիճակագրություն և տեղեկագրեր

1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, 2007թ.
2. «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենք, 2004թ. ՀՕ-82-Ն
3. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, 2001թ. ՀՕ-227-Ն
4. «ԲՆապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենք, 2006թ.
5. ՀՀ Բնապահպանության նախարարության հաշվետվություններ.- 2002-2008թթ.
6. «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգիրք, 2011թ. ՀՕ-280-Ն
7. ՀՀ բնապահպանության նախարարություն: Նախարարական զեկույց 2007-2011: Երևան. 2011.- էջ 94-95
8. Հայաստանի Հանրապետության էկոլոգիական իրավունք (իրավական ակտերի ժողովածու). Երևան. 2009.- էջ 382-403
9. ՀՀ բնապահպանության նախարարություն: Նախարարական զեկույց. 2003-2005թթ. Երևան, 2006, էջ 62
10. ՀՀ բնապահպանության նախարարության հաշվառման և վերլուծության բաժին, տարեկան հաշվետվություն /2007-2015թթ
11. ՀՀ օրենք «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք:Հոդված 4, 12, 13 (ընդ. 2005թ. ապրիլի 11)
12. ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք: Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2013 թ.- էջ 72 / 2014թ/<http://www.armstat.am/file/doc/99493668pdf> էջ 79- 86
13. ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք.. Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2007-2013 թթ.. – էջ 74, 75,78/2009- 2014 թթ./ <http://www.armstat.am/file/doc/99493668pdf>. էջ 84

14. ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք. Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում. 2007-2014թթ./ <http://www.armstat.am/file/doc/99493668pdf> - էջ 4, 78
15. ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք.Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում. 2007-2013 թթ./ <http://www.armstat.am/file/doc/99493668pdf> -էջ 74, 75
16. ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք.Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում. 2007-2013 թթ.- էջեր 77,78,79, 2009-2014 թթ՝ էջեր 82, 83/ <http://www.armstat.am/file/doc/99493668pdf>
17. ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք.. Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում. 2007-2013 թթ.. – էջ 74, 78/2009-2014 թթ./ <http://www.armstat.am/file/doc/99493668pdf> էջ 84
18. ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք. Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2007-2014թթ/ <http://www.armstat.am/file/doc/99493668pdf>.- էջ 72,78
19. ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք.Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում. 2007-2013 թթ./ <http://www.armstat.am/file/doc/99493668pdf>. -էջ 74, 75
20. ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք.Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում.2007-2013 թթ., էջ 77 -79/2009-2014 թթ.՝ էջեր 82,83,85
21. ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք. Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում. 2015 թ. - էջ 209,210
22. ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք.Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2010-2014թթ. - էջ 82-85
23. ՀՀ ԱՎԾ Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2015.- Երևան.- 2016.-169էջ
24. ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք.Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում. 2015թթ. <http://www.armstat.am/file/doc/99493638pdf>- էջ 208

25. ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք.Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում.2013 թ. էջ 63-68
26. ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք. Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում.2014 թ.- էջ 62-69
27. ՀՀ / «Ռիո+20» ազգային գնահատման զեկույց.- Երևան.- 2012.-էջ 25-41
28. ՀՀ ԱՎԾ Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2004-2013թթ. /Ընդերքօգտագործման վճարները .-էջ106-108
29. Հայաստանը թվերով – 2015 [http:// www.armstat.am/file/article/armenia-15-2.pdf](http://www.armstat.am/file/article/armenia-15-2.pdf).- էջ 55
30. Տնտեսական զարգացման քաղաքականության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում: ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովի նյութեր. Երևան, Տնտեսագետ.-2014.-893էջ:
31. Հովհաննիսյան Հ., ՀՀ տնտեսական աճի կայունության ապահովման քաղաքականությունը // Տնտեսական զարգացման քաղաքականության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում: ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովի նյութեր. Երևան, Տնտեսագետ.- 2014.-էջ 624-625:
32. ՀՀ Բնապահպանության նախարարություն. 2003-2005թթ. Նախարարական զեկույց.- Երևան.-2006.- էջ 10-20
33. ՀՀ Բնապահպանության նախարարություն. 2007-2011թթ. Նախարարական զեկույց.- Երևան.- 2011.- էջ 10-34;94-96:
34. Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում, 2013թ. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան.- 2014թ . -142էջ
35. ՀՀ ԱՎԾ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014թ., Երևան.- 2015թ. - էջ 200-213
36. ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակը, Արդյունաբերություն, 2009-2015թ. /2009թ.- էջ 26, 2010 թ.' էջ 25 /2011թ.' էջ 26, 2012թ.' էջ 28, 2013թ.' էջ 25, / 2014թ.' էջ 26
37. ՀՀ ԱՎԾ <http://transparency.am/hy/assets/mines> - Պոչամբարներ, 2013

Մասնագիտական գրականություն

38. Այվազյան Ս., Վարդգեսյան Է., Նազարյան Լ. Դեպի օրինավոր ընդերքօգտագործում, Երևան.-2010 թ.- էջ 32- 38
39. Ավազյան Հ., Լեոնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղիներն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում.- Երևան.- 2010 թ.- էջ 4-16
40. Գևորգյան Ս., Պետրոսյան Ռ., Գևորգյան Ա., Կարապետյան Ա. Շրջակա միջավայրի պահպանության և էկոփորձաքննության հիմունքներ.- Երևան.- 2011 թ.- 312 էջ
41. Հայրապետյան Է.Վ., ՀՀ ընդերքօգտագործման տնտեսական հիմնախնդիրները, Երևան,- 2009 թ.- էջ 5-12
42. Մելքումյան Ս. Հայաստանի Հանրապետության բնական ռեսուրսների տնտեսաաշխարհագրական գնահատումը և շրջակա միջավայրի հիմնախնդիրները.- Երևան.- 2009 թ.- էջ 34-45
43. Միջհամայնքային կազմակերպությունների կողմից համայնքներին մատուցվող ծառայությունների ու գործառույթների բարելավմանն ու բազմազանեցմանն ուղղված ծրագիր», USAID, Counterpart International. Երևան. -2012 թ. - էջ 2-25:
44. ԵՊՀ կայուն զարգացման կենտրոն. ՀՀ մետաղական օգտակար հանածոների պոչամբարների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության վտանգների նվազեցմանն ուղղված պահանջների և խնդիրների վերհանումը.- Երևան.- 2014 թ. - էջ 34-45
45. Ներսեսյան Ս.Ս. Բնապահպանական հարցերն ընդերքօգտագործման ոլորտում: Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2013 թ. - էջ 4-25
46. ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հաշվետվություններ, 2013-2014թթ
47. ՀՀ Սոցիալ-տնտեսական վիճակը.- Երևան.- 2013 թ. - էջ 17-24
48. Սաղաթեյան Ա.Կ. ,Գևորգյան Վ. Ծ., Արևշատյան Ա.Հ., Սահակյան Լ.Վ. – Քաջարան քաղաքի շրջակա միջավայրի վիճակի էկոլոգատերկրաքիմիական գնահատում, Երևան, ՀՀԳԱԱ էկոլոգանոսֆերային կենտրոնի հրատ. – 2008թ, - 200էջ

49. Հայաստանի թվերով.- Երևան.- 2013թ.- էջ 3-15
50. Андрусенко С.П. Уголовная ответственность за экологические преступления по законодательству США. // Экономика природопользования. М.-N5.-2015.-с.131- 136
51. Андрусенко С.П. Актуальные вопросы пересмотра уголовного дела в связи с новыми обстоятельствами в контексте принципа NON BISIDEM.// Экономика природопользования. М.-N6.-2015.-с.134-137
52. Анжелик А.А. ван дер Шрааф, Ян ван дер Плос. Индикаторы соблюдения природоохранного законодательства и правоприменения в Нидерландах./ Оценка систем экологического контроля: Измерять значимое. Материалы международного семинара по индикаторам соблюдения норм экологического права и правоприменения. 3-4 ноября 2003г. Париж (Франция), с. 110-112.
53. Акимова Т.А., Кузьмин А.П., Хаскин В.В. Экология. Природа-человек- Техника. ЮНИТИ.-М.-2001.-с. 299-231:
54. Бельдеева Л.Н., Бушанина Н.В., Усынина Л.Г. Экологический контроль: Учебное пособие.-Барнаул.-Изд-во АлтГТУ.-2008.-с.139
55. Бобылев С.Н., Зубаревич Н.В., Соловьева С.В.,Власов Ю.С. Устойчивое развитие: методология и методики измерения. М.Экономика.-2011. -с. 10-20.
56. Бобылев С.Н., Медведева О.Е. Экология и экономика. М.-2004.-с. 70-73
57. Булгакова Л., Плотникова Р. Проблемы экологизации экономики и экономизации экологии.- М.: 2009- с . 8-20
58. Гусев А.А. Соотношение рентных доходов и платежей в сфере использования биологических ресурсов // Экономика природопользования. 2002.- N 5.-с.9-21.
59. Группа высокого уровня Генерального секретаря по глобальной устойчивости (2012 год). Жизнеспособная планета жизнеспособных людей: будущее, которое мы выбираем. Обзор. Нью-Йорк: Организация Объединенных Наций, 2012 г..

60. Джонсон Г. Я. Новый стандарт ИСО 19011 по аудиту систем менеджмента качества и охраны окружающей среды, Агентство по защите окружающей среды. США .-2003- с.5-8
61. ЕЭК ООН. Обзор инновационного развития Республики Армения. ООН Нью-Йорк и Женева, 2014-169с.
62. Европейская экономическая комиссия Региональное совещание по подготовке к Конференции Организации Объединенных Наций по устойчивому развитию "Переход к "зеленой" экономике: роль образования в интересах устойчивого развития* 2011 г.
63. Ляпина А.А. Тенденции макроэкономического развития на основе экологических данных //Экономика природопользования.-2000.-N 1.-с. 11-32
64. Львов В.В. Снижение риска и страхование предприятий// Безопасность труда в промышленности.-1992.-N10. с.45-49
65. Майкл Стал. Показатели действенности программ обеспечения соответствия природоохранным требованиям:Опыт АООС США,/ Оценка систем экологического контроля: Измерять значимое. Материалы международного семинара по индикаторам соблюдения норм экологического права и правоприменения. 3-4 ноября 2003г. Париж (Франция), с. 137-153:
66. Меры по улучшению экологической политики. Прогресс в регионе Восточной Европы, Кавказа и Центральной Азии. ОЭСР.-2007.-с.24-32
67. Местная повестка дня на XXI век на Кавказе. Проблемы и вызовы. РЭЦ Кавказ. 2007. -Тбилиси.-50 С.
68. Макарова С., Шагарова Л. Направления перспективных разработок программы экологического аудирования//Аудитор.-1998.-N7-с.57-58
69. Михайлов К.Л., Михайлова Г.В. Экологические приоритеты инновационного развития региональной экономики// ж. Экономика природопользования. М.-N5.-2015.-с.15-23

70. Мاستушкин М.Ю. Инвестиции в экологически значимую деятельность. Экологический аудит: Необходимость проведения и типология.//Экол. экспертиза.- 2002.- N3-с.9-17.
71. Меры по улучшению экологической политики. Прогресс в регионе Восточной Европы, Кавказа и Центральной Азии. OECD.-2007.-с. 43-117.
72. Новые подходы в экономике и управлении. Материалы III международной научно-практической конференции. 15-16 сентября 2013 г.- Прага -261с.
73. Навстречу “зеленой” экономике: путь к устойчивому развитию и искоренению нищеты. ЮНЕП.-2011. - с.9
74. Национальный доклад. О состоянии окружающей среды в Армении в 2002 году. Ереван. - 2003. - с. 60-62.
75. Меры по улучшению экологической политики. Прогресс в регионе Восточной Европы, Кавказа и Центральной Азии. OECD.-2007.-с.157
76. Оценка систем экологического контроля: Измерять значимое. Материалы международного семинара по индикаторам соблюдения норм экологического права и правоприменения. 3-4 ноября 2003г. Париж (Франция), 176 с/ с.111
77. Сергеева Т.В. Экологический аудит. М.-2005.-207с.
78. Шаров Ю. Некоторые аспекты эколого-экономического анализа в обеспечении устойчивого развития.//.Экономика природопользования–N2.– М.- 2000.-с. 19
79. Оценка систем экологического контроля: Измерять значимое. Материалы международного семинара по индикаторам соблюдения норм экологического права и правоприменения. 3-4 ноября 2003г. Париж (Франци
80. Опыт и сотрудничество стран БРИКС и их регионов// Под ред. Архипова А.Ю., Фомичевой Е.В. – Ростов н/Д: Изд-во ЮФУ, 2013 - с.12-22
81. я), с .111

82. «Проблемы безопасности окружающей среды»//Материалы международной научной конференции государств членов ОДКБ.-Изд-во "Гитутюн" НАН РА.-2016.- 260с.
83. Поль Бернер. Бельгия.Индикаторы соблюдения природоохранного законодательства и правоприменения./ Оценка систем экологического контроля: Измерять значимое. Материалы международного семинара по индикаторам соблюдения норм экологического права и правоприменения. 3-4 ноября 2003г. Париж (Франция), с. 60-65
84. Природоохранные платежи за загрязнение и продукцию в Армении. Оценка хода реформ и направления дальнейшего усовершенствования. OECD. – 2004.- с.13-20
85. Руководящие принципы реформирования государственных органов контроля в сфере охраны окружающей среды в странах с переходной экономикой Восточной Европы, Кавказа и Центральной Азии: ОЕСД.2007- № 11-32:
86. Системы экологического менеджмента //Под ред. С Ю Даймана, М.- 2004. - с.15-40
87. Сергеева Т.В. Экологический аудит, М.-2005г., с.38-50
88. Основы экологического аудита// под ред. Никитина А. Т., Степанова С. А.- М.- 2001.-392
89. Рюмина Е.В., Имитационные расчеты дохода как ущерба от экологических нарушений // Экономика природопользования. 2015.-№4.-с. 31-35
90. Тихомирова Т.М, Сукиасян А.Г. Сопоставительные оценки человеческого потенциала с учетом рисков социального благополучия //. Экономика природопользования , №1.-2015.- с 4-12
91. Экологическая экспертиза / В.К. Донченко, В.М. Питулько, В.В. Растоскуев, С.А. Фролова, М.-“Академия”.-2010.-с. 482-500.
92. Экологический учет и аудит // Под ред. Л.Щнейдмана. М.-1998.- с.1035
93. Экономика природопользования //под ред. К.В.Папенова, М.-2006. - с.10-30
94. Яндыганов Я.Я. Экономика природопользования.-М.-2005.-с.340-348

95. Яндыганов Я.Я. Экономика природопользования.-М.-2005.-с.340-348
96. Яшалова Н.Н. “Зеленая” экономика: монография.-СПб, Изд-во Политехн, ун-та, 2014.-208 с.
97. «Шестая конференция министров “Окружающая среда для Европы” Белград, Сербия, 10-12 октября 2007г. Усиление природоохранного управления в странах БЕКЦА по средствам местных программ действий по охране окружающей среды ООН: ECE, BELCRFDE / 2007 / INFI /18-198с.
98. Bobylev S.N. Environmental economics. Textbook.-М.-INFRA.-М.-2014.-р.400
99. Darrell L. Ross// Civil liability in criminal justice, sixth edition.-2013.-р.231
100. Decoupling natural resource use and environmental impacts from economic growth. UNEP, 2011. .-р.1 6
101. Environmental performance reviews Armenia UN Nev York and Ceneva. 2000.-200р.
102. Environmental audit. Theory and practice. Textbook//I.M.Potravnyi and others.-Moscow: UNITY-DANA.-2013.-р.583.
103. Josbua Farley, Robert Costanzo. Payments for services ecosystem from local problems to global decisions// Экономика природопользования. М.-N2.-2015.-с.111- 127
104. Cuiding principles for reform of environmental enforcement authorities in transition economics of Eastern Europe, Kaucusus and central Asia OECD. 2003. P.36:
105. Lukyanchikov N.N., Potravnyi L.M. Economics and Organization of nature: a textbook.- Moscow: UNITU-DANA.-2014.-687р.
106. Lipski S. Priwate Ownership for Agricultural Lands: Advantages and Disadvantages (Experience of Two Deeades // Studies on Russian Economic Development. 2015.-vol.26.-No1, p. 63-99.
107. Morozova E.V. Problems of allounding problems of nature // Economics Analysis: Theory and practice, 2009.-N4.-р. 58-62.
108. Measuring Progress Towards Green Growth: OECD Indicators 2011.

109. National Implementation Plan for the Stockholm Convention on Persistent Organic Pollutants. Republic of Armenia. Yerevan. 2005.-109p.
110. Stamm A., Dantas E., Fischer D., Canguly S., Rennkamp B. Sustainability oriented innovation systems. Towards decoupling economic growth from environmental pressures. DIE Research Project "Sustainable solutions through research.-Deutsche Institut fur Entwicklungspolitik. 2009.-44 p.
111. Thomas J. Gardner, Terry M. Anderson // Criminal law, Tenth Edition, 2009.-p. 448:
112. UNEP (2011) Decoupling natural resource use and environmental impacts from economic growth, A Report of the Working Group on Decoupling to the International Resource Panel. Fischer-Kowalski.
113. Risks and safety in rapidly changing world. Materials of the II international scientific conference on May 10-11, 2014 .- Prague, 2014.- 187 p
114. Report - Reforms in Local Self-Government in Armenia. Yerevan. 2008.- p.5-10
115. The state of Armenia's environment – Policy Forum Armenia. - 2010. – 30p.
116. WWF Living planet Report 2012, Special Edition, On the road to RIO+20. -p. 36
117. Solid waste management in Armenian cities USAID-funded Armenia Local Government Program – Phase 3, from 2005 to 2010. Yerevan. -2011.- p.10 - 19
118. Solid waste management in Armenian cities USAID-funded Armenia Local Government Program – Phase 3, from 2005 to 2010. Yerevan. -2011.- p.10 - 19
119. WWF Hong Kong Ecological Footprint Report 2013.-p. 6
120. WWF Living Planet Report 2012, p. 37-38
121. United Nations Development Assistance Framework 2010-2015/ Armenia/. -p. 8-14
122. UN Global Compact Project, UNDP Armenia - Yerevan. – 2012. -20p
123. Environmental performance reviews Armenia UN Nev York and Ceneva. 2000.- 200p.
124. Report - Reforms in Local Self-Government in Armenia. Yerevan. 2008.- p.5-10
125. UN Global Compact Project, UNDP Armenia - Yerevan. – 2012. -20p

Ինտերնետային կաքեր

126. <http://sustainabledevelopment.un.org/content/documents/armenia.pdf>
127. <http://www.minfin.am/>
128. <http://www.armstat.am/am/>
129. <http://mineconomy.am/>
130. <http://www.mnp.am/>
131. <http://www.epsu.org>
132. <http://www.epa.gov>
133. <http://www.armenia-environment.org/waste-management/>
134. <http://www.unece.org/env/epr/countriesreviwd.htm>
135. <http://www.renewableenergyarmenia.am>
136. <http://www.ilsr.org/recycling/recyclingmeansbusiness.html>
137. <http://www.epa.gov/waste/conserves/rrr/rmd/rei-rw/index.htm>
138. <http://www.eur-lex.europa.eu/LexUriSer>
139. <http://sustainabledevelopment.un.org/content/documents/armenia.pdf>
140. <http://mineconomy.am/uploads/20131307134035894.pdf>,
141. <http://www.ilsr.org/recycling/recyclingmeansbusiness.html>
142. <http://www.epa.gov/waste/conserves/rrr/rmd/rei-rw/index.htm>